ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(76-րդ տարի) **Թիվ-4** (1662) Ապրիլ 2022

Բովանդակություն



«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Հաղթահարել ծնկած վիճակը, լինել սեփական իրավունքների պահանջատեր (էջ 1-2)

2- Քաղաքական

Աւօ Գաթրճեան
Համաթուրքականութեան-համաթուրանակա-նութեան գաղափարախօսութիւնը սերմանող թուրք ղեկավարներու և գործիչներու վարքագիծը (մաս 1) (էջ 3-9)

Նարե Գևորգյան
Քեմալիզմից մինչև էրդողանիզմ (էջ 10-12)

Տիգրան Չանդոյան
Այլատյացությունն ու ցեղասպանությունը որպես թուրքական քաղաքական համակարգի հիմնաքարեր (էջ 13-14)

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայկական հարցն ու Հայաստանի անվտանգության համակարգը (էջ 15-17)

Գագիկ Եկմալյան Ս.
ՀՀ արտաքին քաղաքականության որոշ խնդիրները նախապատերազմական շրջանում (էջ 18-21)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
Արցախը ԱՄՆ ուշադրության կենտրոնում (էջ 22-28)

3- Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Հայոց ցեղասպանության ճանաչումը և Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը(էջ 29-31)

Սիրանույշ Վարդանյան
Բաքվի ցեղասպանական գործողությունները Նարդարան ավանում (էջ 32-34)

4- Աշխարհաքաղաքական

Վարդան Հակոբյան
Ուկրաինական դանակը հասավ ռուսական ոսկորին (էջ 35-37)

Պյոտր Մակեդոնցև
Ինչո՞ւ են Թուրքիան ու Ադրբեջանն այդքան անկեղծորեն կարեկցում Ուկրաինային (էջ 38-40)

5- Գաղափարական

Անի Մելքոնյան
Հայ ազգային գաղափարախոսությունը (էջ 41-43)

6- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Կրնա՞նք մենք զմեզ կառավարել (էջ 44)

Հաղթահարել ծնկած վիճակը, լինել սեփական իրավունքների պահանջատեր

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած, այսինքն՝ ՄԱԿ-ի կողմից ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ իրականացվող ծանրագույն հանցագործություն ճանաչելու ողջ ժամանակահատվածում, հայության պայքարի առանցքում է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման պահանջը: Հայ դատի պայքարի նպատակներից մեկն է թուրքական իշխանություններին պարտադրելը, որպեսզի պետական քաղաքականությանը մաս կազմող ցեղասպանական գործելակերպը ճանաչվի որպես ոճրագործություն, պետությունը մեկընդմիշտ հրաժարվի դրանից թե՛ որպես քաղաքական խնդիրներ լուծելու միջոց և թե՛ որպես գաղափարախոսություն: Այնպես, ինչպես Գերմանիայի կողմից հրեական ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը ֆաշիզմի գաղափարախոսությունը արմատախիլ անելու հիմք դարձան այդ երկրի քաղաքական կյանքից և հանրային գիտակցությունից՝ քրեական պատիժներ սահմանվեցին այդպիսի գործունեության, այդ գաղափարների որդեգրման, քարոզչության և տարածման համար: Այլ խոսքով՝ այդ երկիրը զատվեց նացիոնալ-սոցիալիզմի ժառանգությունից և որդեգրեց այլ ռասաների ու պետությունների հետ հավասարության, հարգանքի ու հանդուրժողության հիման վրա քաղաքակիրթ փոխհարաբերությունների կառուցման սկզբունքը:

Աշխարհի որևէ պետություն, այդ թվում և ֆաշիստական տիրապետության շրջանի Գերմանիան, երբեք չեն եղել այնքան բարբարոս ու մարդատյաց, որքան եղել ու մնում են քաղցկեղի պես մարդկության մարմնի վրա գոյատևող թուրքական ռազմաֆեոդալական ռեժիմները՝ արյունարբու սուլթաններից մինչև փողկապ կրող վարչապետներն և նախագահները: Ըստ էության, թուրքական ցեղասպանական քաղաքականությունը եղել է Թուրքիայի իրարահաջորդ իշխանությունների ավանդական գործելակերպը՝ այս ճանապարհով «լուծելու համար» նվաճված և նվաճվելիք տարածքներում ապրող ժողովուրդների հիմնահարցը, ամրապնդելու նպատակով պանթուրքական և պանթուրանական ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ենթահողը:

Առկա բազմաթիվ փաստաթղթերն ու փաստերը վկայում են, որ արյունահեղությունների դարավոր ճանապարհ անցած թուրքերը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին տեսական հիմքերի վրա դրեցին իրենց նվաճողական տեսլականները և այդ կենսական նպատակի իրագործման ճանապարհին գտնվող ժողովուրդների բնաջնջման հիմնավորումը: Ասվածի ակնառու ապացույցն է հայկական պատվիրակությանը Վեհիբ փաշայի հայտնած միտքը՝ 1918 թվականի մայիսի վերջին և հունիսի սկզբին՝ Բաթումում տեղի ունեցած հաշտության բանակցությունների ժամանակ. «Դուք կը տեսնէք, որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան

արևմուտքէն արևելք: Մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաև Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արևելք, հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու մեր լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի, մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան և Ատրպէյճան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք և մեզի ճամբայ տաք: Ահա թէ ո՛ւր է մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու և պաշտպանուելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ, միւսը կ՚երթայ Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Կուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն՝ Նոր-Պայազիտի (այժմ՝ Կամօ) և Էջմիածնի շուրջը»:

Նախ նախկին Բյուզանդական պետության տարածքը և ապա իր «Երազանքի ճանապարհը» ամբողջովին թուրքացնելու ծրագիրը գաղտնիք չէ, որ գործնական կիառություն ստացավ 19-րդ դարի վերջին տեղի ունեցած համիդյան կոտորածներով և ամբողջացավ Առաջին համաշխարհային պատերազմի թոհուբոհի պայմաններում: Եթե կայսրությանը մաս կազմող, սակայն բուն Թուրքիայի տարածքից դուրս գտնվող երկրներն ու ժողովուրդները «գլուխներն ազատեցին» կրկնվող դաժան ջարդերի գնով, ապա թուրքական մետրոպոլիան ամբողջովին թուրքացնելու համար պետք է բնաջնջվեին նրա բնիկները և առաջին հերթին, իհարկե, առավել լուսավորյալ ու զարգացած, լուրջ դրամագլխի տիրապետող, իր բնօրրանի վրա հիմնականում կոմպակտ բնակվող և, ազատագրության իղձեր փայփայող հայերը: 1915 թվականի ապրիլից

թափ առած տեղահանությունները, հալածանքներն ու ջարդերը ուղղված էին ոչ թե միայն հայության կամ նրա ինչ որ հատվածների, այլ, առհասարակ, ամեն հայկականի դեմ: Հայկականության հետքերն ամբողջովին ոչնչացնելու համար պետք է վերանային նաև նրա մշակութային ու հոգևոր կառույցները, գերեզմանները և... Հիշողությունը: Արևմտահայության ոչնչացումն այս ծրագրի առաջին փուլն էր՝ երիտթուրքերին դատապարտած Մուստաֆա Քեմալը շտապում էր բնաջնջելու նաև արևելահայությանը, և միայն քաղաքական իրավիճակների փոփոխությունը կանխեց մեծ ոճիրի կրկնությունը: Հաջորդող գրեթե ողջ հարյուրամյակի ընթացքում իրարահաջորդ կառավարությունները շարունակեցին Թուրքիայի լիակատար թրքացման ծրագիրը՝ մերժելով ճանաչել այլազգի ու այլակրոն ժողովուրդների լեզուն, մշակույթը, ինքնությունը բնորոշող այլ հատկանիշների և հենց նրանց գոյությունը: Ընդ որում, Լոզանի պայմանագրով ստանձնելով ազգային փոքրամասնությունների իրավունքներն ապահովող որոշակի պարտավորություններ թուրքերը միշտ թքել են և՛ միջազգային իրավունքի, և՛ իրենց միջազգային պարտավորությունների վրա: Եվ ի դեպ, ցայսօր կարողանում են հաջողությամբ մարսել իրենց բոլոր ապօրինություններն ու հանցանքները:

Միշտ թիկունքում զգալով ավագ եղբոր ներկայությունը՝ այս վայրենի ու արյունարբու ճանապարհով է քայլել նաև Լենինի ու Քեմալի եղբայրության ծնունդ Ադրբեջանը: Հիշենք 1905, 1918 թվականների ջարդերը, Նախիջևանի ու Դաշտային Ղարաբաղի հայաթափումն ու հայկական հետքերի ոչնչացումն ամենուր: 1988 թվականին սեփական ազատության համար սկիզբ առած արցախահայության խաղաղ ցույցերին հաջորդեցին սումգայիթյան ջարդերը՝ թուրք էմիսարների անտեսանելի ներկայությամբ և թուրքական ցեղասպանական ձեռագրով: Հարյուր տարի խորհրդային պետական համակարգում քաղաքակրթվելուց հետո էլ ադրբեջանցի նորահայտ ժողովուրդն ամեն օր փաստում է, թե որքան հեռու է քաղաքակրթությունից, այնքան մոտ է թուրքական բարբարոսությանը: Քնած մարդուն սպանելը և սպանողին ազգային հերոս հռչակելը, հակառակորդի զինվորի գլուխը կտրելը և այն բնակավայրերով ման տալը, երեխաներին, ծերերին և հիվանդներին խոշտանգելով սպանելը, և նման այլ հանցագործությունները խուլ միջնադարի պատմություններ չեն, այլ վարքականոն՝ ժամանակակից ադրբեջանցիների համար, որոնք խրախուսվում են բարձրագույն իշխանության կողմից: Թուրք-ադրբեջանական եղբայրությանը բնորոշ վարքագծի դրսևորում էր 2020 թվականի լայնածավալ ագրեսիան Արցախի դեմ: Հայրենի տարածքներից բնակչության դուրս մղումը, արգելված զինատեսակներով իրականացված պատերազմական հանցագործություններն ու հոգևոր-մշակութային կառույցների ավերումը, դրանց պատկանելության վկայությունների ոչնչացումն ու աղավաղումն այլ բան չեն, քան միջազգայնորեն սահմանված ցեղասպանական գործողություններ: Ժամանակակից Թուրքիան իր գիշատչական հավակնություններով ներկայումս պակաս ագրեսիվ չէ, քան երբևէ: Նրա զինված ուժերը գտնվում են Իրաքում, Սիրիայում, Կիպրոսում, Լիբիայում, Քաթարում, Աֆղանստանում, Նախիջևանում և այլ երկրներում ու վայրերում: Օկուպացված վայրերում թուրքերն իրականացնում են ռազմական գործողություններ, թալանում և փորձում են յուրացնել այդ տարածքները: Թուրքիան նեոօսմանական ցնորքներ է փայփայում և փորձում է քիթը խոթել ամենուր, որտեղ խնդիրներ կան՝ Ղազախստան, Ուկրաինա, Լիբանան և այլն: Թուրքիայի և թուրք-ադրբեջանական դաշինքի ճիրաններում այսօր կրկին ճակատագրական օրեր է ապրում Հայաստանը: Նրանց հավակնությունների բավարարման դեպքում ոչ միայն վերջնականապես կկորցնենք Արցախը, այլև ինքնիշխանության հնարավորությունը հավետ կկորցնի Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի ազգադավ իշխանությունները, որոնց համար, հատկապես պատերազմից հետո, իշխանության պահպանումը դարձել է ինքնանպատակ, փորձում են զիջումների ճանապարհով հասնել խաղաղության: Կրկնվում է այն, ինչը տեղի ունեցավ 1921 թվականին, երբ թշնամին թքում էր և՛ Հայաստանի բոլշևիկ իշխանությունների, և՛ նրանց կողմից դրոշ դարձված խաղաղության գաղափարի վրա՝ ազգային արժանապատվությունից զուրկ իշխանություններին պարտադրելով նորանոր զիջումներ:

Անկախության վերականգնումից և Արցախի ազատագրումից հետո երկիրը պատերազմի ու խաղաղության նույն կեղծ ընտրանքի առջև կանգնեցրեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Բոլոր պարագաներում թուրք-ադրբեջանական հայակուլ ծրագրերը հաջողվել է կասեցնել՝ հակադրելով ուժը և պարտադրելով խաղաղությունը: Այդպես եղավ նաև այսօրվա կապիտուլյանտ իշխանությանը նախորդող 20 տարիների ընթացքում: Դժվար է ասել, թե իշխանափոխության ձգձգման պարագայում ազգադավ իշխանությունը ինչպիսի անկումների կհասցնի երկիրը:

Խաղաղության անվան տակ թուրքական պայմաններով հաշտության դավադիր ծրագիրը հերթական անգամ փաստեց իր սնանկությունը: Փաստվեց ազգային ինքնության պահպանման և գոյատևման ավանդական փիլիսոփայությունից նահանջի կործանարարությունը: Մյուս կողմից, իշխանության այս պարտվողական հոգեվիճակն ավելի է մեծացնում նոր պատերազմով կարճ ժամանակում շոշափելի նոր հաջողությունների հասնելու թշնամիների գայթակղությունը: Հայաստանը պետք է հաղթահարի մեղավորի ու խեղճի ծնկած վիճակը ու կրկին դառնա իր իրավունքների պահանջատերը: Այսպես մենք հաստատել ենք մեր տեղը աշխարհաքաղաքական դաժան մրցակցության բեմում և միայն այսպես կարող ենք խուսափել նոր ցեղասպանություններից և ազգային-պետական մասշտաբի ողբերգությունից:

Համաթուրքականութեան-համաթուրանականութեան գաղափարախօսութիւնը սերմանող թուրք ղեկավարներու և գործիչներու վարքագիծը (մաս 1)

Աւօ Գաթրճեան
Հրապակագիր, բանասէր, Հալէպի Հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախոս

Մուտք

Սոյն աշխատութեան հիմնական կիզակէտը դարձուցած ենք համաթուրքականութեան-համաթուրանականութեան հիմնադիրներու, կարգ մը տեսաբաններու և մտաւորականներու ցեղապաշտական և ազգայնամոլական այն տեսակէտները, կարծիքները, գրական ստեղծագործութիւնները, մտածումներն ու յայտարարութիւնները, որոնք ռազմավարականօրէն ուղղուած են հայ ազգին իր պատմական հայրենիքէն բնաջնջելու քաղաքականութեանը:

Թուրքիա-Ատրպէյճանի ղեկավարներն ու գործիչները ղեկավարուելով համաթուրքականութեան-համաթուրանականութեան ռազմատենչ գաղափարախօսութեամբ, բոլորն ալ բնականաբար թշնամական ոգիով մղուած հանդէս եկած են բացայայտ հայատեաց և ազգայնամոլական շեշտադրուած ոճի արտացոլումով:

Նիւթի հրատապութիւնը և ուշագրաւ ըլլալը մեզի մղած է, որ տարբեր տեսանկիւններէ վերլուծենք:

Աշխատութիւնը լայն պատկերացում կու տայ համաթուրքականութեան-համաթուրանականութեան մասին քարոզող ծայրայեղ ազգայնամոլ անձերու և այդ գաղափարին ուղղութեան մասին: Ինչպէս նաև մեծապէս կ'օգնէ հետամուտ ըլլալու սոյն վարդապետութեան փոլերուն, և լոյս կը սփռէ անոր շարժառիթներու, կազմակերպման և նպատակներու իրականացման վրայ:

Նիւթը խիստ այժմէական է, եթէ նկատի ունենանք, որ Թուրքիոյ և Ատրպէյճանի բռնատիրական վարչակարգերը կը շարունակեն իրենց ցեղասպանական արշաւները հայութեան դէմ, ինչպէս նաև բռնագրաւումի, սրբապղծումներու և բռնագրաւուած հայկական հողատարածքներու վրայ գտնուող մշակութային և կրօնական կոթողներէ հայկականութեան հետքերու ջնջման գործունէութիւնը:

Այս աշխատութեան արխիւահաւաքը բնականաբար կը կարօտի ուսումնասիրական և հաւաքագրական մեծ աշխատանքի: Հետևաբար, տուեալ նիւթերը լուսաբանելի տակ առնելու և պատմագրելու համար կարողացած ենք աշխատասիրել բազմաբնոյթ արխիւներ, որ կ'ընդգրկեն ընդարձակ նիւթեր, զորս կարելի է դասաւորել զանազան բաժիններու, ինչպէս՝ ժողովներու ատենագրութիւններ, հեռագիրներ, զեկուցագիրներ, նամակներ, յուշագրութիւններ, փաստաթուղթեր, նոթագրութիւններ, մամուլ և լրատուական տեսանիւթեր: Հոն ցայտունօրէն դրսևորուած է համաթուրքականութեան-համաթուրանական գաղափարախօսութեան վարքագիծը, ինչպէս նաև



այլամերժութիւնն ու ատելութիւնը ոչ թուրք ժողովուրդներու ու մանաւանդ հայ ազգի հանդէպ թշնամանք և քինախնդրութիւն հրահրած են:

Աշխատութեան մէջ քննարկուած հարցերու լուծման հետ կապուած տեսակէտները ըստ հնարաւորութեան ձգտած ենք հիմնաւորել փաստերով:

Համաթուրքականութեան-համաթուրանականութեան վարդապետութեան առաջնորդներու հոյլէն այստեղ կը յիշատակենք քանի մը հատը, որոնք հրապարագիրներ, բանաստեղծներ, մտաւորականներ, տեսաբաններ, եւրոպական կրթութիւն ստացած կրթական առաջնորդներ ու բանասէրներ են:

- Եուսուֆ Աքչուրա: Թաթար (հասկնալ՝ թուրքազերի) քաղաքական գործիչ և հրապարակագիր: Նախնական կրթութիւնը ստացած է Պոլիս, իսկ բարձրագոյնը՝ Փարիզ: 1908-ին կը մեկնի Պոլիս իբր թուրքիզմի կեդրոնական դէմք: «Թրքական Կաճառ»-ի հիմնադիրներէն: 1911-ին Իթթիհատի Կեդրոնականի անդամ և «Թուրք Եուրտու»-ի հիմնադիր: Քաղաքական համաթուրանականութեան հիմնադիր:

- Զիյա Կէօքալփ: Օսմաներէն՝ Տիյա: Թրքերէն՝ Ziya Gökalp, բուն անունը՝ Մեհմեթ Զիյա, ծնած է 23 մարտ 1876 թուականին, Տիգրանակերտ (Ամիդ, Գարա-Ամիդ), ծագումով զազա (քիւրտ), բայց՝ բոլորովին թրքացած: Բանաստեղծ, գրող, ընկերաբան և քաղաքական գործիչ, համաթուրքականութեան և համաթուրանականութեան հիմնադիր-տեսաբան ու գաղափարախօս: Երիտթուրքերու կողմէ երկիրը սահմանադրական միապետութեան վերածելէ ետք ընդունած է Կէօք-ալփ («Երկնքի հերոս») անունը:

- Էօմէր Նաճի: Զիյա Կէօքալփի առաջին գործակիցներէն և «Կէնճ Գալէմլեր»-ի հիմնադիրներէն:

- Թուրկութ Ալփ: Հրապարակագիր, «Թուրք Եուրտու»-ի հիմնադիրներէն և աշխատակիցներէն:

- Թէքին Ալփ: Հրապարագիր, տեսաբան. «Թուր-

քիզմի և փանթուրքիզմի»-ի հեղինակ:

- Ճէլալ Սահիպ: Ձիյա Կէօքալփի գործակիցներէն և «Կէնճ Գալէմլէր»-ի գլխաւոր հիմնադիրը:

- Հալիտէ Էտիպ Ատըվար: Թուրքիստ գրագիտուհի, հեղինակ «Ենի Թուրան» (1913), «Թուրք Կնոջ Մը Ճակատագիրը» վէպին:

- Խալիտ Ձիյա: Հրապարակագիր, թուրքիզմի կրթական առաջնորդներէն:

- Սուլթանով: Ատրպէյճանի, Մուսաւաթական համաթուրքականութեան իրականացումին ամէնէն գործօն դէմքերէն:

- Վէլէտ Թահիր: Բանասէր, թուրքիզմի ցեղային քարոզիչ:

- Մեհմետ Էմին Ռեսուլզատէ: Ատրպէյճանցի, Թեհրանի «Իրան Ազատ» թերթի խմբագիր:

- Ահմետ Ճաֆարօղլու: Կ. Պոլսոյ համալսարանի փրոֆեսէօր, թրքագէտ, Ուքրանական անկախ համալսարանի պատուաւոր դոկտոր, Հունգարիայի գիտութիւններու ակադեմիայի, Լեհաստանի գիտութիւններու ակադեմիայի, Ուքրանական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

- Մամեդզատէ Միրզա Պալա: Հրապարակախօս, թարգմանիչ, թատերագիր, հասարակական գործիչ: Մուսաւաթ կուսակցութեան երկրորդ նախագահ:

- Սահիտ Շամիլ: Ան Կովկասի յայտնի առաջնորդներէն մէկու՝ Շէյխ Շամիլի կրտսեր որդիի՝ Մուհամմետ Քամիլ փաշայի որդին է: Քաղաքական և հասարակական գործիչ, գրող: Կրթութիւնը աւարտած է Կ.Պոլսոյ Կալաթասարայի միջնակարգ դպրոցին մէջ: Մեկնած է Տաղստան և կռուած կարմիր բանակին դէմ: Թրքերէնի կողքին տիրապետած է արաբերէնի, ֆրանսերէնի և ռուսերէնի:

Եուսուֆ Աքչուրան, Ձիյա Կէօքալփը, Հալիտէ Էտիպը, Թէքին Ալփը և միւսները կ'երազէին բոլոր թուրքերուն միաւորումը մէկ միապետի գլխաւորութեամբ, որ կրնար ետ բերել Աթիլլայի, Ճէնկիզխանի և Լենկթիմուրի ժամանակները:

Վերոնշեալ երազներն իրականացնելու համար, այդ անուններուն հետևած են ուրիշներ, որոնք մինչև օրս աւելի կազմակերպուած և թշնամական ու ատելութեամբ կը շարունակեն իրենց նախնիներու երազը իրականացնել: Այդ անուններէն կ'արժէ նշել՝ Նիհալ Աթսըզ, Ալփարսլան Թիւրքէշ, Հայտար Ալիև, Տողու Փերինչեք, Ապուլֆազ Էլչիպէյ, Ռեճէփ Թայիփ Էրտողան, Մուհսին Եազըճըօղլու, Իլհամ Ալիև, Մերալ Աքշեներ և ուրիշներ:

Ներկայ ուսումնասիրութեան մէջ ներկայացուցած ենք այն վտանգներէն մէկը, որ գոյութիւն ունի մեր տարածաշրջանին և կը սպառնայ ոչ միայն Հայաստանի և հայութեան ազգային անվտանգութեան, այլ նաև տարածաշրջանի երկիրներուն՝ Սուրիոյ, Իրանի և Իրաքի: Բոլորս արդէն ականատես ենք թէ ինչ տեղի կ'ունենայ Սուրիոյ և Իրաքի մէջ կամ այլ տեղեր:

Համաթուրքականութիւն-համաթուրանականութիւն սերմանող թուրք գաղափարախօսներու խորհուրդներու էութեան բնութագրումը



Եուսուֆ Աքչուրայի «Երեք քաղաքական համակարգ» աշխատութիւնը

Համաթուրքականութիւնը (փանթուրքիզմ: Թրքերէն՝ Türkçülük), ծայրահեղ ազգայնական գաղափարախօսութիւն է, որուն հիմքը՝ թրքալեզու ժողովուրդներու մէկ ազգ ըլլալու և թուրքերու գլխաւորութեամբ անոնց մէկ պետութեան մէջ միաւորելու գաղափարն է:

Հետազօտական գրականութեան մէջ «փանթիւրքիզմ» բառեզրը կ'օգտագործուի թրքալեզու ժողովուրդներու քաղաքական, մշակութային և էթնիկ միասնութեան գաղափարները նկարագրելու համար: Թուրանականութիւնը համաթուրքականութեան սերտօրէն կապուած շարժում է, բայց աւելի լայն հասկացութիւն է, քանի որ թուրքականութիւնը (թուրքիզմ) կը վերաբերի միայն թրքական ժողովուրդներուն: Թուրանիզմը ցեղապաշտ, ազգայնամոլ, հետադիմական, ֆաշիստական շարժում է:

Համաթուրքականութիւնը կազմաւորուած է 19-րդ դարու երկրորդ կէսին: Օսմանեան կայսրութեան թուլացման զուգընթաց՝ 19-րդ դարու մէջ, սկսաւ ձևաւորուիլ համաթուրանական գաղափարախօսութիւնը, որ ուղղուած էր թրքալեզու ժողովուրդներու համախմբումին մէկ պետութեան՝ Մեծ Թուրանի ներքև:

Այս վարդապետութիւնը, իբրև մշակութային և դիւանագիտական հոսանք, հիմնականօրէն ի յայտ եկաւ 1880-ական թուականներուն, Ատրպէյճանի թրքական մտաւորականներու շրջանակին մէջ (այն ժամանակ՝ Ռուսական կայսրութեան մաս մը) և Օսմանեան կայսրութեան մէջ (ժամանակակից Թուրքիա): Ան կը նախատեսէր միացնել Օսմանեան կայսրութիւնը ու Ռուսական կայսրութեան, Իրանի, Չինաստանի և Աֆղանստանի թրքախօս հատուածները:

Համաթուրքականութիւնը գաղափարական, քաղաքական և մշակութային շարժում է, որ ուղղուած է թրքական բոլոր ժողովուրդներու միաւորումին, համարեայ մինչև թրքական պետութիւններու դաշնակցութեան ստեղծելուն՝ հիմնուած ազգային ինքնութեան վրայ:

Համաթուրքականութիւն-համաթուրանականութիւն շարժումը սկսաւ Ղրիմի թուրքերու շրջանակին

մէջ, որոնք սկիզբը կը ձգտէին միանալ Օսմանեան կայսրութեան թուրքերու հետ:

Այնուամէնայնիւ, թրքական գաղափարախօսութեամբ զբաղուող յետազօտողներն ու քաղաքական գործիչները այս բառեզրերը օգտագործած են որպէս հոմանիշներ շատ աղբիւրներու և գրականութեան աշխատութիւններու մէջ: Թէև թրքական ժողովուրդներէն շատերը կը կիսեն պատմական, մշակութային և լեզուական արմատներ, համաթուրքականութեան քաղաքական շարժումի վերելքը 19-րդ և 20-րդ դարերու երևոյթ է:

Համաթուրքականութեան-համաթուրանականութեան յայտնի գաղափարախօսներէն էին Ահմետ Աղաևը, Եուսուֆ Աքչուրան, Զիյա Կէօքալփը, Ֆուատ Քոփրիլուն և ուրիշներ:

Համաթուրքականութեան հիմնադիր և խոշորագոյն գաղափարախօս Եուսուֆ Աքչուրա, 1904-ին Գահիրէի «Թուրք» թերթին 24-րդ, 26-րդ և 27-րդ թիւերու մէջ (14 Ապրիլ, 28 ապրիլ, 5 մայիսի 1904 թ.) կը հրապարակէ «Երեք քաղաքական համակարգ» («Üç tarz-i siyaset») խորագրով ծրագրային ծաւալուն ազդեցիկ յօդուածը[1], որ համաթուրքական ազգայնամոլութեան առաջին դրսևորումն էր: Այս յօդուածը հետագային գիրքի ձևաչափով լոյս տեսաւ:

Աքչուրա, այս աշխատութեան մէջ կը պաշտպանէ թուրքիզմը, օսմանիզմի և իսլամիզմի դէմ: Ան կը պնդէր, որ օսմանցիներու կողմէ հովանաւորուող գէրխորհրդարանական միութիւնը անիրատեսական էր: Համաիսլամական տեսակը առաւելութիւններ ունէր, բայց մահմետական բնակչութիւնը կը գտնուէր գաղութային տիրապետութեան տակ, որ դէմ էր միաւորումի: Ան եզրակացուց, որ էթնիկ թուրք ժողովուրդը կը պահանջէ ազգային ինքնութեան զարգացում, համաթուրքական կայսրութիւնը կը հեռանայ Պալքաններէն և Արևելեան Եւրոպայէն դէպի Կեդրոնական Ասիա: «Երեք քաղաքական համակարգ» գիրքի առաջին հրատարակութիւնը բացասական արձագանգ ունեցաւ, բայց ան աւելի ազդեցիկ դարձաւ 1911 թուականին Կ.Պոլսոյ մէջ իր երրորդ հրատարակութեամբ: Օսմանեան կայսրութիւնը զիջած էր իր ափրիկեան տարածքը Իտալիոյ և շուտով կը կորսնցնէր Պալքանները, իսկ համաթուրքական ազգայնականութիւնը դարձաւ առաւել իրագործելի (և հանրաճանաչ) քաղաքական ռազմավարութիւն:

«Թուրք եուրտու» («Türk Yurdu», Թրքական հայրենիք) ամսագիրը հիմնադրուած է 1911-ին Աքչուրայի կողմէ: Ամսագրի անունը կը կրէ համանուն Ընկերութեան անունը: Այս Ընկերութիւն կը գործէր թրքական գրականութեան ճամբով: Այս, ժամանակի ամենակարևոր թրքական հրատարակութիւնն էր, որուն մէջ Ռուսաստան ապրող թուրքերու այլ աքսորեալներու հետ միասին՝ Աքչուրան փորձեց գիտակցութիւն ներշնչել աշխարհի բոլոր թրքական ժողովուրդներու մշակութային միասնութեան մասին: Այս ամսագրի աշխատակիցները Աքչուրայի գլխաւորութեամբ կ'աշխատէին մաքրել թրքերէն լեզուն արաբական բառերէ, զայն զուտ մոնկոլական լեզուի մը վերածելու համար: Թուրք Եուրտուի անդամներուն պարտականութիւնն էր ընդդիմանալ բոլոր այն գրողներուն, անոնք ըլլային թուրք կամ ոչ թուրք, որոնք չէին բաժներ իրենց տեսակէտները, չէին հրատարակեր ազգայնական գիրքեր, խանդավառ հիմներ և չէին ուսուցաներ հին թուրանեան պատմութիւնը յայտարարելով, թէ թուրքերը, ազգերու մէջ ընտրեալ էին և ճակատագրով կոչուած իշխելու միւս ազգերուն վրայ:

Աքչուրայի այս աշխատութիւնը իր խորութեամբ ու բազմակողմանիօրէն շարադրելու առումով համաթրքութեան բոլոր հիմնադրոյթները բնականաբար ամբողջական պիտի չըլլար: Այդ խնդիրը լուծած է համաթուրքութեան խոշոր տեսաբան Զիյա Կէօքալփը իր «Թուրքիզմի հիմունքները» աշխատութեան մէջ:

Զիյա Կէօքալփ Եուսուֆ Աքչուրայի և ուրիշներու հետ թուրանականութեան շարժումին առաջին ջատագովներէն և քարոզիչներէն եղած է. շարժումը անոնց ստեղծած մտաւորական շարժումով սկսած է տարածուիլ թուրանական ժողովուրդներու ցեղային գիտակցութիւն արթնցող գրականութիւն և քարոզչութիւն «Թուրք եուրտու» (թուրք հայրենիք) և «Կենչ քալեմլեր»-ի (երիտասարդ գրիչներ) միջոցով:

Կարևորութեամբ պէտք է ընդգծել, որ Զիյա Կէօքալփ ծագումով քիւրտ է, դաւաճանեց իր ազգին և եղաւ համաթրքութեան հիմնադիրներէն մէկը: Թուրքէ աւելի թրքացած թրքութեան հիմնադիրն ու համաթուրանականութեան տեսաբանը իր աշխատանքներէն մէկուն մէջ կը գրէ. «Հեռանկարի մէջ՝ համաթուրքութեան նպատակը Թուրանի ստեղծումն է»: Թուրքիզմի իսկական սպառնալից բնոյթը կը բացայայտէ Զիյա Կէօքալփի կարգախօսը, «պիտիւն թուրքլէր պիր օրտու» (բոլոր թուրքերը մէկ բանակ են):

Զիյա Կէօքալփը սահմանեց համաթուրքութիւնը, որպէս մշակութային, ակադեմական, փիլիսոփայական և քաղաքական հայեցակարգ, որ կը պաշտպանէ թուրք ժողովուրդներու միասնութիւնը:

Այդպէս կը մտածէին համաթուրանականութեան գաղափարախօս՝ Զիյա Կէօքալփին հետևող համաթուրանական գաղափարախօսները, որոնք կը գործէին ամէն կողմէ միացած նոյն բաղձանքով և նոյն թելադրութիւններով: Նոյնիսկ անոնց յաջորդները քալեցին այդ ուղիէն և չթերացան իրագործելու իրենց առաջնորդին մտայղացումը:

Ճէլալ Նուրի պէյի հրապարակած «Թարիխը Թէտէնիաթը Օսմանիէ» («Օսմանեան անկման պատմութիւնը») խորագիր կրող օսմաներէն գիրքը, զոր հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, իրաւաբան, Մեծ եղեռնի զոհ, ՀՅԴ կուսակցութեան անդամ Յարութիւն Շահրիկեան (Ատոմ), Նիտրա (1860-1915) թարգմանած է՝ «Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը» խորագրով:

«Օսմանեան Կայսրութեան անկման պատմութիւնը» գիրքին մէջ Ճէլալ Նուրին կը գրէ. «Աշխարհի մէջ ոչ մէկ ազգ չկայ, ոչ մէկ ազգ չի գտնուիր, որ ունենայ այնպիսի վերի խաւեր, որոնք թուրքերու չափ ուրիշ ազգերու և

ցեղերու հետ իրենց արիւնն ու ցեղը միացուցած ըլլան… Օսմանեան թուրքերու կազմած ազգը, ուրիշներու հետ չհամեմատուած աստիճան խառնուրդ ըլլալով, անոր անդամները ապականութեան յարած են, խաթարած են իրենց տոկունութիւնն ու ինքնութիւնը՝ հետևաբար առաջ եկած է այժմեայ վիճակը… Թուրքերը ձուլելու շատ աշխատանք թափեցին… Թուրքերը իրենց հաւաքած մանուկները մահմետականացուցին, բոլոր եկիչերիները ձուլուած, թրքացած քրիստոնեաներ էին… Լեզուի մէջ ձուլում կը տեսնենք… ինչո՞ւ միայն լեզուական ձուլում եղած է ու կրօնականը, ազգայինը չէ եղած (այսինքն՝ ազգայինի հիմնական ցուցիչը կրօնականն էր – Ա.Գ.): Այս պարագաները քննել դժբախտաբար մեր կարողութեան սահմանի մէջ չէ: Անատոլուի[2] նահանգներուն մէջ բնակուող, այն ևս ոչ թէ ցիր ու ցան, այլ խմբովին ապրող յոյները իրենց լեզուն մոռցած, բոլորն ալ թուրքերէն կը խօսին ու կ'աղօթեն… Նոյնպէս հայերու մէկ կարևոր մասը միայն թուրքերէն կը խօսի, հայ լեզուն միայն նոր կ'ընդհանրանայ. «հինէն թրքերէնը հայերու ընդհանուր լեզուն էր»… Ընդհատումի շրջան մը չանցուած կամ նոր ազգերու և ժողովուրդներու հետ իրենց արիւնը չխառնող հին ազգերը դժուարութեամբ կը վերանորոգուին… Արդ, ամբողջ Արևելքը մեծ յոգնութեան մը, թմրութեան մը մէջ կը գտնուի: Այս ազգերուն մէջ եթէ կայ չյոգնած և մաքուր արիւնով ազգերու հետ միանալով իր արիւնը մաքրագործուած ազգ մը, ան ալ թուրք ազգն է… Ճաբոնական պետութիւնն ու ազգը թէև ամբողջովին ընդունեց եւրոպական քաղաքակրթութիւնը, բայց իր անհատականութեան, ցեղին և արիւնին մէջ պատռուածքներ, խանգարումներ չէր ունեցեր, այդ պատճառով ալ Երկնային արեգակի պետութեան մարդիկը յաջողեցան իրենց նախաձեռնութեան մէջ»[3]:

Արդարև, Ճէլալ Նուրի պէյ լայն մտքերով, հռոմէական և Բիւզանդական կայսրութեանց ու ֆրանսական Մեծ Յեղափոխութեան օրինակներով՝ իր քննադատութիւնները հիմնաւորելու աշխատելով հանդերձ, չկրնալով Ժէօն Թրքութեան ազգայնամոլական նախապաշարումներէ ազատուիլ, ինկած է հակասութեանց մէջ, և կարծած է թէ վերածնութիւնը կարելի է գլուխ բերել զինուորական քաղաքակրթութեամբ և ձուլումի քաղաքականութեամբ:

Համաթուրքականութեան-համաթուրանականութեան վարդապետութիւնը քարոզող թուրք մտաւորականութիւնն ու ղեկավարութիւնը այսպիսով կրցաւ ներարկել իրենց ցեղապաշտ, ազգայնամոլ ու յատկապէս հայատեաց դրսևորումները թրքացեղ ժողովուրդներու վրայ: Այդ իսկ պատճառով ալ թուրքերը միշտ և ամէն տեղ, ուր առիթ գտած են, ամենայն հարազատութեամբ յայտարարած են իրենց ցեղապաշտական քաղաքականութիւնը իրականացնելու համար «Մեծն Թուրան»-ի (պետութիւն, որ պիտի երկարի Պոսֆորէն մինչև Ալթայ) ծրագիրը: Ինչպէս անցեալին զիրենք ծնած ցեղասպան նախահայրերը արդէն իրագործած էին առաջին հիմնական նպատակը՝ հայասպանութիւնը: Ի զուր տեղ չէ, որ Թուրքիոյ Իթթիհատի հայաջինջ ծրագիրը

«Մեծ երազ» թուրան աշխարհը

տառացիօրէն գործադրող, ներքին գործոց նախարարը և ոճրագործը՝ Թալեաթ, յաջողած էր պարծենալ. «Ես Հայկական հարցը լուծելու համար երեք ամսուան մէջ ըրի աւելին, քան Համիտ՝ 30 տարուայ ընթացքին...»[4]: Ուստի, կը մնար շարունակել պայքարը և այդ, յանուն համաթուրանականութեան:

Ստորև տրուած քանի մը թուրք քաղաքական գործիչներու արտայայտութիւնները շատ յստակ ցոյց կու տան, որ կան համաթրքութեան ներկայացման երկու տարբերակներ, որոնք զուգահեռաբար կը տանին նոյն տեղը, դէպի թուրքականութիւն՝ համաթուրանականութիւն և վերջապէս հայկական հարցի խեղաթիւրում, Հայ դատի գերեզմանում: Հետևաբար՝ կը տեսնենք ուղղակի հայ ժողովուրդի հանդէպ թշնամական վերաբերմունքը, որուն պատճառ պիտի ըլլայ Հայոց ցեղասպանութեան իրագործումը և հայկական հողերու բռնագրաւումը ու մշակութային յուշարձաններու ոչնչացումը, ըլլայ ան Արևմտեան Հայաստանի կամ Նախիջևանի ու Ղարաբաղի (անշուշտ ԼՂՀ-ի անկախութենէն առաջ):

Արիւնարբու իթթիհատականները, համաթուրանականութեան գաղափարախօսութեամբ համակուած, հայկական զանգուածային տեղահանութիւններու և ջարդերու միջոցաւ ճամբայ հարթած էին...: Արդ, Հայոց ցեղասպանութիւնը որդեգրելու նախնական գաղտնի ժողովներու և որոշումի մասին թուրք լրագրող Մեվլան Զատէ Ռիֆաթ (1872-1950), որ մասնակցած էր «Միութիւն և յառաջդիմութիւն» կուսակցութեան գաղտնի ժողովներուն և քաջատեղեակ էր կուսակցութեան գործունէութեան, գրած է «Թրքական յեղափոխութեան ներքին ծալքերը» աշխատութիւնը (1929, արաբատառ թրքերէն, անաւարտ): Մեվլան Զատէի այս երկը լիովին կը բացայայտէ և երևան կը հանէ երիտ-թուրքերու կառավարութեան որդեգրած ցեղասպանութիւնը, արևմտահայերը տեղահանելու և կոտորածներ կազմակերպելու պատճառներն ու կանխամտածուած բնոյթը, մասնաւորապէս հայերու ցեղասպանութիւնը իրագործելու համար «Միութիւն և յառաջդիմութիւն» կուսակցութեան ստեղծած «Թէշքիլաթը մահսուսէ», յատուկ կազմակերպութիւն,

Պէհաէտտին Շաքիրի անմիջական տրամադրութեան տակ, ղեկավարութեամբ՝ Սուլէյման Պէյի (Կեդրոնը՝ Կ.Պոլիս) կատարած բռնութիւններն ու ջարդերը, որպէսզի Թուրքիոյ ճամբան բացուի դէպի Թուրան: Արդարև, կարևոր նկատեցինք միայն յիշեցնել այս լրագրողն ու իր խիստ կարևոր քանի մը յուշերը, որոնք ամփոփուած են «Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագիրները» գիրքին մէջ:

1915-ի սկիզբներուն, երիտ-թուրքերու Կեդր. Կոմիտէի գաղտնի նիստը Թալեաթի նախագահութեամբ գումարուած, որոշեց Արևմտահայութեան տեղահանութեան և բնաջնջումի յստակ ձևերը, այս նիստին մեծն ճիւաղ՝ տոքթ. Նազիմ, խօսք առնելով կ'ըսէ.

«...այս ժողովին մէջ քանիցս խօսած եմ և հիմա կը կրկնեմ. եթէ այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական պիտի չըլլայ, օգուտի տեղ վնաս կը բերէ. պէտք է հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռցուի: Հիմա պատերազմի մէջ ենք, ասկէ յարմար առիթ չի գտնուիր, մեծ պետութեանց միջամտութիւնը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ և կը փակուի. այս անգամուան իրողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլայ, հայերէն անհատ մը իսկ չմնալու պայմանաւ, բնաջնջումը անհրաժեշտ է»[5]:

Նոյն նիստի ընթացքին, կոմիտէի մէկ այլ անդամը՝ Խոճա Շէյխ Ուլ Իսլամ Հասան Ֆէհմին իր ելոյթի ընթացքին կ'ըսէ, որ մարգարէն ըսած է «ամէն վնասակար բան պէտք է անհետացուի»: Ուստի, քանի որ հայերու վնասը փաստուած է, ... անոնց մէկ անհատն իսկ ողջ չձգելու պայմանաւ բնաջնջումը օրինական է. նոյնիսկ պատրաստ եմ առ այդ քարոզելու.... երախտագիտութեամբ կը խօսիմ. ես ազատութեան շնորհիւ երեսփոխան եմ. 50 հազար իսլամական կրօնական ուսանողութիւնը կը ներկայացնեմ....: Ասացուածին համաձայն՝ ծեր, երեխայ, կին, անկարող նկատի չեն առնուիր և բոլորը կը բնաջնջուին: Ես բնաջնջումի դիւրին ձև մը կը խորհիմ, ներեցէք որ պարզեմ. հիմա պատերազմի մէջ ենք, հայերու զէնք վերցնելու կարող երիտասարդները պատերազմի առաջին գիծը կը ղրկենք, հոն դիմացէն ռուսերուն, իսկ ետևէն մեր կողմէն մասնաւոր կերպով ղրկուած ուժերուն կրակին մէջ կ'առնենք և կը բնաջնջենք. իրենց տունը մնացող տկար ու ծեր, կին ու երեխայ տարրերուն համար ալ կը հրամայենք և մեր հաւատացեալները կը մաքրեն ինչքերնին, կը կողոպտեն, աղջիկները կ'առևանգեն: Այս միջոցառումը յարմար կը տեսնուի»: Շէյխ Ուլ-Իսլամ Հասան Ֆէհմին, հետագային իր հռչակաւոր ֆէթուէով գազան ժողովուրդը պիտի հրաւիրէր Ճիհատ»ին[6] (Սրբազան Պատերազմ Յանուն Աստուծոյ): Այս երկխօսութեան ընթացքին, Գարա Քէմալ ինքզինք իսլամ նկատող, պարծանքով կը բացագանչէր. «Ապրի՛ս, Խոճա, տեսա՞ք ընկերներ, մեզի վայել կրօնապետը»[7]:

Այստեղ անմիջապէս, ուշադրութեան կ'ուզենք յանձնել նոյն կրօնքի պատկանող անձերու վերաբերմունքը, մասնաւորապէս յատկանշական է բնականաբար ասպնջական արաբ ժողովուրդի, թէ՛ կրօնքի առումով և թէ՛ արաբական ազնիւ բնաւորութեան, զգացումներու, որպէս արտայայտութիւն: Առ այդ, ՄԷՔՔԷԻ իշխան Շէրիֆ Հուսէյնը (Յորդանանի ներկայ թագաւորը, Շէրիֆ Հուսէյնի ծոռն է), նոյեմբեր 1916-ին, հետևեալ խօսքերը պիտի արտասանէր. «Հայերուն վրայ գործադրուած վայրագութիւնները իսլամի սուրբ օրէնքը կրնայ միայն դատապարտել», սոյն արտայայտութեան համար կը կարծենք որ աւելի մեկնաբանութեան կարիքը չկայ:

Յատկանշական է նաև, Իթթիհատական պարագլուխներէն տոքթ. Նազրմի համաթրքութեան մոլեռանդութեամբ լիցքաւորուած արտայայտութիւնները. «Ես թրքութիւնը կենդանացնելու համար ձեզի ընկեր, եղբայր եղայ, ես թուրքին, միայն թուրքին ապրիլը, այս հողին վրայ անկախ իշխող մը ըլլալը կը փափաքիմ: Ոչ թուրք տարրերը թող ջնջուին, ո՛ր ազգութեան և ո՛ր կրօնին ալ պատկանած ըլլան: Այս երկիրը (Թուրքիան) ոչ թուրք տարրերէն մաքրել պէտք է: ԿՐՕՆԸ ԻՄ ՔՈՎՍ ՈՉ ՄԷԿ ԱՐԺԷՔ ՈՒՆԻ, ԻՄ ԿՐՕՆՍ ԹՈՒՐԱՆՆ Է[8]:

Նոյն ժողովին կրկին անգամ տոքթ. Նազրմը կարծես Թուրանի իրականացման աւետիսը կու տար իր թուրք ժողովուրդին՝ ըսելով. «Ո՛վ թուրք, կը տեսնեմ որ բախտիդ արևը պիտի ծագի. Թուրանի ճամբան բացուելով լոյսերը աչքերը պիտի շլացնեն»[9]:

Համաթուրանական ծրագրին հետևողներէն և ընդհանրապէս մարդկութեան և Աստուծոյ բնաւ հաւատք ու սէր չունեցող, նոյնպէս իթթիհատականի պարագլուխներէն տոքթ. Պէհաէտտին Շաքիր, այդ գաղտնի ժողովին իր խօսքերով երևան պիտի հանէ թուրքիզմի իսկական դիմագիծը, որ իսլամութիւնը պարզապէս միջոց մըն էր թուրք ժողովուրդը համախմբելու և աւելին, թուրք ժողովուրդը ազգ ըլլալէն ետք ինչո՞ւ չէ նաև յատուկ կրօն մըն ալ ստեղծելու շնորհքը: Կը կարծենք որ այդ մէկը լաւ ձևով կը վկայեն տոքթ. Շաքիրի խօսքերը. «Մովսէսի պէս թշուառական մը, Յիսուսի պէս պարապ մարդ մը և Մուհամմէտի պէս որբ մը աշխարհին վրայ երբ կրցած են մէյ մէկ կրօններ հիմնել, ինչո՞ւ մեզի պէս կամքի տէր մտաւորականներ Թուրանի կրօնը չհիմնենք և չընդհանրացնենք»[10]:

6 օգոստոս 1914-ին Թուրքիոյ և Գերմանիոյ միջև կընքուած պայմանագրի (երկրորդ: Առաջինը՝ 2 օգոստոս) վեցերորդ յօդուածով՝ «Գերմանիան կ'օգնէ Օսմանեան կայսրութեան արևելեան սահմանները շտկել այնպէս, որ Թուրքիոյ համար ապահովէ անմիջական շփում Ռուսաստանի մէջ բնակող մահմետական ազգաբնակչութեան հետ»: Այս պայմանագրով, Գերմանիան իր համաձայնութիւնը պիտի տար Թուրքիային օգնելու՝ անոր համաթրքական ծրագիրի իրականացումին համար:

12 հոկտեմբեր 1914-ին Կ.Պոլսոյ գերման դեսպան Հանս Ֆրայհէր ֆոն Վանկենհայմ (1859-1915) մասնաւոր տեսակցութիւն մը կ'ունենայ Էնվէր Փաշայի հետ, համոզելով զայն, որ Թուրքիան անմիջապէս պատերազմի մէջ մտնէ: Ուստի Էնվէր գերման

դեսպանէն բաժնուելէն ետք, անմիջապէս իթթիհատի պարագլուխները և վարչապետ Սայիտ Հալիմ փաշան (1863-1921) Կեդրոն հրաւիրելով և պատերազմական նախարարի հանգամանքով կը պահանջէ, որ Գերմանիոյ հետ զինակցութիւն կնքելու համար շուտով որոշում տրրուի: Յիշեալ նիստին Էնվէրի ունեցած համաթրքութեան ելոյթի մասին Մէվլան Ջատէ իր յուշերուն մէջ կը գրէ, որ Էնվէրը ապացուցելու համար, որ Թուրքիոյ անհրաժեշտ է մասնակցիլ պատերազմին Գերմանիոյ կողքին, կը մատնանշէր հետևեալը.

«Ընկերներ, Պատերազմական կացութիւնը փափուկ է: ...Որոշ է որ Անգլիա ևս պիտի չկրնայ Եգիպտոսը պաշտպանել. Գերմանիա համաձայն է որ Եգիպտոսը, Կովկասը վերագրաւենք և նոյնիսկ Պարսկաստանն ալ գրաւենք և կարելիութիւն ստեղծուած է, որ այդ երկու կողմերը զինուորական պտոյտով մը մտնենք: Այս կերպով, տարակոյս չկայ, որ մենք պիտի կրնանք Թուրանի ճամբան բանալ և թուրք միութիւնը ապահովել»[11]:

Թուրանական գաղափարի ամէնէն հարազատ օրինակներէն մէկն է նաև թուրք բանակի հրամանատար Վէհիպ փաշայի (1877-1940) խօսքերը՝ ուղղուած հայկական պատուիրակութեան, Պաթումի (Աճարիոյ մայրաքաղաք) խորհրդաժողովի ընթացքին, մայիս 1918-ին, «Դուք կը տեսնէք, որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արևմուտքէն արևելք: Մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաև Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արևելք, հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու մեր լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի, մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան և Ատրպէյճան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք և մեզի ճամբայ տաք: Ահա թէ ո՛ւր է մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու և պաշտպանուելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ, միւսը կ'երթայ Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Կուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն՝ Նոր-Պայազիտի (այժմ՝ Կամօ) և Էջմիածնի շուրջը»[12]:

Իսկ Պոլսոյ մէջ կատաղի վէճեր տեղի ունեցած են Երիտասարդ Թուրքերու կոմիտէին մէջ այն մասին, թէ ո՛ր աստիճան նպատակայարմար է Կովկասի մէջ պահպանել հայկական պետութիւն մը: Այս հարցով 1918-ի աշնան, Ազիզ պէյ Թալեաթ փաշա Ալեքսանդր Խատիսեանի կը պատմէ ըսելով, որ Էնվէր փաշան կը գտնէր, որ քանի որ հայերը եղած են և պէտք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ պիտի չթողուն մեր Անատոլուի նահանգները, աւելի լաւ է, որ հիմնապէս բնաջնջուին անոնք նաև Կովկասի մէջ, ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ: Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մէջ պատճառ պիտի դառնայ, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները և դառնայ յաւիտենական վտանգ Թուրքիոյ համար: Իսկ Թալեաթ, Էնվէրի պատասխանած է, որ այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է թէկուզ այն պատճառով, որ այսպէս թէ այնպէս երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ և անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի աւելի լաւ է, որ անոնց գոհացում տրուի, որովհետև եթէ նոյնիսկ 100.000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզի հանգիստ պիտի չտան երբեք: Եւ վերջապէս, փոքրիկ Հայաստան մը ստեղծելով մենք լուծած կ'ըլլանք հայկական հարցը և այդպէս կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդաժողովին[13]: Այս ամբողջ երկխօսութիւնը, որ տեղի կ'ունենայ Խատիսեանի և Թալեաթ փաշայի միջև, արդէն մեծ վկայութիւն մըն է փոքրիկ Հայաստան մը թողելով հայերուն՝ ճամբայ բանալ դէպի արևելք, արիւնակից եղբայրներուն դէպի Թուրան:

Քազըմ Քարապեքիր առիթով մը կը գրէ, որ Էնվէր փաշան «Մշտապէս կլանուած էր մտքով մը, ձգտումով մը՝ ստեղծել «Թուրան»: Ըստ անոր, ան կը պնդէ, որ իբր թէ ինքը միշտ Էնվէրին մատնանշած է Թուրքիայի համար այդ ուղիով ընթանալու վտանգաւոր ըլլալը: Այս ուղղութեամբ Էնվէր կ'ըսէ. «Ես նոյնպէս կ'աշխատէի.... անոր մէջ համոզել նաև ներքին գործերու նախարար Թալաաթ պէյը.... Պատերազմի ժամանակ ես իմ պետերուն կ'ապացուցէի, որ պայքարը Թուրանի համար վտանգաւոր է, սակայն իմ բոլոր ջանքերն ապարդիւն անցան»:

«Իմ պաշտօնական դիմումներուն կը պատասխանէին, որ հայրենիքի ապագայի համար ծայրայեղօրէն անհրաժեշտ է, որպէսզի Թուրքիային միացուի Կովկասեան Ատրպէյճանը՝ Նախիջևանի հետ միասին»[14]:

Եուսուֆ Աքչուրա Օղլու, 29 յունուար 1920-ին, Պոլսոյ համալսարանին մէջ հաւաքի մը ընթացքին, ակնարկելով Հայաստանի Հանրապետութեան, շոնդալից խօսքեր կ'արտասանէր. «Պէտք է ոչնչացնել Հայաստանը, զոր դաշնակիցները կ'ուզեն իբր թումբ կանգնեցնել երկու եղբայր հատուածներուն՝ Անատոլուի և Կովկասի թրքութեան միջև...»[15]: Կարծէք թէ, երբեք Հայաստան Աշխարհ մը գոյութիւն չէ ունեցած երկրի երեսին, մօտ 300.000 ք.մ. տարածութեամբ:

Աքչուրա, այլ առիթով մը առանց բառերը ծամծմելու և դարձդարձիկ արտայայտութիւններ կատարելու ահազանգ հնչեցուցած էր, թէ «Փանթուրանակութեան ճանապարհը գրեթէ զերծ է բոլոր խութերէն, որոնց կը բախին օսմանցիութիւնն ու համիսլամութիւնը: Համաթուրանականութիւնն ուղղուած է առաւելապէս Ռուսաստանի դէմ, որ թէև մեծ, բայց անյաղթելի չէ»:

Զարևանդ իր «Միացեալ անկախ Թուրանիան» գրքին մէջ շատ լաւ ձևով պիտի մեկնաբանէր, որ փանթուրանիստ Մուսաւաթը կ'ուզէ լրացնել փանթուրանիստ Իթթիհատի գործը... հետևաբար՝ Թուրքիոյ թրքացումէն վերջ կարգը եկած էր Կովկասը թրքացնելու[16]:

Թուրքիայի հանրապետութեան հիմնի հեղինակ Մեհմէտ Աքիֆ Էրսոյը, որու հայրը պլպանացի էր, իսկ մայրը պուխարիացի, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին «Միութիւն և յառաջդիմութիւն» կուսակցութեան գաղտնի սպասարկութեան «Թեշքիլաթը մահսուսէ»-ի կողմէ Պերլին ուղարկուեցաւ, Գերմանիոյ կողմէ գերի բռնուած թուրքերու մասին մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու:

Մեհմէտ Աքիֆ, որ իր գրութիւններով նորութիւն բերաւ Թուրքիոյ հանրապետութեան գրականութեան մէջ, թուրքիզմի երազներու իրականացման համար, որպէս արդիւնք, միշտ օրինակ տուած է իտեալ ըլլալու, իտեալ մրջիւնի հետևեալ հեքիաթը, մրջիւնը կ'որոշէ Մեքքէ երթալ: Անոր կը հարցնեն «Դուն ինչպէ՞ս կը կարողանաս քու թաթերով Մեքքէ հասնիլ»: Մրջիւնը կը պատասխանէ. «Եթէ չհասնիմ հոն, ապա կը մեռնիմ ճանապարհին»: Այսինքն՝ իւրաքանչիւր թուրք, պէտք է հպարտ ըլլայ, որ կ'երթայ Մեծ Թուրքիա, բնականաբար Մեհմէտ Աքիֆ, հոս նկատի ունի «Մեծն Թուրանիա» ստեղծելու տեսիլքը և հնարաւորութիւն ունի մեռնիլ անոր համար, ինչ որ կ'ուզէ մրջիւնի բերնով ըսել: Իսկ ազգայնականութեան համար Աքիֆ կը գրէ, որ «մենք ալ ժամանակին ազգ մըն ենք եղեր, ան ալ ի՞նչ ազգ, աշխարհ եկած ենք ու աշխարհի ժողովուրդին սորվեցուցած ենք, թէ ի՞նչ է ազգայնականութիւնը»:

Համաթրքութեան մարմնացում և ցեղապաշտական նկրտումներով տոգորուած Մուսթաֆա Քեմալ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Շնքեթ Սիւրէյեայի՝ «Թուրք չենք» հարցին «Քաւ լիցի» պատասխան տուած կովկասեան ճակատի օսմանեան զինուորներուն «Երջանիկ է ան, ով կ'ըսէ՝ թուրք եմ» գոչել տալը շատ ժամանակ չխլեց: Այս ծայրայեղական ճանապարհի ճարտարապետը՝ Քեմալ ապահովեց սոյն փոխակերպման երեք փուլը:

ա. «Ազգային ազատագրական պատերազմ»-ի՝ (նկատի ունի 1919-1922 թթ. թուրք-յունական պատերազմը, որը թուրքերը համարում են ազգային-ազատագրական /Türk Istiklâl Harbi, Millî Mücadele/- Ա.Գ.) տարիներուն, Անատոլիայի և Ռումելիի[17] իսլամ բնակչութեան մեծ տէրութիւններու դէմ միաւորելու համար կրօնական արտայայտութիւններ օգտագործած են: Օրինակ՝ 1920 մայիս 1-ին «Ազգային մեծ ժողով»-ին դիմելով Մուսթաֆա Քեմալը ըսած է. «Խնդիրը մէկ անգամ ևս չկրկնելու խնդրանքով կ'ուզեմ անդրադառնալ մէկ-երկու կէտի. այստեղ ցանկալի և ձեր Բարձրագոյն խորհուրդը կազմած անձինք միայն թուրք, չերքեզ, քիւրտ, լազ չեն, բոլորին բաղադրիչ տարրը իսլամն է, անկեղծ հաւաքածոյ է…»:

բ. «Կրօնական» բնորոշումը կամաց-կամաց իր տեղը կը զիջի «քաղաքական» բնորոշումին: Նախ՝ 8 փետրուար 1921-ին «Ազգային մեծ ժողով»-ի անուանումին սկիզբը դրուեցաւ «Թուրքիա» բառը: «Թուրք» բառը Մուսթաֆա Քեմալը առաջին անգամ, որպէս «քաղաքական եզր» օգտագործեց 1922 թ. սեպտեմբեր 21-ին «Մեծ յաղթանակ»-ի ընթացքին կատարած յայտարարութեան մէջ: Մուսթաֆա Քեմալը խումբ մը ուսուցիչներու ըսաւ. «Երեք ու կէս տարի առաջ կ'ապրէինք, իբրև կրօնական համայնք… Այդ ժամանակէն ի վեր կ'ապրենք, որպէս թուրք ազգ»:

Այն, թէ թուրք ազգը ինչ տարրերէ բաղկացած է, Մուսթաֆա Քեմալը ներկայացուց 1923 թ. մարտ 16-ին Ատանայի «Թրքական օճախ»-ի արհեստաւորական համայնքի հետ թէյի շուրջ ելոյթի ժամանակ. «Մեր ընկերները իրենց ելոյթներու ժամանակ ըսած են, թէ մեր Ատանայի մէջ առաւելութիւն ունեցող միւս տարրերը՝ ասոնք-անոնք, հայերը, զաւթած են մեր արհեստի օճախները՝ դառնալով երկրի տէր ու տիրական: Անկասկած, այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ զրպարտութիւն և լկտիութիւն: Հայերն այս բարեբեր երկրին մէջ որևէ իրաւունք չունին: Երկիրը ձերն է՝ թուրքերունը: Այս երկիրը պատմութեան ընթացքին թուրք է եղած, հիմա թուրք է և թուրք ալ մնալու է…»:

Թէև այս ցեղապաշտական մօտեցումը աշխատեցան հաւասարակշռել 8 Ապրիլ 1923-ին, Ժողովրդական կուսակցութեան հիմնումը աւետող «9 սկզբունքներու մէջ» տեղ գտած «Թուրքիոյ ժողովուրդի» միջոցով, սակայն 24 Յուլիս 1923-ին Լօզանի հաշտութեան պայմանագրի կնքումէն յետոյ սկսած էին այնպիսի քայլեր առնել, որոնք մտածել կու տային, թէ Ազգային պայքարի մէջ իրենց դաշնակիցներու կարիքը այլևս չէր մնացած:

Այնուհետև, Թուրքիոյ վարչապետ, հետագային նախագահ Իսմեթ Ինէօնիւն 1925 թուականին Անգարայի մէջ «Թրքական օճախներու համագումար»-ի իր ելոյթի ժամանակ յայտարարած է՝ «Մենք բացայայտ ազգայնամոլներ ենք, մենք ցանկացած գնով պէտք է թրքացնենք անոնց, ովքեր կ'ապրին մեր հայրենիքին մէջ»: ■

Ծանոթագրություն

1. Berk Ercüment, «Yusuf Akçura ve Fikirleri», Türkiyat Araştirmalari Enstitüsü Dergisi(TAED), 2017, ss.483-484.
2. Անատոլիա (յունարէն՝ *ἀνατολία* - արեւածագ, արեւելք), Փոքր Ասիոյ թերակղզիի արեւմտեան մասը: Օսմանեան կայսրութեան մէջ Անատոլիա (Անատոլու) կը կոչուէր Փոքր Ասիոյ հիւսիսարեւելեան մասը ընդգրկող նահանգը՝ Քիւթահիա կեդրոնով:
3. 1923 թուականէն թրքական գրականութեան մէջ Անատոլիա կ'անուանեն ողջ Ասիական Թուրքիան՝ ներառեալ Արեւմտեան Հայաստանը, Հայկական Բարձրաւանդակը, որով եւ խեղաթիւրուել է այդ բառեզրի աշխարհագրական բովանդակութիւնը:
4. Ատոմ, «Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը», Կ. Պոլիս, 1913, էջ 161-162:
5. Զարեւանդ, «Միացեալ անկախ Թուրանիա կամ ինչ կը ծրագրեն Թուրքերը», Աթէնք, 1988, էջ 109:
6. «Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները», 1975, Պէյրութ- Լիբանան, էջ 97-98:
7. Նոյն տեղը, էջ 100-101:
8. Նոյն տեղը, էջ 101:
9. Նոյն տեղը, էջ 98-99:
10. Նոյն տեղը, էջ 22:
11. Նոյն տեղը, էջ 99:
12. Նոյն տեղը, էջ 22:
13. «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Ալ. Խատիսեան, Բ. տպագրութիւն, 1968, Պէյրութ, էջ 86:
14. Նոյն տեղը, էջ 88-89:
15. «Թուրքիան եւ նրա նուաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում», Ե.Ղ.Սարգիսեան, Երեւան, 1964, էջ 177:
16. R.Pinon. L'Offensive de l'Asie, Revue des Deux Mondes, Paris, 15 Avril, 1920:
17. Զարեւանդ, «Միացեալ, Անկախ Թուրանիա...», էջ 115:
18. Ռումելիա (թրքերէն՝ Rumeli Rumeli — երկիր (el) ռումների (rum), յուն.՝ Ρούμελη), Պալքաններու պատմական անուանումը: Անուանման հիմքը Բիզանդիայի արաբերէն անուանումն է՝ Ռում (Հռոմ), այսինքն՝ Արեւելեան Հռոմեական կայսրութիւն:

Քեմալիզմից մինչև էրդողանիզմ

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

1923 թ. հոկտեմբերին Մուստաֆա Քեմալը կամ Աթաթուրքը (1881-1938) դարձավ Թուրքիայի Հանրապետության նոր ղեկավար: Հաջորդ մեկուկես տասնամյակի ընթացքում նա, օգտագործելով իր քաղաքական մեծ ազդեցությունն ու հեղինակությունը, կարողացավ բարեկարգել երկիրը: Նա արդիականացրեց ինստիտուցիոնալ ենթակառուցվածքները, բարեփոխեց և վերակազմավորեց կառավարման համակարգը և բավականին ագրեսիվ արշավ սկսեց Թուրքիայի արևմտականացման դեմ և աշխարհիկացման ուղղությամբ: Մինչև իր մահը գործելով՝ Ք. Աթաթուրքը կարողացավ Թուրքիան ոտքի հանել Օսմանյան կայսրության մոխիրների միջից և երկիրը հռչակեց ժողովրդավարական հանրապետություն:

Թուրքիայի Հանրապետության ստեղծման առաջին իսկ օրվանից Ք. Աթաթուրքը հայտարարում էր, որ երկրում իշխանությունն անվերապահորեն պատկանում է ժողովրդին, և տարիներ շարունակ այս սկզբունքն էր, որ դրված էր երկրի կառավարման հիմքում: Աթաթուրքի նախագահության շրջանում երկրում սկիզբ դրվեց կրոնական, սոցիալական և քաղաքական մեծածավալ բարեփոխումների: Նա հրաժարվեց օսմանցիներից ժառանգություն մնացած կառավարման ավտորիտար մոդելից և մշակեց աշխարհիկ ժողովրդավարությամբ երկիրը կառավարելու իր ծրագիրը, որը պայմանականորեն անվանվեց քեմալիզմ:

Քեմալիզմի ազդեցությունը ներկայիս Թուրքիայի Հանրապետության վրա հասկանալու համար նախ և առաջ պետք է պատկերացում ունենալ քեմալիզմի գաղափարախոսության և դրա ընդգրկած ուղղությունների մասին: 1919 թ. Ք. Աթաթուրքը ստեղծեց «Ազգային հանրապետական» կուսակցությունը, և, չնայած բոլոր դժվարություններին, նրան հաջողվեց խուսափել իր երկրի ներքին գործերին Արևմուտքի միջամտությունից: Արդեն 1923 թ. ստեղծվեց թուրքական պետությունը, բայց անհասկանալի էր, թե ինչ մեթոդներով ու մեխանիզմներով էր Ք. Աթաթուրքը կառավարելու այս ժամանակակից պետությունը: Այս հիմնարար հարցը կարգավորելու նպատակով Ք. Աթաթուրքն ու իր կուսակցության անդամները գործի դրեցին այն քաղաքականությունը, որը ներկայումս ստացել է քեմալիզմ անվանումը: Դրա փիլիսոփայության հիմքում ընկած էր արևմտյան գաղափարախոսությունների համադրությունը: Այն հիմնված էր վեց սկզբունքների վրա: Դրանցից առաջինը հանրապետականությունն էր (Respublicanism), որը բնութագրում էր ժողովրդին պատկանող բարձրագույն իշխանությունը. այլևս չէին լինելու սուլթաններ, բայց սա ամենևին եվրոպական ու ամերիկյան հասարակություններին բնորոշ ժողովրդավարությունը չէր: 1930-ական թթ. Առաջին համաշխարհայինի և Մեծ դեպրեսիայի տարիների

ազդեցության հետևանքով արևմտյան կապիտալիզմն այլևս չէր արդարացնում իրեն, իսկ խորհրդարանական կառավարման համակարգը մշտապես տեղիք էր տալիս վեճերի և քաշքշուկների: Այս պայմաններում Քեմալը կարողացավ իշխանությունը վերցնել իր ձեռքը և ճնշել հակառակորդներին ու այլընտրանքային կուսակցություններին: Սա էլ արդեն տանում էր երկրորդ սկզբունքի կիրառմանը, որը նացիոնալիզմն էր, որի այն ժամանակվա և ներկայիս ընկալումները բավականին տարբեր են: Սա պարզապես ազդարարում էր ազգերի ինքնորոշման իրավունքն ու այն, որ ոչ մի ազգ չի կարող ընդլայնել իր երկրի սահմանները կայսերական և գաղութատիրական ճանապարհով, և, ինչպես ամրագրված էր նոր Սահմանադրության մեջ, բոլոր մարդիկ, անկախ իրենց ռասայական և կրոնական պատկանելությունից, համարվում են թուրքեր՝ ի հաշիվ քաղաքացիության:

Երրորդ սկզբունքը պոպուլիզմն էր, որի նկատմամբ վերաբերմունքն այսօր առավել բացասական է, բայց այն ժամանակ չեզոք էր: 1920 թ. իր ելույթում Ք. Աթաթուրքը նշել է. «Ես հավատում եմ, որ մեր գոյության կարևորագույն նպատակը հենց մեր երկրի զարգացման գլխավոր ուղղությունն է: Սա պոպուլիզմն ու ժողովրդի իշխանությունն է: Եվ սա իշխանության հաստատումն է կառավարության և ժողովրդի նկատմամբ….»[1]: Ի լրումն առաջին երկու սկզբունքների՝ պոպուլիզմը նշանակում էր պետության սահմաններում իշխանություն հաստատել կառավարության և ժողովրդի նկատմամբ, միաժամանակ հռչակում էր ազգերի, հատկապես թուրքական ազգերի միասնականության գաղափարը, որը կհարթեր բոլոր հասարակական և կրոնական տարաձայնությունները: Սրանից էլ բխեց չորրորդ սկզբունքը՝ էտատիզմը (Etatism), ըստ որի՝ միանշանակ ընդունելի էր կառավարության վերահսկողությունը տնտեսության նկատմամբ, և մասնավոր սեկտորն ունակ կամ կոմպետենտ չէ այն վերահսկելու: Էտատիզմը սոցիալիստական սկզբունք էր, որը ձևավորվել էր Խորհրդային Միությունում, բայց այն կոմունիստական համարելը սխալ է:

Հինգերորդ սկզբունքը աշխարհիկությունն էր (Secularism): Աշխարհիկությունը, քեմալականների մեկնաբանմամբ, ավելի շատ մոտ էր ֆրանսիական լեիցիզմին, քան թե ամերիկյան սեքյուլարիզմին: Լեիցիզմը պրոպագանդում էր ոչ թե իշխանության և կրոնի տարանջատում, այլ իշխանության վերահսկողության սահմանում կրոնների նկատմամբ, դրանց ձևավորում հասարակական մթնոլորտում, գոյություն ունեցող շուրջ 85 հազար մզկիթների վերահսկման ճանապարհով, և, չնայած մուսուլման բնակչությունը կազմում էր երկրի 97 տոկոսը, այն կապվում էր նաև էտատիզմի հետ. կառավարությունը պետք է հսկեր պետության զարգացման ուղղությունները, իսկ իսլամն ավանդական ուժ էր, որը նույնպես անհրաժեշտ էր ուշադրության կենտրոնում պահել: Ք. Աթաթուրքը լավ էր հասկանում, որ բոլոր քաղաքական կոնցեպցիաներն ու դրույթները ենթակա են փոփոխությունների, ուստի վեցերորդ սկզբունք ընտրվեց ռեֆորմիզմը: Քաղաքական շարժումները տիրող իրավիճակին հարմարեցնելու կարողությունը ծայրահեղ կարևոր էր նախորդ սկզբունքները պահպանելու առումով: Այս վեց սկզբունքների հիման վրա ստեղծվեցին քաղաքական մի շարք նոր ինստիտուտներ, և ձևավորվեց քաղաքական նոր ենթամշակույթ, սակայն բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում քրիստոնյաները, որոնք չէին կարողանում կարդալ ու հասկանալ այդ նոր մշակույթի ամբողջ իմաստը: Իհարկե, մինչ այդ նրանց կյանքում տիրապետող էր իսլամը: Քեմալիզմի հաջողության համար անհրաժեշտ էր ապահովել նյութական և տնտեսական օգուտ, ուստի իշխանությունը սատարում էր արդյունաբերական կազմակերպություններին:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ քեմալականները երիտթուրքերի քաղաքական հետնորդներն էին: Մասնավորապես, Ք. Աթաթուրքը դեռևս երիտասարդ տարիներին բազմիցս մասնակցել էր երիտթուրքական ժողովներին և որոշակիորեն ծանոթ էր նրանց ծրագրերին ու գաղափարներին: Բացի այդ՝ նորաստեղծ թուրքական պետության վերնախավում մեծ թիվ էին կազմում նախկին երիտթուրքերը, որոնք բարձր պաշտոններ էին զբաղեցնում նաև սպայակազմում: Երիտթուրքերից քեմալականները ժառանգություն ստացան նաև, այսպես կոչված, մշակութային ազգայնամոլությունը, որն իր բոլոր կապերը խզել էր կրոնի հետ: Նրանց համար առաջնահերթ էին պետական շահերը: Այս տեսանկյունից և՛ երիտթուրքերին, և՛ քեմալականներին կարելի է անվանել պետական ազգայնամոլներ: Քեմալականները նախկին իշխանություններից հետո շարունակեցին հայասպան և հայաջինջ քաղաքականությունը, որը նույնպես գաղափարական, սոցիալական, քաղաքական և տնտեսական տասնյակ գործոնների համակցման արդյունք էր: Հայտնի է, որ Ք. Աթաթուրքը իթթիհատական էր, որոնք հայերի բնաջնջման մասին որոշումը կայացրել էին պետականակենտրոն մի գաղափարախոսության շնորհիվ, որը կարելի է անվանել նաև պետության շարունակական գոյության պահպանում:

Քեմալականների ցեղասպանական քաղաքականությունը բացահայտվեց արդեն 1920 թ. սեպտեմբերին, երբ նրանք չճանաչեցին օգոստոսին կնքված Սևրի պայմանագիրը և մեծաքանակ զորքով շարժվեցին դեպի Հայաստանի Հանրապետություն. սկսվեց հայ-թուրքական նոր պատերազմը, որը տևեց շուրջ երկու ամիս: Կարելի է ասել, որ պատերազմի ընթացքն ի սկզբանե պարզ էր: Արդեն սեպտեմբերի 29-ին ընկան Սարիղամիշը և Կաղզվանը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը, նոյեմբերի 12-ին՝ Աղինը: 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը, ի դեպ, իրավական հիմք չուներ, քանի որ դեռևս 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի տարածքի մի մասում հաստատվել էր խորհրդային վարչակարգը, և հայկական կառավարությունն իր իրավասությունները զիջել էր բոլշևիկներին: Թուրքական արշավանքը հսկայական վնաս հասցրեց հայ ժողովրդի արևելյան հատվածին: Թուրքերը կոտորեցին 198 հազար մարդ, ավերեցին ավելի քան 140 բնակավայր՝ պատճառելով ահռելի նյութական վնաս:

Քեմալականները շարունակեցին նաև հայերի ուծացման և ունեզրկման քաղաքականությունը: Դրա վառ ապացույցն էին մանկահավաքության դեպքերը, երբ հայ որբերին հավաքում էին մի տեղ, տալիս կրթություն և դաստիարակում մոլի հայատյացության գաղափարներով, ասել է թե՝ հայերին թուրքացնում էին:

Քեմալ և Էրդողան

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ քեմալականները երիտթուրքերի քաղաքականության կարկառուն շարունակողներն էին, նրանց գաղափարական ընկերները, իսլամի և աշխարհիկության սահմանազատմամբ՝ միևնույն քաղաքական մոդելի երկու տարբեր դրսևորումները մարմնավորողները:

Ընդհանրացնելով Թուրքիայում մինչև 2000-ականները տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները՝ կարելի է փաստել, որ, չնայած 4 ռազմական հեղաշրջումներին (1960, 1971, 1980, 1997) և 2 հեղաշրջման փորձերին (1962, 1963), այնուամենայնիվ, երկրում քեմալիզմի որդեգրած գաղափարախոսությունը շարունակում էր իշխող դեր ունենալ՝ ի հեռուկս արդեն 1990-ականներին ակտիվացած մի շարք խմբավորումների, որոնք իսլամը դիտարկում էին որպես երկրի դերի բարձրացմանն ուղղված գլխավոր գործոն: Այդպիսի քաղաքական ակտիվիստներից էին Ֆեթֆուլլահ Գյուլենը և Նեջմեթթին Էրբաքանը:

Արդեն 2000-ականներից Թուրքիայի քաղաքական կյանքում ակտիվություն է ցուցաբերում Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որը Ն. Էրբաքանի քաղաքական հետնորդն էր: 2002 թ. Նյու Յորքում Դավոսի գագաթնաժողովին ունեցած իր ելույթի ժամանակ նա նշել է, որ Իրանը չի կարող իր վարչակարգը արտահանել Թուրքիա, և իրենք ոչ թե կրոնակենտրոն են, այլ մարդակենտրոն, ուստի իրենց ամերիկացի ընկերները պետք է նկատի ունենան, որ իր գլխավորած կուսակցությունը («Արդարություն և զարգացում») ամենևին արմատական չէ: Այսպիսով՝ նրա ձևավորած «չափավոր իսլամիստական» մոդելն ընդունելի էր ամերիկյան իշխանությունների կողմից, որոնք 2001 թվականից ակտիվ պայքար էին մղում իսլամիստների ու ահաբեկչության դեմ և կարծում էին, որ աշխարհիկացման գործընթացն էլ ավելի էր խթանում վերջիններիս ակտիվացումը, ուստի Թուրքիայի չափավոր իսլամիստական կառավարությունը կարող էր դառնալ մի հետաքրքիր օրինակ Մերձավոր Արևելքի երկրների համար:

2008 թվականից էրդողանական կառավարությունը, որը ԵՄ-ի և ԱՄՆ-ի աչքերում ժողովրդավարության ջատագովներից էր, սկսեց քաղաքական հետապնդումների և հալածանքների ենթարկել պետական և զինվորական այն գործիչներին, որոնք այս կամ այն չափով կապ էին ունեցել քեմալականների հետ կամ էլ քեմալիզմի գաղափարախոսության կրողներից էին: Նրանց մեծ մասը ձերբակալվեց և դատապարտվեց երկար տարիների բանտարկության՝ այդպես էլ չիմանալով, թե ինչ «հանցանք» է գործել:

Աբդուլլահ Գյուլի (2007-2014) նախագահությամբ էլ սկիզբ դրվեց պետական կառավարման համակարգի գրեթե բոլոր ասպեկտների իսլամացմանը, նույնիսկ ՋԼՄ-ները կուսակցականացվեցին: Այն լրատվամիջոցները, որոնք ընդդիմադիր կեցվածք ունեին, դադարեցրին իրենց գործունեությունը: Այսպիսով՝ նոր վարչակազմը, օգտագործելով իր լծակները, կարողացավ ամբողջապես իր իշխանությունն հաստատել և վերահսկողություն սահմանել պետության բոլոր ոլորտների նկատմամբ: Երկար տարիներ շարունակ իրենց իշխանության համար մեկ ընդդիմություն համարվող քեմալականները մշտապես թիրախավորվել են և դարձել իսլամիստների քաղաքական հետապնդումների զոհը, քանի որ հենց նրանք էին, որ կարող էին դառնալ «նոր, ժողովրդավար» Թուրքիայի կայացման գլխավոր խոչընդոտը:

Այնուամենայնիվ, Ռ. Էրդողանի կուսակցությունը, որքան էլ ժխտեր քեմալիզմն ու աշխարհիկ Թուրքիան, միևնույն է, իր գաղափարախոսության մեջ ներառել էր այն տարրերը, որոնք քեմալիզմի կայացման հիմքն էին: Էրդողանական ու քեմալական ազգայնականության մեկնաբանությունները գրեթե չեն տարբերվում միմյանցից: Մասնավորապես, 2013 թ. հունվարի 19-ի իր ելույթում Ռ. Էրդողանը նշել է. «Մենք հայտարարում ենք մեկ ազգ, մեկ դրոշ, մեկ երկիր, մեկ պետություն: Մենք մերժում ենք էթնիկ ազգայնականությունը: Մենք սիրում ենք այն, ինչ Արարիչն է ստեղծել: Անհատը չի որոշում լինել թուրք, քուրդ, թե լազ: Դա որոշում է Արարիչը»[2]:

Աթաթուրքի և Էրդողանի քաղաքական կյանքը շատ դեպքերում հայելային պատկերացում է տալիս և ստեղծում թյուր կարծիք, թե նրանք նույն քաղաքական առաջատարի տարբեր կերպավորումներն են: Իրականում, այս նմանություններից զատ, գաղափարական տարբերություններն առավել ակնհայտ են: Եթե Աթաթուրքը Օսմանյան Թուրքիայի պատմությունը համարում էր Թուրքիայի պատմության ամոթալի ժամանակաշրջանը, ապա Ռ. Էրդողանը բազմիցս նշել է, որ իր ցանկացած հաղթանակ Օսմանյան Թուրքիայի հաղթանակն է, և ինքը հիանում է այդ կայսրության պատմությամբ: Եթե Աթաթուրքը իշխանությունը հաստատում էր՝ վերահսկելով կրոնը, ապա Էրդողանը կրոնն էր հաստատում՝ վերահսկելով իշխանությունը: Այսպիսով՝ էրդողանական Թուրքիան աշխարհիկ իսլամով պետությունը ղեկավարելու վառ օրինակ է:

Աթաթուրքի և Ռ. Էրդողանի քաղաքական գործունեության ընդհանուր գծերից է նաև Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը: Եթե Աթաթուրքի իշխանության օրոք հայաջինջ գործողություններն իրականացվում էին ուղղակիորեն, ապա Էրդողանի օրոք դրանք իրականացվում են ադրբեջանական պետության ձեռքերով՝ ևս մեկ անգամ փաստելով այն պարզ իրողությունը, որ թուրքական իշխանությունների որդեգրած կեղծ ազգասիրությունը պարզապես միջազգային հանրության աչքերում և ԵՄ-ում մարդասիրական և ժողովրդավարական պետության սին պատկերացումներ ստեղծելու պատրվակով է:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ քեմալիզմը շարունակաբար վերարտադրվում է որպես գաղափարախոսություն, իսկ թուրք հասարակությունը իրականությունն ընկալում է հենց այդ գաղափարախոսության դիրքերից: Այս գաղափարախոսության մոդեռնացված և որոշակի լրացումներ ստացած նոր վերարտադրությունը կարելի է անվանել էրդողանիզմ: Երիտթուրքերից հետո այս երկու գաղափարական հայեցակետերի նմանությունները և արտաքին ու ներքին քաղաքականությունների գրեթե նույն սկզբունքները վառ ապացույցն են այն բանի, որ թուրքական պետության կայացման և զարգացման հիմքում արմատավորված է ազգային պոպուլիզմը՝ պետականակենտրոն իշխանության հիմնարար դրույթներից մեկը, որի հիման վրա էլ արդեն կենսագործվում են դեռևս քեմալական Թուրքիայի օրոք որդեգրված պետականաստեղծ սկզբունքները:

Հղումներ

1- https://youtu.be/fBo5QYnn0lc (հասանելի է՝ 28.03.2022):

2- K. Giftci, The Kemalist Hegemony in Turkey and the Justice and Development Party (AKP) as an 'Other', https://www.cairn.info/revue-l-europe-en-formation-2013-1-page-143.htm?fbclid=IwAR1Bfl9wvMRDKCC2YQoNL8AoxEICrDhrqJnSvC45hkkOMcpTRNrRWzedCuw#no66 (հասանելի է՝ 27.03.2022):

Այլատյացությունն ու ցեղասպանությունը որպես թուրքական քաղաքական համակարգի հիմնաքարեր

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Ամիսներ առաջ, երբ Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռ. Թ. Էրդողանը իր ելույթներից մեկում հայերի հասցեին օգտագործեց «սրի մնացուկներ» արտահայտությունը, հայկական տիրույթում տարբեր արձագանքներ եղան դրա վերաբերյալ: Ոմանք այն համարեցին Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության հերթական դրսևորում, ոմանք էլ այն որակեցին որպես Էրդողանի հիվանդագին վարքագծին բնորոշ երևույթ (ինչը, եթե անկեղծ լինենք, ամենևին էլ հիվանդագին չէ): Ծայր առան մեղադրող, դատապարտող ելույթներ, կամ էլ ոմանց կողմից չտեսնելու տրվեց կատարվածը, սակայն այս արտահայտության ակունքներին, ծագմանն ու պատճառներին կամ անդրադարձ չկատարվեց, կամ էլ այդպիսիք մեզ հայտնի չեն: Մինչդեռ այն բացատրության է կարոտ:

Էրդողանի «Սրի մնացուկներ»-ը առերևույթ ներքին լսարանին ուղղված, այդ լսարանին գրգռող և լսելիքը բավարարող արտահայտություն էր: Նման արտահայտություններ և դարձվածքներ նախկինում էլ հնչեցվել են Թուրքիայի Հանրապետության տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների կողմից՝ ուղղված տարբեր թիրախների և տարբեր լսարաններ գրգռող, և թվում է, թե սրան ուշադրություն դարձնել պետք չէ, անգամ ողջամիտ չէ: Միգուցե այս խոսքերը, ի թիվս հույների, ասորիների և ցեղասպանության ենթարկված այլ ժողովուրդների, նաև մեզ էր ուղղված, և դրա համար մեր հանրության շրջանում այն այսչափ հույզերի տեղիք տվեց…

Եվ հետո, շատ «գլոբալիստ-ռեալիստներ» կպնդեն, հո չեկամ կոտորեց, 21-րդ դարն է ի վերջո...

Բանն այն է, որ ցեղասպանական գործողությունները՝ իրենց դրսևորման բոլոր ձևերով, նախքան ցեղասպանության՝ միջազգային տերմինաբանության ու միջազգային քաղաքականության բաղադրիչ դառնալը արդի թուրքական քաղաքական մտքի հիմնաքարն էին, դրա հիմնային հասկացությունը՝ դրանից բխող գործողություններով և ներքին ու արտաքին քաղաքականությամբ հանդերձ:

Արցախյան երկրորդ պատերազմի արյունոտ դրվագները դեռևս չեն խամրել մեր հիշողություններում (ու դժվար էլ խամրեն, անգամ մեր Արցախ հայրենիքի ազատագրումից հետո), սակայն միայն սա բավարար չէ ներկայացնելու, որ ցեղասպանությունը Թուրքիայի Հանրապետության քաղաքականության հիմքն է:

Եթե տեղի չունենային Մեծ եղեռնը և օսմանահպատակ մյուս քրիստոնյա կամ ոչ իսլամադավան ժողովուրդների ցեղասպանությունները Օսմանյան կայսրության մայրամուտին, ապա շատ վիճելի է՝ այսօր Անատոլիայի ու Հայկական բարձրավանդակի

մի հատվածի վրա թուրքական հանրապետություն գոյություն կունենա՞ր, թե՞ ոչ: Միաժամանակ իրականացված ցեղասպանությունները, որոնք Բալկաններում կրած պարտությունից ու տարածքային կորուստներից քաղած դասի գործնականացումն էին, առնվազն ժողովրդագրական հիմք ստեղծեցին այսօրվա Թուրքիայի Հանրապետության գոյության համար, իսկ ընդհանրապես դրանց հետևանքով հետագայում նաև տնտեսական, մշակութային և այլ հնարավորություններ բացվեցին մինչ այդ, որպես կանոն, շահագործող ու պարազիտ էությամբ օսմանաթուրք բնակչության համար: Հետևաբար վստահ կարող ենք ասել, որ այսօր գոյություն ունեցող Թուրքիայի Հանրապետություն անվամբ կազմակերպությունը ցեղասպանությունների շարքի հետևանք է: Կարող ենք նաև ցույց տալ փաստերով, որ ցեղասպանությունը այդ պետության հետագա գոյության ողջ ընթացքում նրան ուղեկցող ամենակիրառված քաղաքական գաղափարախոսությունն է եղել: Ուստի թուրք քաղաքական գործիչները ոչ միայն այն չմերժեցին, առավելևս չդատապարտեցին, այլ ընդհակառակը՝ լիովին որդեգրեցին այն որպես քաղաքական ուղի, փայփայեցին ու սնուցեցին այն, սնուցեցին հանրակրթական ինստիտուտների, պետական գաղափարախոսական քարոզչության միջոցով, ծնեցին, սնեցին ու դաստիարակեցին ցեղասպան քաղաքացի և ամեն մի պատշաճ առիթով օգտագործեցին այդ քաղաքացուն թե՛ Թուրքիայի ներքին քաղաքական կյանքում, թե՛ արտաքին քաղաքական ծիրում:

Թուրքական քաղաքական միտքը երբեք աչքի չի ընկել հումանիստական էությամբ. այնտեղ, որտեղ հնարավորություն է ընձեռվել որևէ հարց լուծելու բռնության միջոցով, կողմնակի տարբերակներ չեն քննարկվել. չեն խորշել ո՛չ բնակավայրեր բնաջինջ անելուց, ո՛չ հազարամյա պատմամշակութային

կոթողներ ոչնչացնելուց, ոչ էլ բռնի կրոնափոխությունից ու թրքացումից: Երբ 1922 թ. սեպտեմբերին քեմալական բաշիբոզուկները սկսեցին Զմյուռնիա քաղաքի հայ և հույն բնակչության կոտորածը, ականատեսների վկայությամբ՝ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալը, մեծ գորովանքով դիտելով քաղաքի հունական ու հայկական թաղամասերը կլանող հրդեհը, ասել է. «Ուշադի՛ր նայեք այս կրակին: Սա է, որ պիտի մաքրագործի հինն ու ստեղծի նոր Թուրքիան»: Թե որքանով են այս խոսքերը համապատասխանում իրականությանը, ասել չենք կարող: Միգուցե բանահյուսության դրսևորում են, սակայն դրանք լիովին համապատասխանում են թե՛ թուրքական քաղաքական ոգուն և թե՛ այն արտաբերող Քեմալի գործին:

Թուրքիայի Հանրապետության առաջին իսկ տարիները լի են ցեղասպանություններով ու զտումներով: Քրդերին շողոքորթելով ու լայն ինքնավարության սին խոստումներ տալով՝ հանրապետության հիմնադիր Քեմալը հասավ նրան, որ Լոզանում մեկընդմիշտ փակվեց քրդական անկախ պետության միջազգային հարցը: Տեսնելով, որ չարաչար խաբվել են, քրդական որոշ աշիրեթներ խռովություն բարձրացրին թուրքական պետության դեմ, մի մասն էլ, փոխշահավետ համաձայնության գալով պետության հետ, իր զենքն ուղղեց իր իսկ արյունակիցների դեմ՝ ձախողման մատնելով ապստամբությունն ու արագացնելով իր ազգակիցների կործանումը: Այդ ապստամբությունները բնական արձագանքն էին թուրքական կառավարության կողմից իրականացվող ուծացման ու թրքացման քաղաքականության, որոնք տարբեր ուժգնությամբ շարունակվեցին 1920-1930-ականների ընթացքում: Դրանցից ամենակազմակերպվածն ու հուժկուն 1925 թ. փետրվարին բռնկված շեյխ Սայիդի ապըստամբությունն էր, որն ընդգրկում էր գրեթե բոլոր քրդաբնակ շրջանները՝ 14 վիլայեթ: Մոտ երկու ամիս պահանջվեց ապստամբությունը ճնշելու համար: Ապստամբության ճնշմանը հաջորդեց զանգվածային կոտորածների, արտաքսումների ու զտումների մի տևական շրջան, որի ընթացքում տասնյակ, եթե ոչ հարյուրհազարավոր քրդեր ոչնչացվեցին, աքսորվեցին իրենց բնակության վայրերից, զրկվեցին բազում իրավունքներից: Ցեղասպանվեցին...

Հաջորդ ջարդը Դերսիմում էր, թիրախը՝ ալևիները…

Ցեղասպանականությունը թուրքական քաղաքական մտքի շրջանակներում ունի բազում դրսևորումներ. բացի ազգի ֆիզիկական ոչնչացումից՝ այն դրսևորվել է նաև տնտեսական, մշակութային ցեղասպանության տեսքով, ուծացմամբ, ուրացմամբ, այլ ազգերի ու ժողովուրդների մշակութային արժեքների յուրացմամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմը, ինչպես որ Առաջինը, հրաշալի հնարավորություն դիտվեց թուրքական կառավարության համար՝ լուծելու մինչ այդ պահը վերապրած ազգային փոքրամասնությունների հարցերը: Շտապ գործի անցավ թուրքական ցեղասպան քաղաքական միտքը, և նախաձեռնվեցին ու կյանքի կոչվեցին, այսպես կոչված, «20 դասակարգի զորակոչը» և «Ունեցվածքի հարկը»: «20 դասակարգի զորակոչը» 16-60 տարեկան ոչ մուսուլման քաղաքացիների (որոշ փաստերով՝ նաև իսլամացած հայերի) «զորակոչն» էր աշխատանքային գումարտակներ: Դրա բուն նպատակը հասարակության անվստահելի տարր համարվող հայ, հույն և հրեա քաղաքացիներին մեկուսացնելն ու հսկողության տակ պահելն էր: Առավել ցեղասպանական գործողություն էր «Ունեցվածքի հարկ» կոչված պետական թալանը, որի հետևանքով Թուրքիայի ոչ մուսուլման քաղաքացիները փաստացի ունեզրկվեցին, իսկ նրանց մի մասն էլ աքսորվեց՝ պետության կողմից սահմանված անտրամաբանական հարկերի չմարած մասը տաժանակիր աշխատանքով հատուցելու: Նրանց հիմնական մասը, չդիմանալով անմարդկային պայմաններին, այդպես էլ Աշքալեից՝ «թուրքական Սիբիրից», աքսորավայր չվերադարձավ:

Սակայն քանի որ ցեղասպանականությունը թուրքական պետության հիմնաքարն ու գլխավոր ուղին է, այսքանով թուրքական վայրագությունները չավարտվեցին: Հետաքրքիր է, որ թուրքական իշխանություններին հաջողվել է կրոնամոլությունը թոթափող ու արդիականացող երկրում կրոնական ատելություն սերմանել ոչ թուրք և ոչ մուսուլման ազգային փոքրամասնությունների հանդեպ: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ժամանակ հատուկ գործակալները մոլեգնած ամբոխին ուղղորդում էին ոչ այնքան ոչ թուրքերի, որքան ոչ մուսուլմանների դեմ: Դրա հետևանքն այն եղավ, որ Թուրքիայում բնակվող հույների, հայերի և հրեաների վերջին բեկորներին ցեղասպանական ևս մեկ հարված հասցվեց, այն է՝ թուրքական հատուկ ծառայությունների շինծու սադրանքով վերջիններս ֆիզիկապես, տնտեսապես և բարոյապես ոչնչացվեցին:

Թուրքիայի «երկրորդ դեմք» (Աթաթուրքից հետո), «ազգային շեֆ» Իսմեթ Ինյոնյուն, 1930 թ. օգոստոսի 30-ին մասնակցելով Սեբաստիայում երկաթուղու բացման արարողությանը, իր ելույթում նշեց.«....այս երկրում միայն թուրք ազգը կարող է ներկայացնել էթնիկական և ռասայական իրավունքների վերաբերյալ պահանջներ: Ոչ մի այլ տարր նման իրավունքներ չունի»:

Եթե թարգմանենք այս տողերը քաղաքագիտական լեզվով, կստացվի հետևյալը՝ յուրաքանչյուր ոչ թուրք քաղաքականապես զուրկ է թուրքական պետության տարածքում որևէ իրավունք ունենալուց, նրանց նկատմամբ ցեղասպանական բոլոր գործողություններն արդարացված են:

Ավելացնելու այլ բան ոչ կա, ոչ էլ անհրաժեշտ է...

Հայկական հարցն ու Հայաստանի անվտանգության համակարգը

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո հայկական երկու պետությունները կրկին կանգնեցին անվտանգության լուրջ ճգնաժամի առջև: Հայաստանի համար մշտական այս խնդիրը հատկապես օրախնդիր դարձավ այն բանից հետո, երբ պատերազմի հետևանքով թշնամու վերահսկողության տակ անցած ընդարձակ տարածքները, որոնք անկախությունից ի վեր մեր անվտանգության համակարգի կարևոր բաղադրյալներից էին, թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից սկսեցին օգտագործվել որպես նոր տարածքներ զավթելու պլացդարմ: Հայ հանրության համար պարզ դարձավ, որ տարիներ շարունակ մեր գիտակցության մեջ ներարկվող այն թեզը, թե իբր Արցախի ազատագրած շրջանները թշնամուն հանձնելուց հետո հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունները խաղաղ զարգացման շրջան կթևակոխեն, բացարձակ կեղծիք ու սուտ էր: Պատերազմի ավարտից անցել է գրեթե մեկուկես տարի, Ադրբեջանը դրա հետևանքով ստացել է իր պահանջած բոլոր տարածքները (ընդ որում՝ հիմնականում առանց զենք կիրառելու), սակայն մինչ օրս շարունակում է նոր դիրքեր և անգամ բնակավայրեր գրավել: Դրան զուգահեռ՝ Թուրքիայի ակտիվությունը մեր տարածաշրջանում աննախադեպ ծավալների է հասել: ԽՍՀՄ փլուզումից հետո Անկարան երբեք այնքան ազատություն չի ունեցել Հարավային Կովկասում, որքան այսօր: Թուրքիայի իշխանությունների՝ տարիներ շարունակ իրականացվող փորձերը՝ ազդելու մեր տարածաշրջանի քաղաքական զարգացումների վրա, մշտապես տարբեր խոչընդոտների են հանդիպել: Դրանց ընդդիմացել են թե՛ Ռուսաստանի, թե՛ ԱՄՆ-ի, թե՛ եվրոպական երկրների իշխանությունները: Վերջիններիս Հարավային Կովկասում հաջողվել է այնպիսի իրավիճակ ստեղծել, որ տարածաշրջանային բոլոր կարևոր խնդիրները քննարկվում էին բացառապես աշխարհաքաղաքական այդ երեք կենտրոնների միջև: Թուրքիայից բացի՝ այդ համակարգ մուտքի իրավունք չուներ նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը: Ընդ որում, եթե Թուրքիայի առջև դրված արգելքի հիմնական գործիքը Հայկական հարցն էր, ապա Իրանը զրկված էր Հարավային Կովկասում ակտիվ դերակատարություն ունենալու հնարավորությունից այն պատճառով, որ դրան դեմ էին Թուրքիայի դաշնակիցներ ԱՄՆ-ն ու Ադրբեջանը: Այսինքն՝ Թուրքիայի՝ իբրև տարածաշրջանային գործոնի չեզոքացումը հանգեցրել էր նաև Իրանի հնարավորությունների սահմանափակման, ինչը, աշխարհաքաղաքական կենտրոնների և տարածաշրջանային երկրների ընկալմամբ, հավասարակշռում էր Թուրքիայի բացակայությունը մեր տարածաշրջանի քաղաքական զարգացումներում:

Սա, իհարկե, ուժերի հավասարակշռման բարդ մեխանիզմ էր, որը ենթակա էր արտաքին բազում ազդեցությունների: Բայց Հարավային Կովկասում ծավալվող բազմաթիվ հակամարտությունների փաստն ու դրանց կարգավորման ուղիների որոնման հարուստ փորձը ի վերջո ստեղծել էին մի մեխանիզմ, որը թույլ էր տալիս Ռուսաստանին, ԱՄՆ-ին ու Եվրոպային որոշակի համագործակցության դիմել մեր տարածաշրջանում և իրենց համար կարևոր խնդիրները լուծել բանակցությունների սեղանի շուրջ: Խոսքը վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ինստիտուտին, որի համանախագահները Արցախյան խնդրի լուծման համատեքստում Հարավային Կովկասում, իսկ իրականում՝ նաև Կասպից և Սև ծովերի ավազաններում, համաձայնեցնում էին իրենց բոլոր գործողությունները:

Անվտանգության խնդիրներ լուծելու տեսանկյունից հայկական պետությունների համար սա բավական արդյունավետ համակարգ էր առնվազն երկու պատճառով. նախ՝ որովհետև Թուրքիան որևէ կերպ չէր կարող ազդել ադրբեջանա-արցախյան հակամարտության ընթացքի վրա, և երկրորդ՝ Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ Հայաստանն ուներ շատ վստահելի և զարգացման մեծ հեռանկարով հարաբերություններ: Իսկ ամենակարևոր հանգամանքն այն էր, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Միացյալ Նահանգներն ու Եվրոպան շահագրգռված էին Թուրքիայի՝ հարակից տարածաշրջաններում աճող հնարավորությունների սահմանափակմամբ: Նրանցից յուրաքանչյուրն իր պատճառներն ուներ: ԱՄՆ-ում վստահ էին, որ թյուրքական պետությունների հետ աշխարհաքաղաքական բևեռ ձևավորելուց հետո Թուրքիան դուրս կգա Արևմուտքի ազդեցության գոտուց և ինքնուրույն ուժեղ գործոն կդառնա: Ռուսաստանը մտահոգված էր Թուրքիայի ակտիվացման պատճառով Հարավային Կովկասը,

իսկ հետագայում նաև Հյուսիսային Կովկասում գտնվող ռուսական որոշ տարածքներ կորցնելու վտանգավոր հեռանկարով: Դե իսկ Եվրոպան լավ էր հասկանում, որ ուժեղ Թուրքիա նշանակում է մեծ սպառնալիք արևելքից, որի դեմ հին աշխարհը պայքարելու ռեսուրս գրեթե չունի:

Ուժերի հավասարակշռման և անվտանգության համակարգի այս ողջ մեխանիզմի անկյունաքարը, ինչպես նշեցինք, Հայկական հարցն էր: Իհարկե, այդ իրողությունը, որպես կանոն, երբեք չէր բարձրաձայնվում, բայց և այնպես տեսանելի էր, որ Հարավային Կովկասում Թուրքիայի ախորժակը սահմանափակելու ուրիշ փաստարկ աշխարհաքաղաքական կենտրոնները չունեին: Նրանք մշտապես մատնացույց էին անում այն փաստը, որ Հայոց ցեղասպանությունը չճանաչած Թուրքիան չի կարող միջնորդ լինել հայ-ադրբեջանական հարաբերություններում: Ավելին՝ Ադրբեջանին օգնություն ցուցաբերելու համար Թուրքիան շարունակում էր թշնամական քաղաքականություն վարել Հայաստանի նկատմամբ՝ փակ պահելով մեր երկրի սահմաններն արևելքում: Էլ չենք խոսում Թուրքիայի՝ Ադրբեջանին տրամադրած քաղաքական, տնտեսական և ռազմական օգնության մասին: Բնական է, որ այդ պայմաններում Ռուսաստանը, ԱՄՆ-ն և ԵՄ-ն շատ հեշտ էին հակադարձում Անկարայի՝ Հարավային Կովկասում որոշակի քաղաքական դերակատարում ստանձնելու բոլոր փորձերին: Նվազագույն պահանջը՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, արագ դրվում էր Թուրքիայի իշխանությունների առջև:

Ավելին՝ Հայոց հարցը եղել է և շարունակում է մնալ Թուրքիայի ակտիվությունը զսպող գործոն նաև այլ տարածաշրջաններում, օրինակ՝ Մերձավոր Արևելքում և ընդհանրապես ողջ Եվրոպայում: Այսպես՝ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հիմնական նախապայմաններից մեկը հենց Հայոց ցեղասպանության ճանաչումն է: Եվ բանն ամենևին այն չէ, որ եվրոպական մայրաքաղաքները տառապում են պատմական արդարությունը վերականգնելու մոլուցքով: Ո՛չ: Պարզապես հավաքական Եվրոպայի մայրաքաղաքը՝ Բրյուսելը, լավ է հասկանում, որ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին ամբողջությամբ կայլափոխի այդ կառույցը և բազում մարտահրավերներ կստեղծի հին աշխարհի համար արդեն ոչ միայն հարակից տարածաշրջաններում, այլև հենց եվրոպական աշխարհամասում: Իսկ Հայոց ցեղասպանությունն այն պատրվակն է, որը թույլ է տալիս եվրոպացիներին հայտարարելու, թե թուրքերը չեն ճանաչում Արևմուտքի հիմնարար արժեքները և դեռ շատ հեռու են քաղաքակիրթ լինելու եվրոպացիների պատկերացումներից:

Հասկանալի է, որ նման իրավիճակում Թուրքիան պետք է ամեն ինչ աներ այդ կապանքներից ազատվելու համար: Թուրքական իշխանությունների՝ երկար տասնամյակների քաղաքականությունը ժխտողականությունն էր: Սակայն մեր Սփյուռքի, իսկ

Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան ռազմական գործակցությունը Կովկասում

հետագայում նաև պետության ջանքերով Հայկական հարցը վերջապես դարձավ այնպիսի գործոն, որը սկսեց Թուրքիայի դեմ գործել անգամ Հայաստանի ու հայության կամքից անկախ: 2008 թ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում Աբդուլա Գյուլի իշխանությունը մեծ հույս ուներ, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելով ու սահմանները բացելով կարող է չեզոքացնել նաև Հայկական հարցի գործոնը, սակայն երբ պարզ դարձավ, որ միջազգային մեծ աղմուկ հանած այդ գործընթացը որևէ կերպ չի ազդելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, ինչպես նաև այդ զսպաշապիկից ազատվելու Անկարայի ցանկության վրա, Թուրքիայի իշխանությունները ետ կանգնեցին Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու՝ իրենց իսկ ստանձնած պարտավորություններից:

Հակառակ Թուրքիայի՝ Հայկական հարցից ձերբազատվելու բոլոր ջանքերին՝ պաշտոնական Երևանը հետզհետե ուժեղացնում էր Հայոց ցեղասպանության՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրա ագրեսիվ քաղաքականությունը զսպելու գործոնը: 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների արդյունքում Թուրքիայի ժխտողականության քաղաքականությունը ջախջախիչ պարտություն կրեց: Նույն թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 69-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունեց Հայաստանի կողմից նախաձեռնված՝ դեկտեմբերի 9-ը Ցեղասպանություն հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր հռչակելու վերաբերյալ բանաձևը: Այդ ամենի շնորհիվ Հայաստանը կարողացավ կարևոր դերակատարում ստանձնել համաշխարհային քաղաքական օրակարգերում. մենք դարձանք մարդկության դեմ իրականացվող հանցագործությունները կանխելու անհրաժեշտությունն արտահայտող հիմնական ուժը: Մերձավոր Արևելքում և հատկապես Սիրիայում այդ ժամանակ ընթացող

Դեպի «խաղաղություն և եղբայրություն»

ցեղասպանական զարգացումների լույսի ներքո սա անասելի մեծ առաքելություն էր, որը, փաստորեն, ողջ միջազգային հանրության կողմից դրվեց հենց հայոց պետության ուսերին: Դրա հետևանքով միջազգային հարաբերություններում Հայաստանը տեղափոխվում էր միանգամայն այլ մակարդակ, որտեղ կարելի էր քաղաքական ճիշտ հաշվարկված քայլերով անվտանգության բավական լուրջ խնդիրներ լուծել մեր ժողովրդի համար: Եվ այդ գործը հաջողությամբ ընթանում էր մինչև 2018 թ. հեղաշրջումը: 2018 թվականից սկսած՝ Հայաստանում և մեր հարևանությամբ ամեն ինչ սկսեց արագ փոխվել: Հայաստանի նոր իշխանությունները մի քանի ամսվա ընթացքում բառացիորեն ոչնչացրին նախորդ տասնամյակների ընթացքում ձևավորված անվտանգության բոլոր համակարգերը, այդ թվում՝ Հայկական հարցի՝ Թուրքիայի ակտիվությունը զսպող գրեթե ողջ պոտենցիալը: Փաշինյանի կառավարությունը դադարեց սպասարկել համահայկական և անվտանգության կարևորություն ունեցող օրակարգերը՝ բոլոր ուժերը կենտրոնացնելով երկրի ներսում սեփական իշխանությունն ամրապնդելու՝ իր համար կարևոր խնդրի ուղղությամբ: Այդ ընթացքում նրանք նույնիսկ հանցավոր համաձայնության եկան Ադրբեջանի իշխանությունների հետ, ինչի հետևանքով թշնամին սեփական առաջնագիծն ուժեղացնելու և հայկական հենակետերի նկատմամբ գերակա դիրքեր զբաղեցնելու հնարավորություն ստացավ: Իսկ այնուհետև՝ 44-օրյա պատերազմի նախաշեմին, պաշտոնական Երևանը ոչինչ չարեց, երբ Թուրքիան ամենաբարձր մակարդակով ինքն իրեն ադրբեջանա-արցախյան հակամարտության կողմ հռչակեց: Այդ պահից սկսած՝ Անկարայի համար պարզ դարձավ, որ Հարավային Կովկաս ներխուժելու լավ հնարավորություն է ստեղծվել իր համար, ինչից և նա օգտվեց 2020 թ. պատերազմի ընթացքում: Հայկական հարցը, սակայն, դրանով չի կորցրել իր կարևորությունը հայկական պետությունների անվտանգության ապահովման համար: Ճիշտ է, այդ գործոնը հիմա թուլացած և գրեթե չեզոքացված է, սակայն ճիշտ քաղաքականության պարագայում այն կրկին կարող է իր ուրույն դերը ստանձնել Հայաստանի և տարածաշրջանի անվտանգության համակարգում: Մանավանդ որ Թուրքիայի ակտիվությունը զսպելու խնդիրը շարունակում է նույնքան կարևոր մնալ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի համար, որքան մինչև 2018-2020 թթ. իրադարձություններն էին: Պարզապես անհրաժեշտ է, որ հայկական պետությունը կրկին սկսի զբաղվել իր ազգային օրակարգերով և դադարեցնի ամեն գնով Թուրքիայի ու Ադրբեջանի հետ խաղաղ ապրելու փորձերը: Իսկ դրա համար Հայաստանում պետք է իշխանություն փոխվի: Միայն այդ պարագայում մեր երկիրը սեփական անվտանգության համակարգերը վերականգնելու նոր հնարավորություն կստանա: ■

ՀՀ արտաքին քաղաքականության որոշ խնդիրները նախապատերազմական շրջանում

Գագիկ Եկմալյան Ս.
Երևանի պետական համալսարան, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

2020 թ. հայ-ադրբեջանական պատերազմը բացահայտեց ՀՀ արտաքին քաղաքականության բացթողումները և պատերազմին նախորդած վերջին երեք տարիների ձախողումները[u]: Հայաստանի Հանրապետության հանդեպ որոշ երկրների վերաբերմունքի ավանդական ընկալումները չարդարացվեցին: Հայամետ դիրքորոշում ունեցող պետությունները մնացին չեզոք, իսկ չեզոքները անգամ ողջունեցին Ադրբեջանի «տարածքային ամբողջականության վերականգնմանն» ուղղված գործողությունները: Այս ամենը վկայում էր ոչ թե ադրբեջանի փայլուն դիվանագիտության, այլ հայկական քաղաքականության ձախողման մասին:

Առավել պարզ լինելու համար թեման կքննարկենք առանձնաբար՝ Իրանի, Չինաստանի և Ռուսաստանի ուղղություններով:

Հայ-իրանական հարաբերությունները միշտ համարվել են բարձր մակարդակի, անգամ ռազմավարական, թեև դա երբեք չի համապատասխանել իրականությանը: 2016 թ. Սկսած նվազել է երկու երկրների միջև եղած ապրանքաշրջանառությունը: Հայ-իրանական երկաթուղու կառուցման ծրագիրն այդպես էլ անորոշ մնաց: 2016 թ. Իրանի նախագահ Հասան Ռոհանին, 2013 թ. նախագահ ընտրվելուց ի վեր, առաջին անգամ պաշտոնական այցով ժամանեց Հայաստան և հանդիպեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, մինչդեռ այդ ընթացքում նա 8 անգամ հանդիպել էր Ադրբեջանի նախագահի հետ[1]: Չնայած դրան՝ նախագահ Ռոհանին Երևանում խոսեց տևական խաղաղության մասին՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղում հակամարտությունը պետք է լուծվի միայն բանակցությունների միջոցով[2]: Իսկ արդեն պատերազմի օրերին նույն Ռոհանին ողջունեց Ադրբեջանի «տարածքային ամբողջականության վերականգնումը»:

2018 թ. հոկտեմբերի 25-ին ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը տարածաշրջանային այցով եղավ Հայաստանում: Իրան-ամերիկյան հարաբերությունները այդ ժամանակ թևակոխել էին լարվածության նոր փուլ, և ամերիկյան ամենաբարձրաստիճան պատվիրակության այցը Հայաստան չէր կարող համապատասխան վերաբերմունքի չարժանանալ հարևան Իրանում[3]: Այցից բառացիորեն մեկ շաբաթ անց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը՝ ՀՀ Ազգային ժողովում, կարծես յուղ լցրեց կրակի վրա: Վարչապետը հայտարարեց, որ վերջերս մի փորձված դիվանագետի հետ հանդիպման ժամանակ իր զրուցակցին հայտնել է, թե Հայաստանի երկու սահմանները փակ են, իսկ մյուս երկու սահմանները՝ Իրանի և Վրաստանի հետ, որոնք բաց են, իրականում կիսաբաց են:

«Հայ-իրանական սահմանը դե ֆակտո ամեն պահի կարող է փակվել՝ ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերությունների և աշխարհաքաղաքական

իրավիճակի պատճառով»: ՀՀ ԱԳՆ պաշտոնակատարը շտապեց շտկել իրավիճակը՝ հայտարարելով, որ վարչապետի հայտարարությունը վերաբերում էր մարտահրավերներին և ոչ մտադրություններին[4]: Կարելի էր ենթադրել, որ «վերջերս փորձված դիվանագետի հետ զրույցը» կարող էր վերաբերվել մեկ շաբաթ առաջ Հայաստան այցելած ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնին: Երբ նշվում էր, որ աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով սահմանը կարող է փակվել, Իրանում դա հնարավոր էր հասկանալ որպես ուղերձ. Իրան-ԱՄՆ առճակատման դեպքում Իրանը կարող է զրկվել Հայաստանով արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունից:

Նախ, Հայաստանի հետ 42 կմ-անոց ճանապարհը «պաշարված ամրոց» Իրանի համար այլընտրանքային ելք է դեպի Եվրոպա՝ Վրաստանի և Սև Ծովի միջոցով: Իրանը նաև ակտիվացրել է իր հարաբերությունները Եվրասիական տնտեսական միության հետ, որի անդամներից ցամաքային սահման ունի միայն Հայաստանի հետ, հետևաբար և ապագա անդամակցության պարագայում այդ սահմանը կարևոր հանգույց կդառնա դեպի ԵԱՏՄ Իրանի արտահանումների և այնտեղից ներկրումների համար: Չնայած կրոնական տարբերություններին, Իրանն ու Հայաստանը բնական դաշնակիցներ են թուրքական էքսպանսիայի առջև, որը միտված է թուրքական աշխարհի միավորմանը և «Մեծ Թուրանի» ստեղծմանը: Բնական դաշնակիցների նպատակն ավելի պարզ է դառնում, երբ հասկանում ենք տարածաշրջանային էներգակիրների պայքարի թիրախները, ուղիները: Թուրքիան, հետևաբար և Արևմուտքը, ցանկանում են Տրանսանատոլիական գազամուղով (TANAP) թուրքմենական գազը հասցնել Եվրոպա, որը եթե չի բացառի, ապա նվազագույնի կհասցնի իրանական գազից կախվածությունը: Բնական դաշնակիցների օգտին կարող է վկայել այն փաստը, որ Ադրբեջանը բավականին խորը հարաբերություններ է կառուցել Իսրայելի հետ, որն Իրանի համար թշնամական պետություն է: Միջազգային իրավունքի մասնագետ,

Եվրասիայի հարցերով ավագ գիտաշխատող դոկտոր Ահմադ Քազեմին, ուսումնասիրելով Արցախյան 44-օրյա պատերազմը, նշում է, որ այն առաջին հերթին հարվածում էր Իրանի շահերին, իսկ պատերազմի սկզբում Թուրքիայի և Ադրբեջանի նպատակն է եղել գրավել հենց Հայաստանն Իրանի հետ կապող սահմանը[5]: Պատահական չէ, որ Իրանը ԱԳ նախարարի, անգամ գերագույն հոգևոր առաջնորդի շուրթերով պատերազմի ժամանակ և դրանից հետո հայտարարեց, որ աշխարհաքաղաքական փոփոխություններ իր սահմանների մոտ թույլ չի տա. դա իրենց կարմիր գիծն է: Այդ նույն հայտարարությունը կրկնվեց մայիսի 12-ին ՀՀ արևելյան սահմաններում ադրբեջանական ագրեսիայից հետո, ինչը հստակ ի ցույց է դնում վերոնշյալ դիրքորոշման լրջությունը[6]:

ԱԺ-ում «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Հայկ Կոնջորյանը, 2019 թ. հունվարին ասել էր, որ Հայաստանը շրջապատված է ավտորիտար Թուրքիայով, Ադրբեջանով և Իրանով, և միայն Վրաստանն է, որը գնում է ժողովրդավարական ճանապարհով: Չնայած նրան, որ ՀՀ ԱԺ պատգամավորի տեսակետը ՀՀ պաշտոնական դիրքորոշումը չէ, այդ հայտարարությունը չէր կարող բացասական ազդեցություն չթողնել Իրանի կառավարող շրջանակների վրա:

2019 թ. սեպտեմբերի 19-ին կառավարության նիստում որոշվեց դեսպանություն բացել Իսրայելում: 1992 թ. Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ ուներ Իսրայելի հետ և ոչ ռեզիդենտ դեսպան, սակայն դեսպանատուն չէր բացել: Իսրայելի հետ հարաբերությունները, հատկապես վերջին տասնամյակում, շատ են կարևորվում Հայաստանի համար: Իսրայելը, համաձայն Stockholm International Peace Research Institute (SIPRI)-ի, 2015-2019 թթ. ընթացքում ապահովել է Ադրբեջանի զենքի ներկրումների 60%-ը[7]: Եվ անհրաժեշտ էր ունենալ դեսպանատուն Իսրայելում զենքի վաճառքի ու Հայաստանի դեմ ուղղված երկկողմ այլ օրակարգերի չեզոքացման համար: Սակայն աշխարհաքաղաքական այն ժամանակահատվածը, որն ընտրվեց դեսպանատան բացման համար, մեղմ ասած, չէր կարող նպաստել այդ մտադրությունների իրականացմանը, և ընդհակառակը, կարող էր սրել հայ-իրանական հարաբերությունները: Իրանում իշխող վարչակազմը Իսրայելի կառավարությանը անվանում է «սիոնիստական ռեժիմ» և դիտարկում նրան որպես թշնամի պետություն: Այդ մոտեցումը չի փոխվում Իրանում նախագահական փոփոխություններից հետո, ինչը թույլ է տալիս դիտարկել այն որպես Իրանի համար կարևորագույն խնդիր[8,9]:

2020 թ. փետրվարին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց Կրոնական ազատությունների միջազգային ալյանսը՝ կրոնական ազատության, խղճի ազատության, հանդուրժողականության պաշտպանության կարգախոսների հիմքով: 2020 թ. հունիսի 13-ին Հայաստանը միացավ այդ ալյանսին՝ դառնալով դրա 29-րդ անդամը, իսկ մինչև այս պահը դաշինքին անդամակցում են 32 երկրներ[10]:

Նախ, շատ կարևոր է, որ աշխարհի գերտերության կարգավիճակը ԱՄՆ-ի հետ վիճարկող Ռուսաստանի ռազմաքաղաքական դաշնակից Հայաստանը հայտնվում է մի կազմակերպությունում, որը ստեղծվել է առաջինի հիմնական հակառակորդի նախաձեռնությամբ: Աշխարհի բազմաթիվ հետազոտողներ գտնում են, որ այդ ալյանսը ԱՄՆ-ն ստեղծել է Ռուսաստանի և հատկապես Չինաստանի դեմ պայքարելու համար:

2020 թ. հունիսի 17-ին ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը, պատասխանելով պատգամավորի հարցին ասաց, որ Հայաստանը միացել է այդ դաշինքին՝ կրոնական խտրականության դեմ պայքարում իր ներդրումն ունենալու նպատակով: Այս հարցը պետք է դիտարկել նաև ցեղասպանությունների կանխարգելման համատեքստում. «Մենք ունենք մեր փոքրամասնությունները, մենք ունենք մեր սփյուռքը և մենք ունենք առավել զգայնություն նաև կրոնական փոքրամասնությունների հանդեպ Մերձավոր Արևելքում: Այս նախաձեռնությունը նաև հնարավորություն է տալիս մեզ աշխատելու մեր բարեկամ երկրների հետ՝ առաջ տանելու ծրագրեր, որոնք նպաստելու են կրոնական փոքրամասնությունների պայմանների բարելավմանը և այդ ուղղությամբ տարբեր ծրագրերի, ու երկխոսության կայացմանը և այդ առնչությամբ տարբեր միջոցառումների իրականացմանը: Մենք ունենք նման ծրագրեր, որոնք կարող ենք իրականացնել՝ համագործակցելով մյուս գործընկերների հետ, և այս հարթակը տալիս է մեզ այդ հնարավորությունը», - ասել է նախարարը[11]:

Ինչ վերաբերում է Չինաստանի հետ հարաբերություններին նա բացառեց որևէ նախաձեռնության մեջ ներգրավվելու հնարավորությունը, որը վնաս կհասցնի Հայաստանի շահերին և միջազգային համագործակցությանը:

Նախարարը նաև ավելացրեց, որ դաշինքը չի նախատեսում համատեղ գործնական որոշումների ընդունում: Դաշինքի կառուցվածքը, ընթացակարգերը չեն նախատեսում քվեարկության մեխանիզմ, յուրաքանչյուր անդամ-պետություն առաջնորդվում է իր ծրագրերով՝ առաջարկություններ ներկայացնելով, դրանց իրագործման համար մեխանիզմներ ձևավորելով:

Սակայն, ուսումնասիրելով դաշինքի հռչակագրի պարտավորությունների 4-րդ կետը, տեսնում ենք, որ՝

Նրա (դաշինքի- Գ.Ե.) անդամները հավատարիմ են դավանանքի կամ համոզմունքների ազատության հետ կապված հարցերի շուրջ արտաքին և ներքին գործունեության համաձայնեցմանը[12]:

Սա նշանակում է, որ առնվազն դավանանքի ազատության հետ կապված հարցերում անդամ պետությունները պետք է ունենան համանման դիրքորոշում, որը որոշակի փուլում կարող է արտահայտվել Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեցող պետությունների, մասնավորապես Չինաստանի դեմ: Իսկ «Ազդեցության պոտենցիալ միջոցներ» բաժնում արդեն նշվում են մի շարք կոլեկտիվ միջոցներ նպատակային գործունեության համար: Այսպես, այդ բաժնի

b կետում նախատեսվում են համատեղ կամ համակարգված դեմարշներ և հանրային դիվանագիտություն,

e կետում՝ մեղավորների նկատմամբ նպատակուղղված պատժամիջոցները անհրաժեշտության դեպքում,

f կետում՝ բազմակողմանի ֆորումների ուղիներով համաձայնեցված գործողություններ (օրինակ՝ համատեղ հայտարարությունների, ՄԱԿ-ի երկրների բանաձևերի և ՄԱԿ-ի մեխանիզմների միջոցով, ինչպիսին է համընդհանուր պարբերական վերանայումը) և դավանանքի կամ համոզմունքների ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին աջակցություն ցուցաբերելը:

2020 թ. փետրվարի 5-ին, դաշինքի ստեղծման միջոցառման ժամանակ ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն ընդգծեց. «նման համատեղ ջանքերի (կառավարությունների ներկայացուցիչների համախմբումը- Գ.Ե.) անընդհատ աճող անհրաժեշտությունը՝ թվարկելով վերջին տարիներին կրոնի կամ համոզմունքների հիման վրա բռնության վատթարագույն ակտերից մի քանիսը, այդ թվում՝ «ահաբեկիչներին և բռնի ծայրահեղականներին, որոնք հարձակվում են կրոնական փոքրամասնությունների վրա, լինի դա Իրաքում՝ եզդիները, Պակիստանում՝ հնդիկները, Նիգերիայի հյուսիս-արևելքում՝ քրիստոնյաները կամ Բիրմայում՝ մուսուլմանները և Չինաստանի Կոմունիստական կուսակցության թշնամանքը բոլոր դավանանքների նկատմամբ[13]»:

Դեռ 2020 թ. հունվարին պետքարտուղարը այցելեց Ղազախստան: Ղազախստանը Խորհրդային Միության փլուզումից հետո գտնվում էր ԱՄՆ-ի հիմնական աշխարհաքաղաքական հակառակորդների՝ Ռուսաստանի և Չինաստանի շահերի գոտում: Երկրում ռազմական առումով ազդեցություն ունեցող և որոշումների կայացման վրա ազդող պետությունը Ռուսաստանն է, ում հետ Ղազախստանը դաշնակցում է ՀԱՊԿ-ի շրջանակներում: Վերջին տասնամյակում երկրում իր տնտեսական ազդեցությունն էր ավելացնում Չինաստանը: Եվրասիական հաղորդակցությունների կենտրոնի տնօրեն Ա. Պիլկոյի կարծիքով՝ ԱՄՆ-ն այդ ժամանակ որոշեց դիտարկել Ղազախստանի հետ ավելի սերտ հարաբերությունների հաստատումը և հասկանալ նոր նախագահ Տոկաևի քաղաքականությունը:

Այնուհետև Պետդեպարտամենտը գոհունակությամբ էր խոսել ԱՄՆ-ի և Ղազախստանի միջև աճող առևտրային կապերից, ինչպես նաև նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևի «բարեփոխումների հավակնոտ ծրագրից՝ հավելելով, որ հանդիպման ընթացքում քննարկվել են նաև հարևան Չինաստանի Սինցզյանի «մարդու իրավունքների ճգնաժամը[14]» և Աֆղանստանում «տևական խաղաղությունը»:

Իսկ արդեն փետրվարին ալյանսի հավաքի բացման ժամանակ Պոմպեոն նշեց, որ Կենտրոնական Ասիա կատարած իր այցի ժամանակ նա Ղազախստանում հանդիպել էր Սինցզյանում Չինաստանի Կոմունիստական կուսակցության կողմից ձերբակալված էթնիկ ղազախների ընտանիքների հետ[15]: Ըստ երևույթին, ԱՄՆ-ն փորձում էր այդ կրոնական հողի վրա հակաչինական վեկտոր հաղորդել Ղազախստանի քաղաքականությանը, ապա միություն ստեղծել, ինչն իրականություն դարձավ մեկ ամիս անց:

Պոմպեոն շատ կոշտ շեշտադրումներով է խոսել Չինաստանի մասին. «Եվ մենք դատապարտում ենք Չինաստանի Կոմունիստական կուսակցության թշնամական վերաբերմունքը բոլոր դավանանքների նկատմամբ: Մենք գիտենք, որ ձեզնից ոմանք խիզախորեն դիմադրում էին Չինաստանի ճնշմանը՝ երբ համաձայնում էին դառնալ այդ դաշինքի մի մասը, և մենք շնորհակալ ենք դրա համար»[16]: Պետքարտուղարի խոսքից հասկանալի է դառնում, որ Չինաստանը փորձել է ընդդիմանալ առանձին երկրների միանալուն այդ դաշինքին:

Դեռևս 2019 թ. հուլիսին Չինաստանի ԱԳՆ խոսնակ Գեն Շուանը, պատասխանելով լրագրողի հարցին, նշել էր, որ բոլոր չինացիները դեմ են հանդես եկել ԱՄՆ-ի գործողություններին, որոնք կապված են Չինաստանի կրոնական քաղաքականության և Չինաստանում կրոնական համոզմունքների ազատության մասին զրպարտության հետ: «Սինցզյանի շուրջ հարյուր մտավորականներ և կրոնական շրջանակներ մոտ օրերս ստորագրել և ուղերձ են հղել ԱՄՆ պետական քարտուղար Մայք Պոմպեոյին՝ դրանում մեծ դժգոհություն և վճռական բողոք հայտնելով Սինցզյանի վերաբերյալ նրա անպատասխանատու դիտողությունների կապակցությամբ»:

Ինչ վերաբերում է ամերիկյան կողմից դավանանքի ազատության համար, այսպես կոչված, միջազգային դաշինքի ստեղծմանը, ապա դա ոչ այլ ինչ է, քան գործիք, որի միջոցով ԱՄՆ-ն դավանանքի ազատության պատրվակով առաջ է մղում արժեքների մասին սեփական պատկերացումները և միջամտություն է իրականացնում այլ երկրների ներքին գործերին: Դա անխուսափելիորեն կբախվի աշխարհի շատ երկրների առարկությանը: «Մենք կոչ ենք անում ԱՄՆ-ին հարգելու փաստերը, հրաժարվել նախապաշարմունքներից, դադարեցնել կրոնական հարցերի քաղաքականացումը և միջամտությունն այլ երկրների ներքին գործերին», - ասել է Գեն Շուանը[17]:

Չինացի բարձրաստիճան դիվանագետի խոսքերը հաստատում են մեր դիտարկումը դաշինքից եկող սպառնալիքի հարցում չինական կողմի ընկալման վերաբերյալ: Դաշինքի ստեղծման պահին մեր պետության ղեկավարները նախապես գիտեին դրա վերաբերյալ չինական կողմի դիրքորոշումը, որն արտահայտված էր խիստ որոշակի:

Միջազգային ալյանսի բացման ժամանակ ԱՄՆ պետքարտուղարը նշեց նաև, որ ինքը հանդիպել է Ուկրաինայի ուղղափառ եկեղեցու առաջնորդների հետ, որոնք պայքարում են ազատ ժամերգության համար՝ առանց ռուսական կառավարության միջամտության[18]: Ռուսական լրատվամիջոցները և փորձագիտական շրջանակները սա դիտարկեցին որպես իրենց երկրի դեմ մտածված նոր քայլ: Մինչ այդ վեճ էր առաջացել Ռուսաստանի և Ուկրաինայի միջև՝ կրոնական հողի վրա: ԱՄՆ-ի աջակցությամբ ստեղծվել էր Ուկրաինայի Ուղղափառ եկեղեցին՝ հունական տիեզերական պատրիարքի գերակայությամբ, իսկ Զելենսկին և Կիևի պատրիարք Եպիփանոսը շնորհակալություն էին հայտնել Պոմպեոյին եկեղեցու ինքնուրույնությանն ուղղված քայլերին աջակցելու համար:

«Ակնհայտ է, որ այդ դաշինքը ստեղծվել է առաջին

հերթին ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական նպատակների իրագործման համար՝ ՌԴ-ի հետ դիմակայությունում: Ցավոք, այս գործընթացում կրոնի ազատությունը միայն մանրադրամ է»[19]: Այսպիսի կարծիք է հայտնել կրոնական մեկնաբան Ալեքսեյ Սմիրնովը:

Կարելի է եզրակացնել, որ ամեն պարագայում Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի և ՀՀ-ի համար մեծ կարևորություն ներկայացնող երկրի՝ Չինաստանի ընկալումները այս դաշինքի նկատմամբ դրական չեն և Հայաստանի մուտքը դաշինք չկշռադատված կամ սխալ հաշվարկված քայլ էր, որը կարող էր ունենալ (միգուցե արդեն ունեցել է) բացասական հետևանքներ այդ երկրների հետ հարաբերությունների վրա:

Մինչ պլանսի ստեղծումը, 2019 թ. մայիսին, Հայաստանն ու Չինաստանը փոխադարձաբար վերացրել էին մուտքի արտոնագրի պահանջը, իսկ ՀՀ վարչապետը կառավարության նիստի ժամանակ հայտարարել էր, որ «Հայաստանը հետաքրքրված է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրով՝ Չինաստանի ղեկավարությունը նույնպես հետաքրքրված է, որ Հայաստանն այս ծրագրին հնարավորինս ինտենսիվ մասնակցի: Այդ առումով ունենք կոնկրետ պայմանավորվածություններ: Հիմա ժամանակն է այդ կոնկրետ պայմանավորվածությունների իրագործման մասին մտածել, Չինաստանի ղեկավարությունն ամենաբարձր մակարդակով հավաստիացրել է, որ իրենք շահագրգռված են չինական շուկան հայկական ապրանքների համար հասանելի դարձնելու հարցում, այդ թվում՝ գինիների, ալկոհոլային խմիչքների, սննդի և այլ ապրանքների»[20]:

Ահա այսպիսի պայմաններում Կրոնական ազատությունների միջազգային պլանսին անդամակցումով Հայաստանն անվստահելի գործընկեր դարձավ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար, որի հետ հարաբերությունների վատթարացումը (առնվազն մակարդակի իջեցումը) առավել բարենպաստ պայմաններ կարող էին հանդիսանալ Ադրբեջանի ռազմաքաղաքական նպատակների իրագործման համար:

2018 թվականի հուլիսի 26-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովին մեղադրանք առաջադրվեց ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ նա այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ տապալել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը[21]: Յուրի Խաչատուրովն այդ ժամանակ արդեն մեկ տարի զբաղեցնում էր ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը: Իսկ արդեն 2018 թ. նոյեմբերի 18-ին հայտնի դարձավ, որ Խաչատուրովն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, քանի որ նրան նշանակող երկիրը՝ Հայաստանը, դրանից առաջ սկսել էր նրա հետկանչման գործընթացը: Թեև այս գործընթացները կրում էին իրավական բնույթ և առնչվում էին ՀԱՊԿ ներքին հարցերին, այն ստացավ բավականին մեծ հնչեղություն, և ըստ որոշ աղբյուրների, վտանգի տակ դրեց միջազգային այդ կառույցի հեղինակությունը:

Կրեմլի հատուկ դժգոհությունն է առաջացրել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի դատավարությունը: Այս մասին «Կոմերսանտին» պատմել են պետական կառույցների աղբյուրները[22]:

Ռուսաստանում Հայաստանի ներկայիս վարչակազմի գործողություններն անվանել են հարված՝ ռազմական դաշինքի իմիջին:

Այս խնդիրը զրկեց Հայաստանին հետխորհրդային տարածքի երկու վերպետական կառույցների, այն է ՀԱՊԿ և ԵՏՀ[Բ], միաժամանակյա ղեկավարման բացառիկ հնարավորությունից:

2019 թ. հունիսին, երբ ԵԽԽՎ-ում քվեարկության դրվեց Ռուսաստանի պատգամավորներին ձայնի իրավունքը վերադարձնելու մասին բանաձևը, Հայաստանը միանշանակորեն չարձագանքեց այդ քվեարկությանը: Պատգամավորներից մեկը դեմ էր քվեարկել բանաձևին, ևս մեկը՝ ձեռնպահ: Հետագայում դա ներկայացվեց որպես տեխնիկական խնդիր[23]:

Վերոնշյալ խնդիրները իհարկե չէին կարող լինել պատերազմի սկսման հիմնական պատճառները, որոնք ավելի խորն են ու գլոբալ, սակայն դրանք հավանականորեն արագացրին հետագա գործողությունները՝ ամբողջացնելով այն բարենպաստ իրավիճակը, որն իր օգտին ծառայեցրեց Ադրբեջանը: ■

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://www.aiisa.am/ourexperts/comment/901 (21.05.2021).
2. https://ru.armeniasputnik.am/politics/20170806/sargsyan-i-rouhani.html (21.05.2021).
3. https://www.seco.am/information/press_releases/83?lang=hy (01.08.2021).
4. https://armenpress.am/arm/news/953182 (01.08.2021).
5. http://www.aniarc.am/2021/08/04/what-did-britain-gain-04-08-2021/ (04.08.2021).
6. https://azeritimes.com/2021/06/18/irans-involvement-in-the-armenian-azerbaijani-border-crisis/ (04.08.2021).
7. https://www.sipri.org/sites/default/files/2020-03/fs_2003_at_2019.pdf (01.08.2021).
8. https://www.theguardian.com/world/2012/aug/17/iran-israel-zionist-insult-humanity (01.08.2021).
9. https://southfront.org/iranian-declares-support-to-anyone-fighting-israeli-regime/ (01.08.2021).
10. https://www.state.gov/international-religious-freedom-or-belief-alliance/ (01.08.2021).
11. https://www.mfa.am/hy/press-conference/2020/06/17/na_int/10313 (01.08.2021).
12. Declaration of Principles for the International Religious Freedom Alliance.
13. https://www.forbes.com//us-launches-the-first-ever-international-religious-freedom-alliance/ (01.08.2021).
14. https://twitter.com/statedeptspox/status/pompeo-visit-kazakhstan-geopolitical-reasons%2F (01.08.2021).
15. https://state.gov/secretary-pompeo-at-the-international-religious-freedom-alliance/index.html (01.08.2021).
16. Ibid.
17. https://news.rambler.ru/usa/kitay-prizval-ssha-otkazatsya-ot-politizatsii-religioznyh-voprosov/ (01.08.2021).
18. https://state.gov/secretary-pompeo-at-the-international-religious-freedom-alliance/index.html (01.08.2021).
19. https://strana.ua/articles/analysis/aljans-relihioznykh-svobod-i-pochemu-tuda-voshla-ukraina-.html (01.08.2021).
20. https://newsarmenia.am/am/news/armenia/Chinastan-aranc-vizayi-/ (01.08.2021).
21. https://www.ccc.am/hy/1428493746/3/5928 (19.02.2022թ.)
22. https://m.lenta.ru/news/2018/08/02/armenia/ (19.02.2022թ.)
23. https://www.google.com/amp/s/ru.armeniasputnik.am/amp/20190625/Glava-delegatsii-Armenii-v-PASE-realno-ne-golosoval-protiv-Rossii—kommentariy-19318835.html (19.02.2022թ.)

Ծանոթագրություն

Ա- Հոդվածում կխոսենք միայն վերջին երեք տարիների՝ այն եռահեղափոխական շրջանի արտաքաղաքական որոշ խնդիրների մասին, իսկ դրանից առաջ մինչև անկախ պետության ստեղծումը եղած բացթողումներն ու ձախողումները առանձին աշխատության թեմա են:

Բ- ԵՏՀ կոլեգիայի նախագահի պաշտոնը 2016-2020թթ. զբաղեցրել է Տիգրան Սարգսյանը:

Արցախը ԱՄՆ ուշադրության կենտրոնում

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Միացյալ Նահանգները արցախյան հակամարտությունը մշտապես պահել է իր ուշադրության կենտրոնում, քանի որ նախ՝ ԱՄՆ-ն ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահ երկրներից մեկն է, և երկրորդ՝ որպես գլոբալ գերտերություն՝ ԱՄՆ-ն չի կարող անմասն մնալ՝ չարձագանքելով աշխարհի ցանկացած տարածքում իրավիճակի ապակայունացմանը և անվտանգային մարտահրավերների առաջացմանը: 2020 թ. արցախյան պատերազմի ժամանակ էլ ԱՄՆ արձագանքը Արցախում ռազմական գործողությունների բռնկմանը սպասեցնել չտվեց: Այնուամենայնիվ, վերլուծելով ԱՄՆ արձագանքը արցախյան վերջին պատերազմին, պետք է միևնույն ժամանակ հաշվի առնել մի քանի գործոն: Առաջին հերթին՝ Հարավային Կովկասի տարածաշրջանը աշխարհագրորեն հեռու է ԱՄՆ-ից: Տարածաշրջանի տնտեսական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ այդքան ակտիվ չեն, քաղաքական առումով Հարավային Կովկասը եղել է Ռուսաստանի ավանդական ազդեցության գոտի... Բայց և այնպես, կան գործոններ, որոնք ԱՄՆ-ին ստիպում են ներգրավվել հակամարտության կայունացման գործընթացում, որոնցից են այլ տարածաշրջանային գերտերությունների ներգրավվածությունը, ԱՄՆ ցանկությունը՝ շարունակելու ազդեցիկ գործոն լինել Իրանի հարևանությամբ և Ռուսաստանի ուժեղ ազդեցության տակ գտնվող տարածաշրջանում, Կասպից ծովի ածխաջրածնային պաշարները, ԱՄՆ-ում ազդեցիկ հայկական համայնքը: Ուստի տարբեր գործոնների ազդեցության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Միացյալ Նահանգների շահերից չի բխում տարածաշրջանի ապակայունացումը, ինչի մասին են վկայում 1997 թվականից ԱՄՆ ներգրավվածությունը Մինսկի խմբի եռանախագահության կազմում և նրա ջանքերը հակամարտության լուծման տարբերակներ առաջարկելիս: Այնուամենայնիվ, պետք է շեշտել, որ արցախյան խնդիրը Միացյալ Նահանգների համար այժմ առաջնահերթություն չէ, և այդ է պատճառը, որ վերջինս հակամարտության լուծման առաջնորդություն չի փորձում ստանձնել՝ այդպիսով չփորձելով հակակշռել Ռուսաստանի առանձին նախաձեռնություններին, քանի որ ընդունում է Ռուսաստանի հարաբերականորեն ավելի մեծ ազդեցությունը տարածաշրջանի երկրների նկատմամբ:

Ինչպես մյուս հակամարտությունների պարագայում, արցախյան 2020 թ. մոտալուտ պատերազմի մասին նախազգուշացումը եկավ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հայտարարություններից: Առաջին նախազգուշացումը հնչեց 2020 թ. սեպտեմբերի 25-ին՝ պատերազմի բռնկվելուց երկու օր առաջ, երբ ԱՄՆ դեսպանատունը զգուշացնում էր Հայաստանում գտնվող ԱՄՆ քաղաքացիներին խուսափել ճամփորդություններից Ադրբեջանի հետ սահմանակից շրջաններ և չճամփորդել «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջան»[1]: Նմանատիպ հայտարարություններով ԱՄՆ դեսպանատունը հանդես էր եկել նաև Տավուշում տեղի ունեցած ռազմական բախումների նախաշեմին, սակայն սեպտեմբերի 25-ի հայտարարությունը առանձնանում էր նրանով, որ կար հստակ հորդոր՝ չայցելել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջան: Նմանատիպ նախազգուշական հորդորով Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը հանդես եկավ նաև սեպտեմբերի 27-ին[2]:

Թրամփի վարչակազմի արձագանքը արցախյան պատերազմին

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից առաջին թռուցիկ անդրադարձը 2020 թ. արցախյան պատերազմին եղավ հենց պատերազմի առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին՝ իր մամուլի ճեպազրույցի ժամանակ, երբ ներկա գտնվողներից մեկի կողմից հարց հնչեց Արցախում պատերազմի բռնկման և քաղաքացիական անձանց շրջանում զոհերի մասին: Նախագահը մասնավորապես նշեց. «Մենք շատ ուշադիր հետևում ենք իրավիճակին: Մենք շատ լավ հարաբերություններ ունենք այդ տարածաշրջանում: Պետք է տեսնել, թե արդյոք կարող ենք դադարեցնել այն [պատերազմը]»[3]: Նույն օրը արձագանք եղավ նաև Պետդեպարտամենտից, մասնավորապես Պետդեպարտամենտի խոսնակ Մորգան Օրտագուսը հայտարարեց, որ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանը զանգահարել է Ադրբեջանի և Հայաստանի արտգործնախարարներին՝ «կոչ անելով երկու կողմերին անհապաղ դադարեցնելու ռազմական գործողությունները»[4]:

Արցախյան պատերազմը համընկավ ԱՄՆ-ում ընթացող նախագահական ընտրությունների քարոզարշավի հետ: Բնականաբար, ԱՄՆ-ում մեծ թվով հայ ընտրողների առկայության հանգամանքը, որոնք անհանգստացած էին Արցախում սկսված պատերազմով, ստիպեց ԱՄՆ նախագահի թեկ-

նածուներին պարբերաբար անդրադառնալ այս հարցին:

Նախագահ Թրամփը հոկտեմբերի 18-ին՝ Նևադայի Կարսոն Սիթիում իր հանրահավաքի ժամանակ, անդրադարձ կատարեց հայերին՝ օգտագործելով արցախյան պատերազմը նախընտրական շահերից ելնելով: Այնուամենայնիվ, անդրադարձը հուզական մակարդակում էր և ունեցավ պարզապես սիմվոլիկ բնույթ: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մասնավորապես հայտարարեց. «Հայերը լավ մարդիկ են: Նրանք նաև լավ գործարարներ են, գիտե՞ք… Ճանապարհին այնքան շատ հայեր կային՝ գեղեցիկ դրոշներով: Հիմա ինչ-որ բանի շուրջ ենք աշխատում: Ես ահաբեկիչներին եմ պահում... Դուք մեծ ոգի ունեք ձեր երկրում, պետք է ասեմ ձեզ: Հայաստանից եկած մարդիկ մեծ ոգի ունեն իրենց երկրի նկատմամբ»[5]:

Դեմոկրատական կուսակցության նախագահի թեկնածու Բայդենի նախընտրական շտաբը հանդես եկավ հայտարարություններով: Իր առաջին հայտարարության մեջ Բայդենը նշել էր, որ Թրամփի վարչակազմը պետք է ներգրավվի խնդրի խաղաղ կարգավորման դիվանագիտական գործընթացում ԵԱՀԿ Մինսկի համանախագահների հետ, ինչպես նաև շեշտել, որ երրորդ երկրները պետք է զերծ մնան ներգրավվելուց, որպեսզի այն չվերաճի տարածաշրջանային ավելի մեծ հակամարտության[6]: Մեկ այլ հայտարարությամբ Ջո Բայդենը կոչ արեց ԱՄՆ-ին «կասեցնելու ադրբեջանական զորքերի առաջխաղացումը Լեռնային Ղարաբաղում», և, որ առավել կարևոր է, Բայդենը նշեց, որ ԱՄՆ վարչակազմը պետք է ամբողջությամբ կիրառի, այլ ոչ թե շրջանցի «Ազատության աջակցության ակտի» 907-րդ բանաձևը՝ դադարեցնելու համար ռազմամթերքի հոսքը Ադրբեջան, իսկ Թուրքիային կոչ արեց չսրելու հակամարտությունը վարձկանների ներգրավմամբ[7]:

Մի քանի օր անց օվալաձև գրասենյակում հարց ու պատասխանի ժամանակ նախագահ Թրամփի անդրադարձը արցախյան պատերազմին կրկին հստակ չէր և կրկին ծառայեցվեց իր նախընտրական քարոզարշավին: Վերջինս կրկին անդրադարձավ հայերի լավ հատկանիշներին՝ նշելով, որ «նրանք հիանալի մարդիկ են, և մենք [ԱՄՆ-ն] պատրաստվում ենք օգնելու նրանց»[8]: Չնայած այն ժամանակ շրջանառվող լուրերին, որ պետք է տեղի ունենա Թրամփ-Փաշինյան հեռախոսազրույցը, այն այդպես էլ տեղի չունեցավ: Փոխարենը հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ռոբերտ Օ'Բրայենի հետ[9]: Իսկ հոկտեմբերի 5-ին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանը հեռախոսազրույց ունեցավ ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ[10]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թրամփը այդպես էլ չհստակեցրեց, թե ինչպիսի օգնության մասին էր խոսքը՝ մնում է ենթադրել, որ օգնություն ասելով նախագահը նկատի ուներ ԱՄՆ-ի կողմից միջնորդված հումանիտար հրադադարը, որն ուժի մեջ մտավ տեղական ժամանակով հոկտեմբերի 26-ի առավոտյան 08:00-ին: Պետդեպարտամենտի հայտարարության մեջ նշվում էր, որ «ԱՄՆ-ն նպաստեց կողմերի և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջև բուռն բանակցություններին՝ Հայաստանին ու Ադրբեջանին մոտեցնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծմանը»[11]:

Հումանիտար հրադադարի հաստատման օրը՝ հոկտեմբերի 26-ին, նախագահ Թրամփին հարց ուղղվեց, թե արդյոք «հրադադարը դեռևս պահպանվո՞ւմ է»: Ի պատասխան՝ նախագահը պնդեց, որ «այն պահպանվում է», թեև ՀՀ պաշտպանության նախարարության մամլո խոսնակի հայտարարությամբ հրադադարը խախտվել էր ադրբեջանական կողմից դրա՝ ուժի մեջ մտնելուց 45 րոպե անց:

Հաջորդ օրը նախագահ Թրամփին ուղղվեց հարց, թե արդյոք նա «հիասթափվա՞ծ չէ Հայաստանից և Ադրբեջանից», քանի որ հրադադարը տապալվել էր: Ի պատասխան՝ Թրամփը նշել էր, որ «հիասթափված է դա տեսնելով», բայց և այնպես, դա մի երևույթ է, որ երկու երկրների միջև երկար տարիներ դրսևորվում է[12]: Այսպիսով, չնայած ԱՄՆ ջանքերին, մասնավորապես՝ պետքարտուղար Պոմպեոյի՝ հոկտեմբերի 23-ին Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հետ ունեցած առանձին հանդիպում-քննարկումներին, ԱՄՆ-ի կողմից միջնորդված հումանիտար հրադադարը տապալվեց[13]: Վաշինգտոնում գտնվելու ժամանակ, բացի պետքարտուղար Պոմպեոյի հետ հանդիպումից, ՀՀ ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի՝ եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Ֆիլիպ Ռիքերի[14], այնուհետև՝ ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ռոբերտ Օ'Բրայենի հետ[15]:

Թրամփի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից նույնպես եղել են արձագանքներ պատերազմի բռնկման շուրջ: Պետքարտուղար Մայք Պոմպեոյի և Հունաստանի արտգործնախարարի սեպտեմբերի 29-ի համատեղ հայտարարության մեջ ԱՄՆ պետքարտուղարը անդրադարձել է արցախյան պատերազմին՝ նշելով, որ «երկու կողմերը պետք է դադարեցնեն բռնությունը և աշխատեն Մինսկի խմբի համանախագահների հետ՝ հնարավորինս արագ վերադառնալու առարկայական բանակցություններին»[16]:

Հատուկ հիշատակության է արժանի պետքարտուղարի՝ արցախյան հակամարտության վերաբերյալ այն հայտարարությունը, որում նա հույս էր հայտնում, որ «հայերը ի վիճակի կլինեն իրենց պաշտպանելու այն ամենից, ինչ Ադրբեջանն է անում….»[17]: Իսկ «Fox News»-ին տված հարցազրույցներից մեկի ժամանակ պետքարտուղար Պոմպեոն շեշտել է, որ ԱՄՆ-ն «չի խրախուսում (հակամարտության) միջազգայնացումը: Մենք կարծում ենք, որ արտաքին ուժերը չպետք է միջամտեն»[18]:

Պետքարտուղար Պոմպեոն իր ճեպազրույցների ժամանակ անդրադարձել է նաև Թուրքիայի գործոնին

և վարձկան ահաբեկիչների ներգրավվածությանը արցախյան հակամարտությանը՝ հայտնելով, որ ԱՄՆ-ն «ականատես է եղել, թե ինչպես է Թուրքիան օժանդակում Ադրբեջանին»: Միացյալ Նահանգները հորդորել է բոլոր միջազգային դերակատարներին «դուրս մնալ տարածաշրջանից, չսրել իրավիճակը»: Նրա խոսքերով՝ «որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ Միացյալ Նահանգները շարունակելու է օգնել Ադրբեջանին և Հայաստանին հասնելու իրենց հակամարտության խաղաղ և վերջնական կարգավորմանը»[19]: Ինչ վերաբերում է Թուրքիայի կողմից Ադրբեջան բերված վարձկան ահաբեկիչներին, պետքարտուղար Պոմպեոն հոկտեմբերի 2-ին հույս էր հայտնել, որ շուտով կպարզվեն, որ այդ զեկույցները «չեն համապատասխանում իրականությանը»[20]:

Ըստ էության, հակամարտությունը դադարեցնելու եղանակի վերաբերյալ ԱՄՆ տեսակետի հակիրճ պատկերը կարելի է ստանալ հենց պետքարտուղար Պոմպեոյի՝ հոկտեմբերի 21-ի մամլո ասուլիսի ժամանակ արած դիտարկումներով, համաձայն որոնց՝ ԱՄՆ «տեսակետը [հակամարտության վերաբերյալ], ինչպես գրեթե բոլոր եվրոպական երկրների տեսակետը, շարունակում է մնալ կրակի դադարեցումը, որն առաջ շարժվելու ճիշտ ուղին է: Ասացեք նրանց, որ դեէսկալացնեն հակամարտությունը, որ որևէ երկիր չմիջամտի, չբորբոքի այս հակամարտությունը, զենքեր, աջակցություն չտրամադրի, և հենց այդ ժամանակ հնարավոր կլինի հասնել դիվանագիտական լուծման, որն ընդունելի կլինի բոլորի համար»[21]:

Արցախյան պատերազմի ընթացքում և դրանից հետո ԱՄՆ իշխանությունների կողմից բազմիցս հնչել են կոչեր՝ հակամարտությունը կարգավորելու Մինսկի գործընթացի շրջանակներում, քանի որ դա այն ինստիտուտն է, որը զբաղվում է արցախյան հակամարտությամբ՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համանախագահության ներքո[22]: Արցախյան պատերազմի դադարեցումից և եռակողմ հայտարարության ստորագրումից հետո անգամ, երբ Ռուսաստանը ստանձնեց նախաձեռնողականությունը և նրա դերը (թե՛ որպես առանձին երկիր և թե՛ որպես Մինսկի խմբի համանախագահ երկիր) մեծացավ, ԱՄՆ-ն շարունակեց հավատարիմ մնալ Մինսկի եռակողմ համանախագահության ձևաչափին՝ շեշտելով, որ ԱՄՆ-ն, «ինչպես և ֆրանսիացիները, նվիրված է Մինսկի խմբի համանախագահությանը և գործընթացին…. [ԱՄՆ-ն] դիտարկում է այն ինստիտուտներն ու կառույցները, որոնք [ԱՄՆ-ն] կարող է օգտագործել ԵԱՀԿ գործընթացի շրջանակներում»[23]: Սա վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ն, լինելով Մինսկի խմբի երեք համանախագահ երկրներից մեկը, այս ինստիտուցիոնալ հարթակը շարունակում է դիտարկել որպես հակամարտության կարգավորման հիմնական կարևոր մեխանիզմ: Պատահական չէ նաև, որ Արցախում ռազմական գործողությունների դադարեցման կապակցությամբ

ԱՄՆ դեսպանատունը Հայաստանում

ԱՄՆ պետդեպարտամենտի հայտարարության մեջ առանցքային է հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի դերը: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Միացյալ Նահանգները ողջունում է ակտիվ ռազմական գործողությունների դադարեցումը Հայաստանի և Ադրբեջանի միջև…. Մենք կոչ ենք անում կողմերին հնարավորինս արագ վերսկսելու համագործակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ…. Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր՝ Միացյալ Նահանգները շարունակում է լիովին ներգրավված լինել այդ աշխատանքներում»[24]:

ԱՄՆ ներգրավվածությունը Բայդենի վարչակազմի օրոք

Բայդենի վարչակազմի օրոք ԱՄՆ-ի հետ շփումներում արցախյան հակամարտության վերջնական կարգավորումը ևս եղել է շփումների կարևորագույն թեմաներից: Վերջնական կարգավորման հարթակում ԱՄՆ-ն՝ որպես Մինսկի խմբի համանախագահ երկիր, հաճախ շեշտադրել է այս ձևաչափով բանակցությունների շարունակումը՝ գլտնելով, որ արցախյան հակամարտությունը դեռևս լուծված չէ: Մյուս կողմից՝ ԱՄՆ պետդեպարտամենտը ադրբեջանական կողմի սադրիչ քայլերի և ՀՀ տարածք ներթափանցման առնչությամբ մի քանի անգամ հանդես է եկել հայտարարություններով: Այդուհանդերձ, դժվար է ասել, որ Բայդենի վարչակազմի համար արցախյան հակամարտության կարգավորումը առաջնահերթությունների թվում է:

Բայդենի վարչակազմի կառավարման մեկ տարվա ընթացքում բարձր մակարդակով հանդիպումներ և հեռախոսազրույցներ ՀՀ պաշտոնյաների հետ գրեթե չեն եղել: ՀՀ վարչապետի առաջին հեռախոսազրույցը Բայդենի վարչակազմի անդամների հետ եղել է 2021 թ. մարտի 3-ին: Վարչապետը խոսել է ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենի հետ՝ շնորհավորելով վերջինիս պաշտոնը ստանձնելու կապակցությամբ[25]: Զրույցի ընթացքում պետքարտուղարը ողջունել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատև քաղաքական կարգավորման հասնելու ջանքերը[26]: Վարչապետի հաջորդ հեռախոսազրույցը եղել է մայիսի 27-ին

ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ՝ կապված՝ ՀՀ տարածք Ադրբեջանի ներխուժելու հետ: Նույն օրը Սալիվանը զրույց էր ունեցել նաև Իլհամ Ալիևի հետ: Ըստ Սպիտակ տան տարածած տեղեկատվության՝ Սալիվանը փոխանցել էր ԱՄՆ հանձնառությունը՝ հասնելու տարածաշրջանային հաշտեցման «երկկողմ ներգրավմամբ և որպես Մինսկի խմբի համանախագահ»[27]: Ադրբեջանի կողմից ՀՀ տարածք ներխուժման վերաբերյալ ԱՄՆ դիրքորոշման մասին առավել վաղ՝ մայիսի 14-ին, խոսել էր ԱՄՆ պետդեպարտամենտի փոխխոսնակ Ջալինա Փորթերը՝ նշելով, որ ԱՄՆ-ն ակնկալում է, որ «Ադրբեջանը անհապաղ ետ կքաշի իր ուժերը և կդադարեցնի հետագա սադրանքները»[28]:

ՀՀ վարչապետի հաջորդ հեռախոսազրույցը պետքարտուղար Բլինկենի հետ տեղի ունեցավ հուլիսի 13-ին, որի ընթացքում պետքարտուղարն ընդգծեց «ԱՄՆ-ի աջակցությունը Մինսկի խմբի համանախագահությամբ իրականացվող գործընթացին» և կոչ արեց Հայաստանին «կառուցողականորեն ներգրավվելու ԵԱՀԿ շրջանակներում»[29]: 2021 թ. ավարտին ԱՄՆ-ի հետ վարչապետի վերջին շփումը եղավ նոյեմբերի 3-ին ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Էրիկա Օլսոնի հետ հանդիպումը, որի ընթացքում վերջինս հայտնեց «ԱՄՆ պատրաստակամությունը՝ օժանդակելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության համապարփակ կարգավորմանը»[30]:

ԱԳՆ-ի բարձր մակարդակով հանդիպումներ նույնպես չեն եղել: ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը ԱՄՆ պետքարտուղարի հետ հանդիպել է միայն 2021 թ. դեկտեմբերի 2-ին ԵԱՀԿ Նախարարների խորհրդի նիստի շրջանակներում: Հանդիպման ընթացքում ընդգծվել է «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի ներքո ԼՂ հակամարտության համապարփակ և տևական կարգավորմանն ուղղված խաղաղ գործընթացի լիարժեք վերսկսման անհրաժեշտությունը»[31]: Մինչ այդ՝ սեպտեմբերի 4-ին, Էնթոնի Բլինկենը շնորհավորական ուղերձ էր հղել Արարատ Միրզոյանին՝ պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, և անդրադարձել նաև ԵԱՀԿ Մինսկի խմբին. «Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր վերահաստատում ենք մեր հանձնառությունը՝ Ձեզ հետ աշխատելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության համապարփակ և տևական քաղաքական կարգավորմանն աջակցելու նպատակով: Խրախուսում ենք Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում օր առաջ բովանդակային բանակցությունների վերսկսումը»[32]: Սրանից զատ՝ հանդիպում էր տեղի ունեցել Ջեյք Սալիվանի և ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի միջև 2021 թ. դեկտեմբերի 15-ին, որի ընթացքում կողմերն ընդգծել էին ԱՄՆ-ի՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի հանձնառությունը՝ աջակցելու տարածաշրջանային հաշտեցմանը[33]:

Մնացյալ շփումները սահմանափակվել են ՀՀ ԱԳ նախարարի՝ ԱՄՆ պետքարտուղարի՝ եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի և 2021 թ. հոկտեմբերից այդ պաշտոնում նշանակված Քերընը Դոնֆրիդի հետ հեռախոսազրույցներով և հանդիպումներով: Մեկ անգամ հանդիպում է տեղի ունեցել Ֆիլիպ Ռիքերի հետ ՀՀ ԱԳՆ-ում 2021 թ. հունիսի 9-ին[34]: Ինչ վերաբերում է հեռախոսազրույցներին, ապա ՀՀ ԱԳ նախկին նախարար Արա Այվազյանի, ԱԳ նախարարի պարտականությունները կատարող Արմեն Գրիգորյանի, այժմ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Ֆիլիպ Ռիքերի միջև հեռախոսազրույցներ տեղի են ունեցել համապատասխանաբար 2021 թ. փետրվարի 8-ին[35], մայիսի 13-ին[36], հուլիսի 29-ին[37], իսկ Քերընը Դոնֆրիդի և Արարատ Միրզոյանի միջև տեղի է ունեցել երկու հեռախոսազրույց 2021 թ. հոկտեմբերի 21-ին[38] և 2022 թ. հունվարի 11-ին[39]: Հեռախոսազրույցների ընթացքում կարևորվել է «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վերսկսումը»:

Հարկ է նշել, որ Արցախյան հիմնախնդիրը, ինչպես նաև Ադրբեջանի՝ ՀՀ տարածք ներխուժելու փաստը քննարկման թեմա են դարձել Ֆրանսիայի և Ռուսաստանի ԱԳ նախարարների հետ համապատասխանաբար Բլինկենի հեռախոսազրույցի և հանդիպման ընթացքում: Մասնավորապես, մայիսի 16-ի հեռախոսազրույցի ընթացքում Բլինկենն ու Ֆրանսիայի ԱԳ նախարար Լը Դրիանը, խոսելով ԵԱՀԿ Մինսկի խմբում իրենց համանախագահության մասին, ընդգծել են «Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատև քաղաքական կարգավորման անհրաժեշտությունը»[40], իսկ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ Բլինկենը քննարկել է «Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությանը երկարատև լուծում գտնելու» անհրաժեշտությունը[41]:

Բացի այդ՝ ԱՄՆ պետքարտուղարությունն իր որոշ հայտարարություններում անդրադարձել է Մինսկի խմբի՝ որպես հակամարտության կարգավորման հարթակի կարևորությանը: Մայիսի 27-ին հայ զինծառայողների գերի ընկնելու վերաբերյալ հայտարարության մեջ ԱՄՆ-ն առանձնահատուկ կոչ էր արել Ադրբեջանի զորքերին «վերադառնալու մայիսի 11-ի դրությամբ զբաղեցրած դիրքեր» և Հայաստանին ու Ադրբեջանին հորդորել «հնարավորինս շուտ վերադառնալ բովանդակային բանակցությունների ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո»[42]: Հուլիսի 28-ին տարածած հայտարարությամբ ԱՄՆ պետդեպարտամենտը հանդես եկավ նմանատիպ կոչով[43]: 2021 թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ անկախության առթիվ ուղարկված շնորհավորական ուղերձում նշվում էր, որ «որպես ԵԱՀԿ Մինսկի համանախագահ երկիր՝ ԱՄՆ-ն շարունակում է

պահպանել իր հանձնառությունը՝ օգնելու կողմերին բանակցելու՝ հասնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատև կարգավորման»[44]: ԱՄՆ պետդեպարտամենտը նաև հայտարարություն էր տարածել զինադադարի հաստատման մեկ տարվա առիթով, որում ևս մեկ անգամ ԱՄՆ-ն հորդորում էր «Հայաստանին և Ադրբեջանին շարունակել և առավել ակտիվացնել իրենց ներգրավվածությունը՝ ներառյալ Մինսկի համանախագահների հովանու ներքո գտնելու համապարփակ լուծումներ»[45]: 2021 թ. վերջին հայտարարության մեջ ԱՄՆ-ն «խոր անհանգստություն արտահայտեց Հայաստանի և Ադրբեջանի միջև ինտենսիվ մարտերի վերաբերյալ զեկույցների առումով» և հղում կատարեց ԵԱՀԿ Մինսկի խմբի նոյեմբերի 15-ի հայտարարությանը, որն արձանագրում էր երկարատև քաղաքական լուծման հասնելու անհրաժեշտությունը[46]:

ԱՄՆ-ն որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր

Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում ԱՄՆ-ն ներգրավված է գերազանցապես որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր՝ սկսած 1997 թվականից, երբ հաստատվեց Մինսկի խմբի եռակողմ ձևաչափը՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համանախագահությամբ: ԵԱՀԿ Մինսկի խումբը այս տարիների ընթացքում հանդես է եկել արցախյան հակամարտության կարգավորման տարբեր առաջարկներով: Հատկանշական են 2001 թ. ԱՄՆ-ի նախաձեռնությամբ և ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Քի Վեսթ քաղաքում տեղի ունեցած բանակցությունները, որոնց նպատակը հակամարտությանը վերջնական լուծում տալն էր: Այնուամենայնիվ, հակամարտության կարգավորման այս և ԵԱՀԿ Մինսկի խմբի այլ առաջարկություններ տապալվեցին՝ հանգեցնելով ևս մեկ պատերազմի 2020 թ.:

ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համանախագահությամբ, պատերազմի հենց առաջին օրվանից և 44-օրյա պատերազմից հետո պարբերաբար հանդես է եկել հայտարարություններով՝ որպես Մինսկի խումբ և Մինսկի խմբի երկրի ղեկավարների ու ԱԳ նախարարների մակարդակով: Ունեցել է նաև մի քանի հանդիպում Ադրբեջանի և Հայաստանի ԱԳ նախարարների հետ՝ ինչպես յուրաքանչյուրի հետ առանձին, այնպես էլ միասնական ձևաչափերով:

Պատերազմի հենց առաջին օրը Մինսկի խումբը կոչ արեց դադարեցնելու «ռազմական գործողությունները և վերսկսելու բանակցությունները»[47], իսկ հոկտեմբերի 1-ին, ի լրումն նախորդ հայտարարության, նաև անդրադարձ եղավ արտաքին դերակատարներին, որոնց ներգրավումը «խոչընդոտում է տարածաշրջանում խաղաղության հաստատման ջանքերին»[48]:

Պատերազմի մեկնարկից երկու օր անց՝ սեպտեմբերի 29-ին, ԵԱՀԿ մշտական խորհուրդը հրավիրեց հատուկ հանդիպում արցախյան պատերազմի առնչությամբ՝ ԵԱՀԿ 57 անդամ-պետությունների մասնակցությամբ, որի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների ներկայացուցիչները կրկնեցին բանակցությունները վերսկսելու իրենց նախկին կոչը[49]:

Դոնալդ Թրամպ

Հաջորդ հայտարարությունը արդեն եղավ նախագահների մակարդակով: Այսպես՝ հոկտեմբերի 1-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով Հայաստանին և Ադրբեջանին կոչ արեցին վերսկսելու բանակցությունները «բարեխղճորեն և առանց նախապայմանների»[50]: Հատկանշական է, որ հոկտեմբերի 5-ին համատեղ հայտարարությամբ հանդես եկան արդեն ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, Ֆրանսիայի ԱԳ նախարար Ժան-Իվ Լը Դրիանը և ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն: Հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր, որ «Համանախագահող երկրները վճռական են լիովին իրացնելու ԵԱՀԿ-ի և միջազգային հանրության կողմից իրենց վստահված մանդատը.... Որպես այդպիսին, նրանք հաստատակամորեն կշարունակեն առաջ մղել իրենց շփումները կողմերի հետ և կոչ անել նրանց հանձն առնելու վերսկսել կարգավորման գործընթացը՝ հիմնվելով գոյություն ունեցող հիմնական սկզբունքների և համապատասխան միջազգային փաստաթղթերի վրա, որոնք շատ լավ հայտնի են երկու կողմերին»[51]: Մինսկի խմբի համանախագահները պատերազմի ընթացքում նաև հանդիպում ունեցան ՀՀ և Ադրբեջանի ԱԳ նախարարների հետ: Մասնավորապես, հոկտեմբերի 24-ին Վաշինգտոնում հանդիպում տեղի ունեցավ նախարարների և Մինսկի խմբի համանախագահների միջև, նախ՝ առանձին, այնուհետև՝ երկու նախարարների ներգրավմամբ, որին մասնակցում էր նաև ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանը[52]: Ադրբեջանի և ՀՀ ԱԳ նախարարների հետ Մինսկի խմբի համանախագահների՝ առանձին և միասնական ձևաչափերով հաջորդ հանդիպումները տեղի ունեցան արդեն հոկտեմբերի 30-ին Ժնևում[53]:

Հարկ է նշել, որ այս ընթացքում Մինսկի խմբի համանախագահ երկրները նաև առանձնաբար փորձել են օգնել հրադադարի հաստատմանը, և պատերազմի ընթացքում հաստատված երեք հումանիտար հրադադարների ետևում կանգնած էին ՌԴ-ն, Ֆրանսիան և ԱՄՆ-ն: Առաջին փորձը հոկտեմբերի 10-ին էր ՌԴ-ի միջնորդությամբ, երկրորդը՝ հոկտեմբերի 18-ին Ֆրանսիայի միջնորդությամբ, և հոկտեմբերի 26-ին հաստատվեց վերջին հումանիտար հրադադարը, այս անգամ՝ ԱՄՆ-ի միջնորդությամբ (ինչի համար էլ ՀՀ և Ադրբեջանի ԱԳ նախարարները մեկնել էին Վաշինգտոն): Այդուհանդերձ, այս երեք հումանիտար հրադադարները մեկը մյուսի ետևից ձախողվեցին հաստատումից րոպեներ անց:

Դեկտեմբերի 3-ին զինադադարի հաստատման վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությանը, հատկանշական է, որ ԱՄՆ-ի կողմից միացել էր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանը, մինչդեռ ՌԴ-ի և Ֆրանսիայի կողմից միացել էին ԱԳ նախարարների մակարդակով: Սա վկայում է այն մասին, որ Թրամփի վարչակազմի համար հակամարտությունը արտաքին քաղաքական առաջնահերթ հարց չէր, որ պետքարտուղարի մակարդակով ներգրավվեր: Այս հայտարարությամբ Մինսկի խմբի համանախագահ երկրները «հորդորում էին Հայաստանին և Ադրբեջանին օգտվել ներկայիս զինադադարից՝ բանակցելու երկարատև և կայուն խաղաղության պայմանագրի շուրջ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո»[54]: Այնուհետև համանախագահները պարբերաբար հանդես են եկել նմանատիպ հայտարարություններով՝ կոչ անելով հնարավորինս արագ վերսկսելու բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո առաջին իսկ հնարավորության դեպքում[55] և առաջարկելով կազմակերպել ուղիղ երկկողմանի քննարկումներ, «որպեսզի կողմերը վերանայեն և համատեղ համաձայնության գան համակարգված օրակարգի շուրջ, որը կարտահայտի նրանց առաջնահերթությունները և կլինի առանց նախապայմանների»[56]:

Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո Մինսկի խմբի համանախագահները ունեցան մի քանի հանդիպում ՀՀ և Ադրբեջանի ԱԳ նախարարների հետ: Առաջին անգամ դա իրականացվեց վիդեո-կոնֆերանսի ձևաչափով 2021 թ. փետրվարի 16-ին, որի ընթացքում Մինսկի խմբի համանախագահները առանձին-առանձին զրուցեցին ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի և Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հետ[56]: 2021 թ. սեպտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի շրջանակներում համանախագահները նախ առանձին հանդիպումներ ունեցան ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հետ: Տեղի ունեցավ նաև հանդիպում երկու նախարարների ներգրավմամբ, որն առաջինն էր պատերազմի ավարտից ի վեր: Նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ երկրորդ հանդիպումը, այս անգամ՝ Փարիզում, որի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահները և ԱԳ նախարարները «շարունակեցին Նյու Յորքում սկսված բանակցությունները դեէսկալացիոն մի շարք միջոցների և գործընթացում հաջորդ քայլերի շուրջ, ներառյալ այս ձևաչափով հանդիպումները և համանախագահների առաջիկա այցը տարածաշրջան»[58]:

Ջո Բայդեն

Ըստ էության, համանախագահներն այդպես էլ չկարողացան այցելել տարածաշրջան, իսկ Փարիզում տեղի ունեցած հանդիպումը դարձավ վերջինը ՀՀ և Ադրբեջանի ԱԳ նախարարների միջև: Սրան հաջորդեց Ադրբեջանի կողմից Սյունիքում սանձազերծված հարձակումը, որին արձագանքելով՝ Մինսկի համանախագահները հայտարարություն տարածեցին՝ նշելով, որ լարվածության աճն առավել ընդգծում է կայուն և համապարփակ համաձայնության հասնելու անհրաժեշտությունը: Կոչ արվեց շարունակելու առաջընթաց արձանագրած այն հանդիպումները, որ տեղի էին ունեցել Նյու Յորքում և Փարիզում[59]: Արդեն իսկ դեկտեմբերի 4-ին ԵԱՀԿ Նախարարների խորհրդի նիստի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահները միայն առանձին հանդիպումներ ունեցան ՀՀ և Ադրբեջանի ԱԳ նախարարների հետ՝ «ափսոսանք հայտնելով, որ հնարավոր չեղավ համատեղ հանդիպում կազմակերպել», միևնույն ժամանակ «արտահայտեցին իրենց պատրաստակամությունը՝ կազմակերպելու նման հանդիպում, երբ հանգամանքները թույլ տան»[60]:

Երկխոսությունը շարունակելու և ստեղծված փակուղուց դուրս գալու մասին այս պահի դրությամբ Մինսկի խմբի համանախագահող երկրների կողմից վերջին հայտարարությունը եղավ 2021 թ. դեկտեմբերի 7-ին: ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը, ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը և Ֆրանսիայի ԱԳ նախարար Ժան-Իվ Լը Դրիանը հայտնեցին իրենց աջակցությունը «Հայաստանի և Ադրբեջանի միջև ուղիղ երկխոսության վերսկսմանը Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո» և կոչ արեցին շարունակելու Նյու Յորքում և Փարիզում տեղի ունեցած հանդիպումները: Եվս մեկ անգամ Մինսկի խումբը վերահաստատեց իր «հանձնառությունը՝ աշխատելու կողմերի հետ համապարփակ լուծումների հասնելու համար»[61]:

Հղումներ

1. Տես Security Alert – U.S. Embassy Yerevan, Armenia, September 25, 2020, https://am.usembassy.gov/security-alert-u-s-embassy-yerevan-armenia-09252020/ (մուտք՝ 02.03.2022):
2. Տես Security Alert – U.S. Embassy Yerevan, Armenia, September 27, 2020, https://am.usembassy.gov/security-alert-u-s-embassy-yerevan-armenia-09272020/ (մուտք՝ 02.03.2022):
3. Remarks by President Trump in Press Briefing September 27, 2020, White House, September 27, 2020, https://trumpwhitehouse.archives.gov/briefings-statements/remarks-president-trump-press-briefing-september-27-2020/ (Accessed: 02.03.2022).
4. Ortagus M., Escalation of Violence Between Armenia and Azerbaijan, U.S. Department of State, September 27, 2020, https://2017-2021.state.gov/escalation-of-violence-between-armenia-and-azerbaijan/index.html (Accessed: 02.03.2022).
5. Donald Trump talks about Armenians at his rally in Carson City, Nevada, October 19, 2020, https://www.youtube.com/watch?v=n-mhvSsOX8M (Accessed: 02.03.2022).
6. Տես Hostilities in Nagorno-Karabakh – Statement by Vice President Joe Biden, September 27, 2020, https://joebiden.com/2020/09/27/hostilities-in-nagorno-karabakh-statement-by-vice-president-joe-biden/ (մուտք՝ 02.03.2022):
7. Տես Nagorno-Karabakh – Statement by Vice President Joe Biden, October 28, 2020, https://joebiden.com/2020/10/28/nagorno-karabakh-statement-by-vice-president-joe-biden-2/ (մուտք՝ 02.03.2022):
8. Remarks by President Trump Announcing Normalization of Relations Between Sudan and Israel, White House, October 23, 2020, https://trumpwhitehouse.archives.gov/briefings-statements/remarks-president-trump-announcing-normalization-relations-sudan-israel/ (Accessed: 02.03.2022).
9. Տես PM Pashinyan holds phone conversation with U.S. Presidential Adviser Robert O'Brien, Prime Minister of the RA, October 1, 2020, https://www.primeminister.am/en/press-release/item/2020/10/01/Nikol-Pashinyan-telephone-conversation-with-Robert-O-Brien/ (մուտք՝ 02.03.2022):
10. Տես Deputy Secretary Biegun's Calls with Armenian Foreign Minister Mnatsakanyan and Azerbaijani Foreign Minister Bayramov, U.S. Department of State, October 5, 2020, https://2017-2021.state.gov/deputy-secretary-bieguns-calls-with-armenian-foreign-minister-mnatsakanyan-and-azerbaijani-foreign-minister-bayramov/index.html (մուտք՝ 02.03.2022):
11. U.S.-Armenia-Azerbaijan Joint Statement, U.S. Department of State, October 25, 2020, https://2017-2021.state.gov/u-s-armenia-azerbaijan-joint-statement/index.html (Accessed: 03.03.2022).
12. Տես Remarks by President Trump Before Air Force One Departure | Joint Base Andrews, MD, White House, October 27, 2020, https://trumpwhitehouse.archives.gov/briefings-statements/remarks-president-trump-air-force-one-departure-joint-base-andrews-md-102720/ (մուտք՝ 03.03.2022):
13. Տես Secretary Pompeo's Meetings with Armenian Foreign Minister Mnatsakanyan and Azerbaijani Foreign Minister Bayramov, U.S. Department of State, October 23, 2020, https://2017-2021.state.gov/secretary-pompeos-meetings-with-armenian-foreign-minister-mnatsakanyan-and-azerbaijani-foreign-minister-bayramov/index.html (մուտք՝ 03.03.2022):
14. Տես Foreign Minister Zohrab Mnatsakanyan met with US Acting Assistant Secretary of State for European and Eurasian Affairs Phillip Reeker, MFA, October 22, 2020, https://www.mfa.am/en/press-releases/2020/10/22/ZM_Reeker/10576 (մուտք՝ 03.03.2022):
15. Տես Meeting of Foreign Minister Zohrab Mnatsakanyan with the US National Security Advisor, MFA, October 23, 2020, https://www.mfa.am/en/press-releases/2020/10/23/fm_obrien/10582 (մուտք՝ 03.03.2022):
16. Secretary Michael R. Pompeo And Greek Prime Minister Kyriakos Mitsotakis Joint Press Statements After Their Meeting, U.S. Department of State, September 29, 2020, https://2017-2021.state.gov/secretary-michael-r-pompeo-and-greek-prime-minister-kyriakos-mitsotakis-joint-press-statements-after-their-meeting/index.html (Accessed: 04.03.2022).
17. Secretary Michael R. Pompeo With Erick Erickson of The Erick Erickson Show on WSB Atlanta, U.S. Department of State, October 15, 2020, https://2017-2021.state.gov/secretary-michael-r-pompeo-with-erick-erickson-of-the-erick-erickson-show-on-wsb-atlanta/index.html (Accessed: 04.03.2022).
18. Secretary Michael R. Pompeo With Amy Kellogg of FOX News, U.S. Department of State, October 1, 2020, https://2017-2021.state.gov/secretary-michael-r-pompeo-with-amy-kellogg-of-fox-news/index.html (Accessed: 04.03.2022).
19. Secretary Michael R. Pompeo at a Press Availability, U.S. Department of State, October 14, 2020, https://2017-2021.state.gov/secretary-michael-r-pompeo-at-a-press-availability-14/index.html (Accessed: 04.03.2022).
20. Secretary Michael R. Pompeo Briefing with the Traveling Press, U.S. Department of State, October 2, 2020, https://2017-2021.state.gov/secretary-michael-r-pompeo-briefing-with-the-traveling-press/index.html (Accessed: 04.03.2022).
21. Secretary Michael R. Pompeo at a Press Availability, U.S. Department of State, October 21, 2020, https://2017-2021.state.gov/secretary-michael-r-pompeo-at-a-press-availability-15/index.html (Accessed: 04.03.2022).
22. Տես Press Briefing by Press Secretary Kayleigh McEnany, White House, October 1, 2020, https://trumpwhitehouse.archives.gov/briefings-statements/press-briefing-press-secretary-kayleigh-mcenany-100120/ (մուտք՝ 05.03.2022): Տես նաև Senior State Department Officials Briefing to Traveling Press, U.S. Department of State, November 16, 2020, https://2017-2021.state.gov/senior-state-department-officials-briefing-to-traveling-press-2/index.html (մուտք՝ 05.03.2022), Online Briefing with Ambassador Kay Bailey Hutchison on NATO Defense Ministerial, U.S. Department of State, October 21, 2020, https://2017-2021.state.gov/online-briefing-with-ambassador-kay-bailey-hutchison-on-nato-defense-ministerial-2/index.html (մուտք՝ 05.03.2022):
23. Senior State Department Officials Briefing to Traveling Press, U.S. Department of State, November 18, 2020, https://2017-2021.state.gov/senior-state-department-officials-briefing-to-traveling-press-3/index.html (Accessed: 05.03.2022).
24. The United States Welcomes Cessation of Hostilities Between Armenia and Azerbaijan and Announces New Assistance to Respond to the Nagorno-Karabakh Humanitarian Emergency, U.S. Department of State, November 17, 2020, https://2017-2021.state.gov/the-united-states-welcomes-cessation-of-hostilities-between-armenia-and-azerbaijan-and-announces-new-assistance-to-respond-to-the-nagorno-karabakh-humanitarian-emergency/index.html (Accessed: 05.03.2022).
25. Տես PM Pashinyan holds phone conversation with U.S. Secretary of State Antony J. Blinken, Prime Minister of the RA, March 3, 2021, https://www.primeminister.am/en/press-release/item/2021/03/05/Nikol-Pashinyan-Telephone-Conversation/ (մուտք՝ 05.03.2022):
26. Տես Secretary Blinken's Call with Armenian Prime Minister Pashinyan, U.S. Department of State, March 5, 2021, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-armenian-prime-minister-pashinyan/ (մուտք՝ 05.03.2022):
27. Տես Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Adviser Jake Sullivan Calls with Prime Minister Nikol Pashinyan of Armenia and President Ilham Aliyev of Azerbaijan, White House, May 17, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/05/17/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-adviser-jake-sullivan-calls-with-prime-minister-nikol-pashinyan-of-armenia-and-president-ilham-aliyev-of-azerbaijan/ (մուտք՝ 05.03.2022):
28. Department Press Briefing, U.S. Department of State, May 14, 2021, https://www.state.gov/briefings/department-press-briefing-may-14-2021/ (Accessed: 06.03.2022).
29. Secretary Blinken's Call with Armenian Acting Prime Minister Pashinyan, U.S. Department of State, July 14, 2021, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-armenian-acting-prime-minister-pashinyan/ (Accessed: 06.03.2022).
30. PM Pashinyan receives US Deputy Assistant Secretary of State, Prime Minister of the RA, November 11, 2021, https://www.primeminister.am/en/press-release/item/2021/11/03/Nikol-Pashinyan-meeting./ (Accessed: 06.03.2022).
31. ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հանդիպումը, ՀՀ ԱԳՆ, 2 դեկտեմբերի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/12/02/Mirzoyan_Blinken/11204 (մուտք՝ 06.03.2022):
32. ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը շնորհավորական ուղերձ է հղել Արարատ Միրզոյանին, ՀՀ ԱԳՆ, 4 սեպտեմբերի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/09/04/usa_congra/11056 (մուտք՝ 06.03.2022):
33. Տես Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Advisor Jake Sullivan's Meeting with National Security Council Secretary Armen Grigoryan of Armenia, White House, December 15, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/12/15/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-advisor-jake-sullivans-meeting-with-national-security-council-secretary-armen-grigoryan-of-armenia/ (մուտք՝ 06.03.2022):
34. Տես ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հանդիպումը ՀՀ ԱԳՆ-ում, ՀՀ ԱԳՆ, 10 հունիսի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/06/10/usa-arm/10993 (մուտք՝ 06.03.2022):
35. Տես ԱԳ նախարար Արա Այվազյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ, ՀՀ ԱԳՆ, 8 փետրվարի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/02/08/fm_aivazian/10784 (մուտք՝ 06.03.2022):
36. Տես ԱԳ նախարարի պաշտոնակատար Արա Այվազյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ, ՀՀ ԱԳՆ, 13 մայիսի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/05/13/fm_usa/10943 (մուտք՝ 06.03.2022):
37. Տես ԱԳ նախարարի պարտականությունները կատարող Արմեն Գրիգորյանը հեռախոսազրույց ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ, ՀՀ ԱԳՆ, 29 հուլիսի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/07/29/ag_us/11014 (մուտք՝ 06.03.2022):
38. Տես ՀՀ ԱԳ նախարար Միրզոյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի հետ, ՀՀ ԱԳՆ, 21 հոկտեմբերի 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/10/21/arm-usa/11145 (մուտք՝ 06.03.2022):
39. Տես ՀՀ ԱԳ նախարար Միրզոյանի հեռախոսազրույցն ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի հետ, ՀՀ ԱԳՆ, 11 հունվարի 2022, https://www.mfa.am/hy/press-releases/2022/01/11/mirzoyan_usa_donfried/11260 (մուտք՝ 06.03.2022):
40. Secretary Blinken's Call with French Foreign Minister Le Drian, U.S. Department of State, May 16, 2021, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-french-foreign-minister-le-drian-4/ (Accessed: 07.03.2022).
41. Տես Secretary Blinken's Meeting with Russian Foreign Minister Lavrov, U.S. Department of State, May 19, 2021, https://www.state.gov/secretary-blinkens-meeting-with-russian-foreign-minister-lavrov/ (մուտք՝ 07.03.2022):
42. Տես Detention of Armenian Soldiers, May 27, 2021, https://www.state.gov/detention-of-armenian-soldiers/ (մուտք՝ 07.03.2022):
43. Տես Escalation of Violence along International Border between Armenia and Azerbaijan, U.S. State Department, July 28, 2021, https://www.state.gov/escalation-of-violence-along-international-border-between-armenia-and-azerbaijan/ (մուտք՝ 07.03.2022):
44. Armenian Independence Day, U.S. State Department, September 21, 2021, https://www.state.gov/armenian-independence-day/ (Accessed: 07.03.2022).
45. Recognizing the One-Year Anniversary of the Ceasefire Declaration Between Armenia and Azerbaijan, U.S. State Department, November 8, 2021, https://www.state.gov/recognizing-the-one-year-anniversary-of-the-ceasefire-declaration-between-armenia-and-azerbaijan/ (Accessed: 08.03.2022).
46. Տես Fighting Between Armenia and Azerbaijan, U.S. State Department, November 16, 2021, https://www.state.gov/fighting-between-armenia-and-azerbaijan/ (մուտք՝ 08.03.2022):
47. Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, OSCE, September 27, 2020, https://www.osce.org/minsk-group/465018 (Accessed: 08.03.2022).
48. Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, OSCE, October 2, 2020,https://www.osce.org/minsk-group/465711 (Accessed: 08.03.2022).
49. Տես Special meeting of OSCE Permanent Council held on situation in Nagorno-Karabakh context, OSCE, September 29, 2020, https://www.osce.org/chairmanship/465225 (մուտք՝ 08.03.2022):
50. Տես Trump, Putin, Macron call for Armenia and Azerbaijan to cease hostilities, Politico, October 1, 2020, https://www.politico.eu/article/trump-putin-macron-call-for-armenia-and-azerbaijan-to-cease-hostilities/ (մուտք՝ 08.03.2022):
51. Joint Statement Calling for a Ceasefire in Nagorno-Karabakh, October 5, 2020, https://2017-2021.state.gov/joint-statement-calling-for-a-ceasefire-in-nagorno-karabakh/index.html (Accessed: 08.03.2022).
52. Տես Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, October 25, 2020https://www.osce.org/minsk-group/468204 (մուտք՝ 09.03.2022):
53. Տես Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, October 30, 2020, https://www.osce.org/minsk-group/468984 (մուտք՝ 09.03.2022):
54. Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, December 3, 2020, https://www.osce.org/minsk-group/472419 (Accessed: 09.03.2022).
55. Տես Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, April 13, 2021, https://www.osce.org/minsk-group/483416 (մուտք՝ 09.03.2022); Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, May 5, 2021, https://www.osce.org/minsk-group/485558 (մուտք՝ 09.03.2022); Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, May 28, 2021, https://www.osce.org/minsk-group/487879 (մուտք՝ 09.03.2022):
56. Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, July 29, 2021, https://www.osce.org/minsk-group/493945 (Accessed: 09.03.2022).
57. Տես Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, February 16, 2020, https://www.osce.org/minsk-group/478690 (մուտք՝ 10.03.2022):
58. Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, November 11, 2021, https://www.osce.org/minsk-group/504007 (Accessed: 10.03.2022).
59. Տես Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, November 15, 2021, https://www.osce.org/minsk-group/504280 (մուտք՝ 10.03.2022):
60. Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, December 4, 2021, https://www.osce.org/minsk-group/506813 (Accessed: 10.03.2022).
61. Joint Statement by the OSCE Minsk Group Co-Chair Countries, December 7, 2021, https://www.osce.org/minsk-group/507320 (Accessed: 10.03.2022).

Հայոց ցեղասպանության ճանաչումը և Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Իրանի Իսլամական Հանրապետությունը բազմազգ և բազմաշերտ պետություն է, որտեղ կողք կողքի ապրում են 30-ից ավելի ազգություններ և էթնիկ խմբեր: Իրանահայերը մեծ ներդրում ունեն երկրի զարգացման գործում և նպաստում են Իրանի ու Հայաստանի միջև հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը: Ըստ երկրի Սահմանադրության՝ Իրանի խորհրդարանում ներկայացված են երկու հայ պատգամավորներ, Իրանի տարածքում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանները պետության կողմից պաշտպանված են և ընդգրկված ՅՈՒՆԵՍԿՕ-ի համընդհանուր մարդկային ժառանգության ցուցակում:

Աշխարհասփյուռ հայության հիմնական նպատակներից մեկը Հայոց ցեղասպանության ճանաչումն է, որի կյանքի կոչմանն են լծված Հայաստանում ու դրա սահմաններից դուրս գործող հասարակական և քաղաքական կազմակերպությունները, մշակութային գործիչներն ու շարքային քաղաքացիները: Իրանահայ համայնքն իր հերթին փորձում է իր լուման ներդնել Իրանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում: Այսպես՝ ամեն տարի՝ ապրիլի 24-ին, իրանահայ համայնքը տարատեսակ մշակութային ու հիշատակի միջոցառումներ է կազմակերպում և լուսաբանում դրանք ողջ երկրով մեկ: Հարկ է նշել, որ իրանական իշխանությունները ոչ մի կերպ չեն խոչընդոտում մշակութային ու հիշատակի միջոցառումների անցկացումը, երթերը, համացանցային կամ լրատվական հրապարակումներն ու տարատեսակ ելույթները: Մասնավորապես, թե՛ հայ, թե՛ իրանցի պատգամավորները՝ Մեջլիսում, իսկ քաղաքական գործիչները ելույթների ընթացքում անդրադառնում են Հայոց ցեղասպանությանն ու դրա ճանաչման հիմնախնդրին:

ԻԻՀ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ քաղաքական քննարկումները նորովի ծավալվեցին Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, երբ 1992 թ. փետրվարի 9-ին Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին: Այդ պահից սկսած՝ թե՛ իրանահայ համայնքը, թե՛ ՀՀ-ն իրանական կողմի հետ տարաբնույթ հարաբերությունների կառուցման օրակարգում պաշտոնապես ներառում էին նաև Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը: Դեռևս 2000 թ. քննարկվում էր Հայոց ցեղասպանության հարցը ԻԻՀ Մեջլիսի օրակարգ ներառելու հնարավորությունը, ինչը, սակայն, հանդիպելով թուրքական և ԱՊՀ մի քանի երկրների սուր արձագանքին, անկատար մնաց: Այդ շրջանում ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Համիդռեզա Ասեֆին լրագրողների հետ

հարցազրույցի ընթացքում հայտարարել էր, թե Մեջլիսը անկախ մարմին է[1]՝ ըստ էության նկատի ունենալով, որ նրա որոշումները չեն կարող արտահայտել ԻԻՀ վերջնական դիրքորոշումը:

Օրինակ՝ պաշտոնական այցով 2004 թ. սեպտեմբերին առաջին անգամ Հայաստան ժամանած Իրանի 5-րդ նախագահ Մոհամմադ Խաթամին այցելել է Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և ծաղիկներ դրել անմար կրակի մոտ[2]: Հատկանշական է, որ այդ շրջանում Մ. Խաթամին ակտիվ հանդիպումներ և քննարկումներ էր անցկացնում թուրք և ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ուստի Հայաստանի հետ հարաբերություններում Հայոց ցեղասպանությանը և Արցախյան հիմնախնդրին առնչվող հարցերում փորձում էր հնարավորինս զգուշավոր լինել: Ասվածի համատեքստում պետք է նշել, որ նույն՝ 2004 թ. Թեհրան ժամանած Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարել էր, որ «Իրանում բնակվող ադրբեջանցիներն այս կողմի ազգային փոքրամասնությունն են կազմում»[3], ինչի պատճառով էլ իրանական մամուլում մի շարք ընդգծված հակաադրբեջանական հոդվածներ էին տպագրվել: Այս հայտարարությամբ ադրբեջանական կողմը փաստացի Իրանին սպառնում էր թյուրքախոս ատրպատականցիների գործոնով, որոնց հնարավոր ակտիվացումը երկրի վարչակարգի և ազգային անվտանգության համար կարող էր սպառնալիք դառնալ:

Իրանում Մ. Խաթամիին հաջորդել է Մահմուդ Ահմադինեժադը, որի կառավարման շրջանում (2005-2013 թթ.) ևս Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը հայկական կողմի քաղաքական օրակարգում էր: Իրանահայության ջանքերի շնորհիվ էր, որ դեռևս 2005 թ. նախընտրական քարոզարշավի ժամանակ Մ. Ահմադինեժադը խոստացավ ընտրվելու դեպքում դատապարտել Հայոց ցեղասպանությունը[4]: Բանն այն է, որ, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, Մ.

Ահմադինեժադը տարբեր առիթներով հայտարարում էր, որ նմանօրինակ հանցագործությունները ենթակա են դատապարտման՝ անկախ նրանից, թե ում կողմից կամ ում նկատմամբ են իրականացվել:

Պաշտոնավարման ընթացքում Մ. Ահմադինեժադը երկու անգամ՝ 2007 և 2011 թվականներին, այցելել է Հայաստան: 2007 թ. Հայաստան կատարած այցի շրջանակներում, գտնվելով Երևանի պետական համալսարանում, Մ. Ահմադինեժադը հայտարարել է, որ Իրանը դատապարտում է մարդկության պատմության մեջ բռնության բոլոր դեպքերը, որոնք տեղի են ունեցել ցանկացած պահի, ցանկացած վայրում, ցանկացած անձի կողմից: Իսկ ահա պատասխանելով Իրանի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ժամկետների մասին հարցին՝ վերջինս, այն շրջանցելով, նշել է. «Պատմական իրադարձությունների վերաբերյալ մեր դիրքորոշումը պարզ է, բայց մենք պետք է հաշվի առնենք երկու հանգամանք. մենք պետք է դիմենք պատմությանը, որպեսզի դասեր քաղենք դրանից և հետագայում կարողանանք ավելի լավ կյանք կառուցել: Մյուս կարևոր փաստն այն է, որ Իրանը Հայաստանի կողքին է և Հայաստանի հետ միասին նայում է ավելի պայծառ ապագայի, ապագայի, որը կլցվի բարեկամությամբ և բարությամբ»[5]:

Միաժամանակ փաստենք, որ օրակարգով նախատեսված էր նաև նախագահի այցը Հայոց ցեղասպանության հուշահամալիր, սակայն Մ. Ահմադինեժադը նախատեսվածից շուտ էր վերադարձել Թեհրան՝ չայցելելով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ըստ էության, այս քայլով նախագահը փորձել էր խուսափել Թուրքիայի հետ հարաբերությունների հետագա վատթարացումից: Հետագայում ևս Հայաստան կատարած այցերի ժամանակ թե՛ Մ. Ահմադինեժադի և թե՛ իրանցի բարձրաստիճան պաշտոնյաների օրակարգում նախատեսված չի եղել այցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին թերևս միայն 2006 թ. է Իրանի Մեջլիսի պատվիրակությունը՝ նախագահ Ղոլամ Ալի Հադդադ-Ադելի գլխավորությամբ, ծաղկեպսակ դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Այդ շրջանում Իրանի խորհրդարանական պատվիրակությունը Երևանում էր Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանի հրավերով[6]:

Արդեն Իրանում, իրանահայ պատգամավորներից բացի, իրանցի պաշտոնյաները ևս անդրադարձել են Հայոց ցեղասպանությանը: Այսպես՝ 2010 թ. Իրանի փոխնախագահ, Ազատ տնտեսական գոտիների կենտրոնի նախագահ և Ջրոսաշրջության ու մշակութային հուշարձանների պահպանության վարչության նախագահ Համիդ Բաղային «Իրան. հաղթանակի կամուրջ» գագաթնաժողովում[7] հայտարարել է. «Օսմանյան կայսրությունը մոտ 100 տարի առաջ՝ 1915 թ., ցեղասպանություն է իրականացրել հայերի նկատմամբ: Այժմ, երբ Օսմանյան կայսրությունը գոյություն չունի, Հայաստանի կառավարությունը դեռ պահանջում է պաշտոնական ներողություն և փոխհատուցում Թուրքիայից»[8]: Հատկանշական է, որ այս հայտարարությունից հետո երկրի ներսում լարվել էին նախագահի և արտաքին գործերի նախարար Մանուչեհր Մոթաքիի հարաբերությունները, քանի որ հայտարարությունը զայրացրել էր Թուրքիային, և դրա հետևանքները մեղմելու պարտականությունը փաստացի դրված էր Մ. Մոթաքիի վրա: Հատկանշական է, սակայն, որ հայտարարությունը չէր կարող արվել առանց նախագահի հավանությանն արժանանալու: Սակայն կարծում ենք, որ այս դեպքում ևս պաշտոնական Թեհրանը գործնականում օգում թողեց այդ հայտարարությունը՝ Թուրքիայի դժգոհությունից խուսափելու համար:

Իրանի խորհրդարանը

Մ. Ահմադինեժադին հաջորդած Հասան Ռուհանին իր պաշտոնավարման ընթացքում (2013-2021 թթ.) երկու անգամ է պաշտոնական այցով գտնվել Հայաստանում՝ 2016 և 2019 թվականներին: Այդ այցերի ընթացքում Հայաստանի և Իրանի նախագահները քննարկել են երկու երկրների միջև բազմակողմ հարաբերությունների զարգացմանը և տարածաշրջանում փոխգործակցությանն առնչվող հարցեր, ինչպես նաև ստորագրել դրանց վերաբերյալ հուշագրեր, սակայն այդ հանդիպումների ընթացքում անդրադարձ չի կատարվել Հայոց ցեղասպանության ճանաչման կամ դատապարտման խնդրին:

Կարծում ենք, որ Հ. Ռուհանիի կառավարման շրջանում Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները նորից քաղաքական օրակարգ ներառվեցին Սիրիայում ճգնաժամի սրման պայմաններում: Այսպես՝ 2013 թ. Իրանի Մեջլիսի փոխխոսնակ Ալի Լարիջանին, մեկնաբանելով Սիրիա-յում տեղի ունեցող իրադարձությունները, ասել է. «Այն ձեռքը, որը հայերի արյան մեջ էր, այժմ Սիրիայի մեր եղբայրների և քույրերի արյան մեջ է»: Իսկ Իրանի կրոնական փոքրամասնությունների և էթնիկական խմբերի հարցերով նախագահի հատուկ օգնական Ալի

Յունեսին հայտարարել էր, որ Թուրքիան Սիրիայում նույն ցեղասպանությունն է իրականացնում, ինչ 100 տարի առաջ հայերի նկատմամբ[9]: Ասվածի համատեքստում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով էին հանդես եկել նաև իրանահայ ուսանողները, որոնք բաց նամակով դիմել էին Հ. Ռուհանիին[10]:

Իրանում Հ. Ռուհանիին հաջորդել է Էբրահիմ Ռաիսին, որի կառավարման մեկնարկը համընկել է 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմին հաջորդած իրադարձությունների և տարածաշրջանային լարվածության հետ: Է. Ռաիսին պաշտոնական այցով դեռ չի եղել Հայաստանում և Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուղղակի կամ անուղղակի հայտարարությամբ հանդես չի եկել, սակայն պետք է փաստել, որ 2021 թ. աշխատանքային այցով Հայաստան ժամանած՝ Իրանի Մեջլիսի Իրան-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Սեյեդ Մեհդի Ֆարշադամի գլխավորած պատվիրակության անդամները դեկտեմբերի 21-ին այցելել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր, իսկ այցի ավարտին գրառումներ են կատարել պատվավոր հյուրերի հուշամատյանում[11]: Ըստ էության, իրանական պատվիրակությունը գրավոր հաստատում էր իր այցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որից հետո էլ թե՛ իրանական, թե՛ հայկական մամուլում լուրեր պտտվեցին այն մասին, որ իրանական բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով այցերը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր պարբերական բնույթ են կրելու:

Այստեղ, սակայն, առավել ուշագրավ է այն, որ հայ-թուրքական հարաբերություններում որոշակի փոփոխություններ են նախանշվում, և իրանական կողմը կարծես թե սպասողական քաղաքականություն է որդեգրել: Հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորման պայմաններում իրանական կողմը ենթադրում է, որ Հայաստանն ապագայում կարող է հրաժարվել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման պահանջից՝ նոր էջ բացելով Թուրքիայի հետ հարաբերություններում:

Ամփոփելով պիտի փաստենք, որ թեև իրանական պաշտոնական շրջանակները արտահայտել են իրենց դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում, այնուամենայնիվ, կան որոշակի գործոններ, որոնք խոչընդոտում են դրա ճանաչումը:

Նախ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման խոչընդոտներից մեկը Իրանի հյուսիսում կենտրոնացած ազերիախոս ատրպատականցիների մեծաթիվ համայնքն է, որը սերտ կապեր ունի Թուրքիայի և Ադրբեջանի հետ՝ կարևոր դեր խաղալով երկրի քաղաքական և տնտեսական կյանքում: Վերջիններն էլ, բնականաբար օգտագործելով իրենց ազդեցության լծակները, կարող են զգալի ճնշում գործադրել իրանական իշխանությունների վրա: Բացի այդ՝ Իրանի շատ բարձրաստիճան հոգևոր և քաղաքական առաջնորդներ այս էթնիկ խմբի ներկայացուցիչներ են, ինչը բնականաբար չի կարող չազդել երկրի

Ապրիլի 24-ի միջոցառում Թեհրանում

քաղաքականության վրա:

Տարածաշրջանի քաղաքական դրությունը և տարածաշրջանային առաջնորդության համար Թուրքիայի դեմ պայքարը միջուկային ծրագրին առնչվող պատժամիջոցների և բանակցությունների պայմաններում ստիպում են Իրանին զգուշավոր քաղաքականություն վարել: Իրանի համար կարևոր նշանակություն ունեն Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունները, իսկ Հայոց ցեղասպանության ճանաչումը անխուսափելիորեն հանգեցնելու է Անկարայի դժգոհությանն ու թշնամանքին: ■

Հղումներ

1- Տե՛ս Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991-2014 թթ.), Եր., 2016, էջ 221:
2- Տե՛ս Իրանի նախագահը այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, https://www.panarmenian.net/arm/news/11154/, 09.09.2004 (մուտք՝ 29.03.2022):
3- Իսկանդարյան Գ., Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, 2005, էջ 105-108
4- Տե՛ս Իսկանդարյան Գ., Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Եր., 2005, էջ 105-108:
5- Иран осуждает любые случаи насилия в истории – Ахмадинежад, https://ria.ru/20071022/85065433.html, 22.10.2007 (մուտք՝ 29.03.2022).
6- Տե՛ս ԻԻՀ մեջլիսի նախագահի այցը Հայաստան, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=2000&year=2006&month=9&day=8, 08.09.2006, (մուտք՝ 29.03.2022):
7- Գագաթնաժողովն անցկացվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դաշնակիցների՝ Իրանի տարածք մուտք գործելու 70-ամյակի կապակցությամբ:
8- https://www.asriran.com/fa/news/133520/آخر-هفته-روابط-ایران-و-ترکیه-در-سایه-نسل-کشی-ارامنه-سپری-شد, 28.08.2010 (մուտք՝ 29.03.2022).
9- Տե՛ս https://bit.ly/3uPGxGO, 09.12.2013 (մուտք՝ 29.03.2022):
10- Տե՛ս https://iranchehr.com/?p=5514, 11.04.2015 (մուտք՝ 29.03.2022):
11- Տե՛ս Իրանի Մեջլիսի պատվիրակությունն այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, https://verelq.am/hy/node/100479, 21.12.2021 (մուտք՝ 29.03.2022):

Բաքվի ցեղասպանական գործողությունները Նարդարան ավանում

Սիրանույշ Վարդանյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

20-րդ դարավերջին Ադրբեջանը, փորք փալով ավագ եղբոր՝ Թուրքիայի ցեղասպանական գործելաոճին, սկսեց այլ էթնիկ խմբերի նկատմամբ բռնաճնշումների քաղաքականություն իրականացնել: Այդ ցեղասպանական քաղաքականության և էթնիկ զտումների զոհը դարձավ Սումգայիթի և Բաքվի հայությունը, որը ենթարկվեց զանգվածային ջարդերի և տեղահանումների: Ադրբեջանի այս վատթար քաղաքականությունից չխուսափեցին նաև նրա թալիշաբնակ շրջանների շիայական խմբերը: Ի մասնավորի պետք է փաստել Նարդարանի շիա բնակչության նկատմամբ իրականացվող մշակութային ցեղասպանությունը[1]:

Ադրբեջանական հանրապետությունը, լինելով շիայական մեծամասնություն ունեցող երկիր, աշխարհիկ պետություն է, և երկրի Սահմանադրությունը երաշխավորում է դավանանքի ազատությունը[2]: 1992 թ. օգոստոսի 20-ին Ադրբեջանի խորհրդարանը՝ Միլլի մեջլիսը, ընդունեց որոշում «Դավանանքի ազատության մասին», որի համաձայն՝ բոլոր կրոններն ու կրոնական կազմակերպությունները հավասար են օրենքի առաջ: Սակայն իրականում երկրում կրոնական վերահսկողություն սահմանվեց:

Չնայած Բաքվի իշխանություններն ընդգծում են իրենց վարչակարգի՝ կրոնական հանդուրժողականության և բազմամշակութային քաղաքական մոդել լինելու հանգամանքը, սակայն կրոնական դոգմատիզմը Ադրբեջանում չի արտացոլում իրերի իրական դրությունը: Այս երկրի իշխանական համակարգը ջանք չի խնայում պահպանելու իր աշխարհիկ կենսակերպը, ինչը հնարավորություն է տալիս մեզ փաստելու, որ հետխորհրդային շրջանում այս երկրի շիա բնակչության նկատմամբ կրոնական հանդուրժողականություն բնավ գոյություն չունի:

ԱՀ իշխանությունները վերահսկողություն էին սահմանել կրոնական և կրոնաքաղաքական ակտիվության ցանկացած դրսևորման դեմ, կիրառում էին բազմաթիվ սահմանափակումներ: Այդ սահմանափակումներից կարելի է նշել հասարակական վայրերում, դպրոցներում, համալսարաններում գլխաշորի արգելքը, չէր թույլատրվում շիայական մի շարք ծիսակարգերի (բարձրաձայն աղոթք (ազան), Աշուրայի սգո արարողակարգ և այլն) անցկացումը: Թեև Բաքվի վարչակարգի շիայական շարժումները ճնշելու գործողությունները շարունակական բնույթ էին կրում, սակայն բոլոր հակակրոնական սահմանափակումները հանդիպում էին համառ դիմադրության շիայական խմբերի կողմից:

Շիա ակտիվիստների նկատմամբ բռնաճնշումների մասին են վկայում 2010 թ. հիջաբի արգելքի օրենքի

դեմ ցույցերը և Ադրբեջանում կայացած «Եվրատեսիլ 2012»-ի ընթացքում «Ադրբեջանի իսլամական կուսակցության» առաջնորդ Հաջ Մոհսեն Սամադովի և «Ազգային-հոգևոր արժեքների միության» առաջնորդ Հոջաթոլեսլամ Ֆարամիզ Աբբասով Ռուհոլահի ձերբակալումը, որոնք կտտանքների ենթարկվեցին: Բռնաճնշումները Բաքվով չսահմանափակվեցին և ընդգրկեցին ադրբեջանական այլ շրջաններ ևս[3]:

ԱՀ-ի կողմից հակաշիայական գործողությունների նոր ալիք նշանավորեցին նաև 2015 թ. նարդարանյան դեպքերը, որոնք վերոնշյալի տրամաբանական շարունակությունն են: Նարդարանը Ափշերոնյան թերակղզում գտնվող 9 հազար բնակչություն ունեցող ավան է, որը հեռավորությունը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից մոտ 30 կմ է, և, չնայած աշխարհիկ Բաքվին այդքան մոտ լինելուն, այն Ադրբեջանի ամենակրոնականացված և պահպանողական շիայական կենտրոնն է: Ոմանք Նարդարանն անվանում են «փոքրիկ Իրան», որտեղ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի շնորհիվ կրոնական անջատողականությունը տապալվեց: Նարդարանը հաճախ բնութագրվում է նաև որպես «պետություն պետության մեջ», քանի որ այնտեղ, ի տարբերություն Ադրբեջանի մյուս շրջանների, մարդիկ փորձում են ապրել շարիաթի կանոններով, կանայք հիջաբ են կրում, ավանում կան մի շարք շիայական սրբատեղիներ, փողոցներում փակցված են իսլամական կարգախոսներ: Նարդարանն իր կրոնական ավանդույթները պահպանել է նույնիսկ խորհրդային շրջանում, ինչի հետևանքով Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունները մեծ հեղինակություն չունեին Նարդարանում:

Հենց այս ավանում էր ստեղծվել «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը»: 2015 թ. փետրվարին Նարդարանում հիմնվեց նաև «Մուսուլմանական

միասնություն» կրոնական կազմակերպությունը՝ Թալեհ Բաղիրզադեի գլխավորությամբ, որը բարձրացնում էր սոցիալական և կրոնական հարցեր: Ըստ «Human Rights Without Frontiers» միջազգային իրավապաշտպան կազմակերպության՝ այս կառույցի անդամները չեն ճանաչում Կովկասի մուսուլմանների վարչության ղեկավար Ալլահշուքյուր Փաշազադեի իշխանությունը և որպես կրոնական առաջնորդ ընդունում են Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիին[4]:

Ադրբեջանի անկախացումից հետո երկրի իշխանությունները, պայմանավորված սոցիալական պայմանների բարելավման խնդրով կամ կրոնական սահմանափակումներով, մի քանի անգամ բախվել են նարդարանցիների հետ[5]: Բաքվի վարչակարգի կողմից Թալեհ Բաղիրզադեի և շիա այլ հոգևորականների ու ակտիվիստների դեմ հալածանքների հերթական առիթ հանդիսացավ Թալեհ Բաղիրզադեի՝ 2014 թ. ԱՀ ժամանած այաթոլլահ Նուրի Համեդանի ձեռքերը համբուրելու դեպքը, որով Բաղիրզադեն ի ցույց էր դնում իր նվիրվածությունը շիայականությանը[6]:

2015 թ. հոկտեմբերի 23-ին Նարդարանում տեղի ունեցավ բազմամարդ երթ Աշուրայի ծիսակատարության կապակցությամբ, որի ընթացքում մասնակիցները հնչեցրին քաղաքական բովանդակությամբ կարգախոսներ: Բնակիչները նաև պահանջում էին թույլատրել հիջաբ կրել դպրոցներում, ազատ արձակել ԱԻԿ-ի առաջնորդ Մովսում Սամեդովին և աստվածաբան Ազզգուլ Սամեդովին: Ոստիկանությունը դիմում է ուժի կիրառման: Իրադարձությունների նման զարգացմանը զուգընթաց՝ նոյեմբերի 26-ին՝ կեսօրվա նամազի ժամանակ ներխուժելով Նարդարանի «Իմամ Հուսեյն» մզկիթ՝ ոստիկանությունը բռնություն է գործադրում հավաքվածների նկատմամբ, ձերբակալում 15 հավատացյալների: Ձերբակալվածների թվում էր նաև «Մուսուլմանական միասնություն» հավատացյալների միավորման ղեկավար Թալեհ Բաղիրզադեն: Ոստիկանները նաև պոկում են կրոնական բովանդակությամբ պաստառները, դրոշները և դրանց փոխարեն տեղադրում Ադրբեջանի դրոշը[7]:

Դեկտեմբերի 2-ի դրությամբ բոլոր կրոնական պաստառները հեռացվել էին ամբողջ ավանից, փոխարենը փակցվել էին Ադրբեջանի պետական դրոշներ: Բողոքները Նարդարանով չեն սահմանափակվում՝ տարածվելով նաև Ադրբեջանի այլ շրջաններում: Մասնավորապես բախումներ են լինում Գյանջայում (Գանձակ), որտեղ նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 2-ը ոստիկանները մի քանի անգամ «ծայրահեղականներին ձերբակալելու» հատուկ գործողություններ են իրականացնում: Նոյեմբերի լույս 27-ի գիշերը բողոքի ցույցեր են սկսվում նաև հիմնականում թալիշաբնակ Լենքորանում (Իրանի սահմանին մոտ շրջան)[8]: 2016 թ. Լենքորանում ձերբակալվում են կրոնական գործիչներ Հիքմեթ Իսաևը և սեյյեդ Վուգար Իսայիլովը, որոնք մեղադրվում էին Նարդարանում ձերբակալված Թալեհ Բաղիրզադեի խմբավորմանը հարելու համար[9]: Դեկտեմբերի 1-ին անվտանգության ուժերը շրջափակեցին Նարդարանը և զրահատեխնիկա մտցրին ավան: Ալիևյան բռնապետական վարչակարգը, աչքի առաջ ունենալով Սումգայիթի և Բաքվի հայության ջարդերը, հսկայական զինուժ կուտակելով Նարդարանի շիաների ուղղությամբ ևս, փորձեց բռնի ուժով ճնշել վարչակարգի համար ոչ հաճո ընդդիմադիր ուժերի կրոնական մղումները: Դեկտեմբերի 4-ին Ադրբեջանի խորհրդարանը օրենսդրական փոփոխություններ կատարեց «ահաբեկչության և կրոնական ծայրահեղականության դեմ պայքարի» վերաբերյալ: Նարդարանում տեղի ունեցած անկարգությունների հետևանքով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը դեկտեմբերի 5-ին ստորագրեց օրենք, որն արգելում է կրոնական արմատական գաղափարներ տարածող կազմակերպությունների գործունեությունը[10]:

Գոյություն ունեն մի շարք արտաքին և ներքին գործոններ, որոնց հետևանքով տեղի են ունեցել նարդարանյան դեպքերը: Արտաքին գործոններից են Իրանի հարևանությունը Ադրբեջանին և համաշխարհային շիայական կենտրոն լինելը: Հետաքրքիր է, որ Նարդարանում ցուցարարները պահում էին պաստառներ, որոնց վրա իրանցի բարձրաստիճան պետական և հոգևոր գործիչների նկարներն էին: Պետք է նշել, որ Ադրբեջանում մշտապես վախեցել են Իրանի կողմից իրենց երկիր իսլամական հեղափոխության արտահանումից, ինչի համար բարենպաստ հող կարող է հանդիսանալ Նարդարանը: Այդ կապակցությամբ Բաքվում Իրանի դեսպանատունը հանդես եկավ հայտարարությամբ, որում նշվում էր հետևյալը. «Իրանը երբեք չի հետապնդել Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու նպատակներ և ոչ մի դեր չի խաղացել Նարդարանում տեղի ունեցած իրադարձություններում»[11]:

Դեպքերի առնչությամբ Ադրբեջանի ՆԳՆ-ն և գլխավոր դատախազությունը նոյեմբերի 27-ին համատեղ հայտարարություն հրապարակեցին՝ պնդելով, թե բնակավայրի շիա հավատացյալները երկրի Սահմանադրությունը փոխելու և շարիաթ հաստատելու նպատակով ստեղծել են «Մուսուլմանական միասնություն» կազմակերպությունը, կողմնակիցներ ձեռք բերել երկրի այլ շրջաններում և նրանց

Բռնություններ ցուցարարների նկատմամբ

ապահովել զենքով[12]:

ԱՀ իշխանությունների կարծիքով՝ «Մուսուլմանական միասնություն» միավորումը պատրաստվում էր իրականացնելու մի շարք ահաբեկչական գործողություններ՝ նպատակ ունենալով Ադրբեջանում կատարելու հեղափոխություն և հաստատելու շիայական բնույթի կարգեր: Դեպքերին բավականին կոշտ արձագանքեցին իրանցի հոգևորականները և պատգամավորները: Այսպես, օրինակ, Աստարա քաղաքում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Քազեմ Հաֆեզ Նիան, անդրադառնալով Նարդարանի դեպքերին, ընդգծել է, որ Ադրբեջանում շիա հավատացյալների անվտանգությունն ապահովված չէ, և Բաքվի իշխանությունները պետք է պատասխանատվություն կրեն նրանց հանդեպ ոստիկանների կիրառած բռնությունների համար[13]:

Իսկ Արևելյան Ատրպատական նահանգում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ այաթոլլահ Մոջթահեդ Շաբեսթարին, դատապարտելով ադրբեջանական իշխանություններին, նշել է. «Իրանը ոչ մի մասնակցություն չի ունեցել այս իրադարձություններին. Նարդարանում տեղի ունեցածը հեղափոխական շարժում է: Եթե Ադրբեջանը վերջ չդնի իր ռեպրեսիվ գործողություններին, ապա Իրանը ստիպված կլինի վերանայել իր հարաբերությունները Ադրբեջանի հետ»[14]:

Իր հերթին Կովկասի մուսուլմանների առաջնորդ շեյխ-ուլ-իսլամ Հաջի Ալլահշուքյուր Փաշազադեն նարդարանյան իրադարձությունների վերաբերյալ ասել է հետևյալը. «Այսօր Ադրբեջանի բարօրությունը չցանկացող մի շարք ուժեր փորձում են օգտագործել կրոնական գործոնը և խուճապ ստեղծել: Իսլամը եղբայրության կրոն է: Թալեհ Բաղիրզադեի նման մարդիկ ցանկանում են կործանել ադրբեջանական պետությունը[15]: Բաքվի քարոզչական լավագույն ավանդույթներին համաձայն՝ Փաշազադեն նաև «հայկական հետք է փնտրել» նշված իրադարձություններում: Նարդարանի դեպքերն ունեն ներքին դրդապատճառներ ևս՝ անմիջականորեն աղերսներ ունենալով երկրում տիրող սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետ: Տվյալ իրավիճակում ԱՀ իշխանություններին մնում էր միայն ճնշել բնակչությանը՝ միաժամանակ ապահովելով իրենց շահաբաժինը արտաքին քաղաքականության մեջ՝ միջազգային հանրությանը ցույց տալով ԱՀ ավտորիտար պետության արդարացված լինելը, քանզի պետության մի ստվար զանգված ցանկանում է երկրում հաստատել արմատական իսլամական կարգեր:

Այսպիսով՝ կարող ենք հանգել այն եզրակացությանը, որ նարդարանյան դեպքերը պայմանավորված են Բաքվի վարչակազմի կրոնական քաղաքականությամբ և հավատացյալների հանդեպ հալածանքներով: Բաքվի վարչակազմի իրականացրած այս հակաշիայական կոշտ քաղաքականությունը նշանավորվել է տարբեր ցույցերով, ձերբակալություններով ու արյունալի բախումներով և ուղեկցվել տարբեր մզկիթների փակմամբ ու ավերմամբ, հոգևորականության հետապնդումներով, բազմաթիվ կրոնական ծիսակատարությունների անցկացման արգելքներով և, իհարկե, արևմտյան արժեքների ներդրմամբ (եվրատեսիլյան օրինակով):

Անժխտելի է այն փաստը, որ շիա հավատացյալների խմբերը Բաքվի բռնապետի համար քաղաքական ընդդիմություն են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանում աշխարհիկ ընդդիմությունն ամբողջությամբ ճնշված է: Ադրբեջանական հանրապետության արշավը Նարդարանի դեմ և Հուսեյնի դրոշների հավաքումը, Նարդարանի շիաների ահաբեկումն ու հալածանքը վկայում են Բաքվի կողմից շիաների դեմ դավադրության նոր ծավալների մասին:

Բողոքի հանրահավաք Նարդարանում

Հղումներ

1- Մշակութային ցեղասպանությունը (նաև՝ Սպիտակ ցեղասպանություն) որևէ ժողովրդի կամ էթնիկ խմբի պատմամշակութային հուշարձանների, հոգևոր արժեքների, ազգային մշակույթի այլ տարրերի ոչնչացումն է կամ յուրացումը:
2- Ադրբեջանական հանրապետության 7,5 մլն բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 93 տոկոսը, մուսուլման է: Ադրբեջանական պաշտոնական տվյալներով՝ շիաները մուսուլման բնակչության 65 տոկոսն են կազմում, սուննիները՝ 35:
3- Գանձակում, Լենքորանում, Մասալլիում, Ջալիլաբադում և այլ շրջաններում ձերբակալվել են «Ադրբեջանի իսլամական կուսակցության» Ասթարայի մասնաճյուղի ղեկավարը և Ադրբեջանի Հանրապետության տասնյակ այլ ակտիվիստներ և հոգևորականներ, որոնցից մի քանիսը նահատակվել են բանտում, իսկ մյուսները դեռ անազատության մեջ են:
4- Տես Are Taleh Bagirzadeh and other Nardaran shia muslims ForB prisioners? Human Right without Frontieres, 25.08.2016, https://hrwf.eu/are-taleh-bagirzade-and-other-nardaran-shia-muslims-forb-prisoners-1/ (մուտք՝ 13.05.2019):
5- 2001 թ. մայիսին նարդարանցիները սոցիալական պայմանների բարելավման պահանջով սկսեցին բողոքի ցույցեր անցկացնել, որոնք շարունակվեցին 9 ամիս: Ի վերջո ցույցերը վերածվեցին բախումների: Նարդարանցիների և Ադրբեջանի ուժայինների միջև բախումներ տեղի ունեցան նաև 2006, 2010-2011 և 2015 թթ.: Առանց բախումների ցույցեր տեղի ունեցան նաև 2013-2014 թթ.: Նարդարանցիները ակտիվորեն մասնակցել են նաև 2010-2011 թթ. դպրոցներում հիջաբ կրելու արգելքի դեմ բողոքի ցույցերին:
6- Տես واکاوی علل سرکوب خونین شیعیان در نارداران جمهوری آذربایجان, https://bit.ly/3JMQVoO, 09,12.2015 (մուտք՝ 27.03.2022):
7- Տես سرکوب خشونتآمیز شیعیان در مهمترین مرکز شیعی آذربایجان https://bit.ly/3q4fPsk, 03.12.2015, (մուտք՝ 27.03.2022):
8- Տես Меджид Ф., Эксперты в Баку заявили об ошибочности силовой операции в Нардаране, 2015, https://www.kavkaz-uzel.eu/articles/273722/ (մուտք՝ 08.03.2019):
9- Տես Аресты религиозных деятелей в Ланконе, 21.04.2016, http://tolishpress.org/news/3587.html (մուտք՝ 16.03.2019):
10- Տես Нардаран, Кавказский Узел, 21.07.2017. https://www.kavkaz-uzel.eu/articles/291187/ (Просмотрено: 18.03.2021).
11- Посольство Ирана сделало заявления в связи с событиями в Нардаране, Российское информационное агенство, 2015,
12-http://www.iran.ru/news/politics/99446/Posolstvo_Irana_sdelalo_zayavleniya_v_svyazi_s_sobytiyami_v_Nardarane (Просмотрено: 30.03.2018).
13- Տես Daxili İşlər Nazirliyi və Baş Prokurorluq Nardaran qəsəbəsində keçirilən əməliyyatla bağli məlumat yayıb, AzərTAC, 26.11.2015, https://azertag.az/xeber/905686 (մուտք՝ 15.05.2019):
14- Տես امام-جمعه-بندر-استراء-شیعیان-در-کشور-ج, http://qafqaz.ir/fa/ (մուտք՝ 01.05.2019): Mizan News Agency, 05.12.2015, https://www.mizanonline.com/fa/news/ (Accessed: 03.05.2019).
15- Տես Шейх уль-ислам о бунте экстремистов в Нардаране, 2015, https://haqqin.az/news/59037 (մուտք՝ 30.04.2022):

Ուկրաինական դանակը հասավ ռուսական ոսկորին

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

Մարտի 21-ին ԱՄՆ նախագահ Ջ. Բայդենը խոշոր բիզնեսմենների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ ձևավորվում է նոր աշխարհակարգ, որը գլխավորելու է Միացյալ Նահանգները, և ոչ ոք չի կարող խանգարել դրան: Նա միայն մոռացավ նշել, որ այդ գործընթացը ԱՄՆ-ն ծրագրել է տասնամյակներ առաջ, և արդեն մոտ 40 տարի է, ինչ հաջողությամբ իրականացնում է: Հաջողությունների շարքում նա կարող էր նշել հաղթանակը Սառը պատերազմում, ԽՍՀՄ փլուզումը, Հարավսլավիայի մասնատումը, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Աֆղանստան ընկած որոշ պետությունների ջախջախումը, մի քանիսի հասարակական կարգի տապալումը կամ տնտեսության քայքայումը և այլն, և այլն: Նոր, միաբևեռ աշխարհակարգ կառուցելու համար անհրաժեշտ է քանդել հինը, քանդել հիմնովին: Հինը ձևավորվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով: Միջազգային հարաբերությունները կարգավորող պայմանագրերը, եվրոպական և ասիական պետությունների սահմանները գծվել ու հաստատվել էին մեծ եռյակի՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից և անսասան մնացին մինչև Խորհրդային Միության և Վարշավյան պայմանագրի փլուզումը: Ուրեմն անհրաժեշտ էր ռեվիզիայի ենթարկել այդ պատերազմի պատճառներն ու հետևանքները, շրջանցել միջազգային օրենքները, վերանայել ու նոր գնահատականներ տալ մասնակից պետությունների, դրանց ղեկավարների դերակատարությանն ու վարած քաղաքականությանը, և ամենակարևորը՝ վերաձևել արևելաեվրոպական պետությունների սահմանները, որոնք հաստատվել էին 1939 թ.:

Նոր աշխարհակարգ կառուցելու ճանապարհին կանգնել է Ռուսաստանը, որն այսօր Արևմուտքի հիմնական թիրախն է: Անշուշտ, ռուս-ուկրաինական պատերազմը, որում հաղթող, որպես այդպիսին, չի կարող լինել, քանի որ այն, ըստ էության, քաղաքացիական պատերազմ է, ԱՄՆ-ի հերթական հաջողությունն է, որին հասնելու համար ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո չափազանց մեծ միջոցներ ու եռանդ էին ներդրվել: Իսկ 2014 թ. կազմակերպված հեղաշրջումից հետո, երբ իշխանության բերեցին հավաքագրված օլիգարխներին և բանդերական նացիստներին, ովքեր արդեն անթաքույց սկսեցին Ուկրաինան նախապատրաստել պատերազմի ռուսների դեմ: Պատերազմ մինչև վերջին ուկրաինացին, ինչպես նշեց Բորիս Ջոնսոնը: ՌԴ բոլոր փորձերը՝ խուսափելու դրանից, ապարդյուն էին: Ռուսաստանը արդեն նշանակված էր մեղադրյալ և դատապարտված էր կատարելու ագրեսորի դերը: Մինչ այդ ԱՄՆ-ին հաջողվեց համախմբել դաշնակիցներին Եվրոպայում և հակառուսական ճակատ ստեղծել: Եվրոպացիները մահու չափ վախենում են Ռուսաստանի դեմ պատերազմի

մեջ ներքաշվելուց՝ հասկանալով, որ ոչ ԱՄՆ-ն, ոչ ՆԱՏՕ-ն չեն փրկի իրենց, եթե ծայրահեղության հասցված ռուսները դիմեն միջուկային հարվածի: Բացի այդ՝ Գերմանիայի և Ֆրանսիայի նման արդյունաբերական ծանրաքաշ երկրները հասկանում են, որ ԱՄՆ-ի կողմից թելադրվող պատժամիջոցները, մանավանդ էներգետիկ ոլորտում, ծանր կացության մեջ են դնում հենց իրենց տնտեսությունները: Ինչպե՞ս բացատրել, որ եվրոպացիները, մի կողմ դնելով այս փաստարկները, այդուհանդերձ ենթարկվեցին ԱՄՆ-ի պահանջներին:

Կարելի է ենթադրել հետևյալը: Նախ՝ ամերիկացիները հավաստիացրել են եվրոպացիներին, որ իրենք երբեք չեն անցնի կարմիր գծերը, ինչը կարող է առիթ տալ ռուսներին միջուկային պատերազմ սկսելու արևմտաեվրոպական պետությունների դեմ: Այդ գծերը նշել են հենց ռուսները, այն է՝ ՆԱՏՕ-ն այլևս չպետք է ընդլայնվի դեպի արևելք, և Ուկրաինան չպետք է անդամակցի այդ կազմակերպությանը: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ն թույլ չի տա նատոյական որևէ երկրի անմիջական մասնակցությունը այս պատերազմին և կկասեցնի ցանկացած քայլ, որը կարող է առիթ հանդիսանալ դրա համար: Նրանք նաև բացատրել են, որ հակառակորդին կարելի է սասանող հարված հասցնել այլ պետությունների ձեռքերով՝ լավ զինելով նրանց: Չէ՞ որ Ուկրաինայում թափվելու է ռուսների արյունը, այլ ոչ թե արևմտաեվրոպացիների: Իսկ հաջողության դեպքում ռուսական արյունը կթափվի նաև Մոսկվայում, երբ պատժամիջոցների հետևանքով ստեղծված տնտեսական կոլապսը և սոցիալական ծանր վիճակը կհանգեցնեն հեղաշրջման, եթե ոչ քաղաքացիական պատերազմի Ռուսաստանում: Ազատվելով Վ. Պուտինից՝ ինչպես Ուկրաինայում 8 տարի առաջ, ՌԴ-ում իշխանության կբերվեն մարդիկ, որոնք հլու-հնազանդ կկատարեն բոլոր հրահանգները և կվերացնեն եվրոպացիների մտահոգությունները: Այդ հեղաշրջումը հեռու չէ, մանրակրկիտ նախապատրաստված է, գործող անձինք սպասում են ազդանշանի, որը կտրվի հարմար պահի: Իսկ մինչ այդ համբերատարությամբ պետք է տանել հնարավոր զրկանքները, հաղթահարել դժվարությունները:

Ուկրաինային առնչվող ռազմաքաղաքական զար-

գացումներում հատուկ ուշադրության է արժանի ՆԱՏՕ-ի անդամ այնպիսի երկրների վարքագիծը, ինչպիսիք են Լեհաստանը, Թուրքիան և Ռումինիան, որոնց տարածքային հավակնությունները Ուկրաինայի նկատմամբ ունեն պատմական հիմքեր և համատեղվում են ԱՄՆ-ի կողմից վերջին համաշխարհային պատերազմի հետևանքով ձևավորված իրողությունների վերանայման հետ:

Լեհաստանին ձեռնտու չէ ոչ Ռուսաստանի, ոչ էլ Ուկրաինայի հաղթանակը: Լեհերը ձգտում են հասցնելու հակամարտությունը այնպիսի կետի, երբ բախման ճակատը կմոտենա պատմական Գալիցիային, և նրանք հնարավորություն կունենան «խաղաղապահների» անվան տակ զորք մտցնելու Արևմտյան Ուկրաինա, այսինքն՝ օկուպացնելու, իսկ հետո վերամիավորելու այն տարածքները, որոնք մինչև 1939 թ. Լեհաստանի կազմում էին: Իսկ եթե հաջողվի նույն իրավիճակը ստեղծել նաև Բելառուսում, ապա կվերամիավորեն նաև այդ երկրի արևմտյան հատվածը, որը նույնպես մինչև 1939 թ. պատկանում էր իրենց: Լեհաստանի նման նպատակների իրականացումը նախադեպ կհանդիսանա նաև Ռումինիայի համար, որի արևելյան հատվածը՝ Բեսարաբիան, կցվեց ԽՍՀՄ-ին՝ կազմելով Մոլդովական ԽՍՀ-ն, և դրանից հարավ ընկած զգալի մի տարածք միացվեց Ուկրաինային:

Եթե ՌԴ-ն չկարողանա ավարտին հասցնել զինվորական գործողությունը Ուկրաինայի ողջ տարածքում, ուստի և չկարողանա խոչընդոտել լեհական զորքի ներխուժումը Գալիչինա, ապա ստիպված կլինի համաձայնել երկրի մասնատմանը: Այդ դեպքում լեհերը ԱՄՆ-ի օգնությամբ, քաղաքական և դիվանագիտական ճանապարհներով կհիմնավորեն ու կվերամիավորեն տարածքը՝ համաձայն 1939 թ. քարտեզի:

Թուրքիան, որը, 18-րդ դարից սկսած, չի համակերպվում Ղրիմի կորստյան հետ և բաց չի թողնում որևէ հնարավորություն՝ ետ բերելու այն, ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև ուկրաինական խաղի ակտիվ մասնակիցն է: Ի տարբերություն նշված երկու պետությունների՝ Թուրքիային ձեռնտու է Ռուսաստանի պարտությունը. միայն այդ դեպքում է իրական հնարավորություն ստեղծվում ետ բերելու Ղրիմը: Հաղթած Ուկրաինայի ձեռքից Ղրիմը կարելի է վերցնել, գնել, իսկ Ռուսաստանից՝ ոչ: Մինչև 2014 թ. մարտին ռուսների կողմից այդ թերակղզու վերամիավորումը թուրքերը նախապատրաստական մեծ աշխատանք էին կատարել, մասնավորապես ուժեղացնելով ղրիմյան թուրքամետ թաթարների համայնքը, ծավալելով ֆինանսատնտեսական և գաղափարաքարոզչական ակտիվ գործունեություն, և վստահ էին, որ, օգտագործելով իշխանության եկած օլիգարխներին, քայլ առ քայլ կսեփականացնեն Ղրիմը: Եթե ուկրաինացիները կարողանային դիմադրություն կազմակերպել և գոնե մեկ շաբաթ դիմադրել ռուսներին, չէր բացառվի թուրքերի ռազմական ներխուժումը Ղրիմ: Այսօր էլ, եթե Ռուսաստանը չկարողանա ավարտին հասցնել Ուկրաինայում ձեռնարկած գործողությունն ու ընկրկի կամ մնա կեսճանապարհին, Թուրքիան, իհարկե Ուկրաինայի խնդրանքով և ԱՄՆ-ի օրհնությամբ, ոտք կդնի Ղրիմ:

Ռուսաստանի հավակնությունները Ուկրաինայի նկատմամբ ավելի հիմնավոր են պատմական և էթնիկական առումներով: Դարեր շարունակ այդ տարածքները եղել են ռուսական պետության կազմում, իսկ բնակչության ճնշող մեծամասնությունը համարել է իրեն ռուս: Սակայն Ռուսաստանի համար գլխավորը տարածքային հարցերը չեն: Մինչև Ուկրաինայում արևմտամետ, ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցելու քաղաքական ուղի ընտրած ուժերի՝ իշխանության գալը և նրանց կողմից խտրականությունները ռուսների, նրանց լեզվի ու մշակույթի նկատմամբ, ուկրաինական նացիստների հերոսացումը և բանդերական ջոկատների կամայականություններն ու հաշվեհարդարները ընդդիմախոսների նկատմամբ Ռուսաստանը երբևէ կասկածի տակ չի դրել Ուկրաինայի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը: Ռուսաստանի համար կենսական խնդիրը անվտանգությունն է: Ուկրաինայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին, այն էլ՝ ռուսների նկատմամբ թշնամաբար տրամադրված և ԱՄՆ-ի անմիջական կառավարման տակ գտնվող իշխանությունների գլխավորությամբ, մահացու սպառնալիք է Ռուսաստանի համար: Դեռ անցած տարվա դեկտեմբերին ՌԴ-ն պաշտոնապես դիմեց ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ղեկավարությանը՝ մանրակրկիտ բացատրելով այս հանգամանքը, և պահանջեց նրանցից պաշտոնական փաստաթղթային երաշխիքներ, որ Հյուսիսատլանտյան կազմակերպությունը կդադարեցնի իր ընդլայնումը դեպի արևելք՝ նկատի ունենալով նախ և առաջ Ուկրաինայի անդամակցությունը: Քննարկումներ և բանակցություններ վարելու իմիտացիայից հետո նրանք պատասխանեցին, թե ամեն երկիր ազատ ընտրության իրավունք ունի, այսինքն՝ պատասխանատվությունը բարդեցին ուկրաինացիների վրա:

Այս խաղը հասկանալու համար այն պետք է դիտել ԱՄՆ-ի գլոբալ քաղաքականության ենթատեքստում: ԱՄՆ-ի գլոբալ քաղաքականությունը պլանավորողները մանրամասնորեն հաշվարկել են ՌԴ-ի դեմ պատերազմի կործանարար հետևանքները: Երկու գերտերությունների սպառազինության հզորության մակարդակն այնքան բարձր է, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրների թվի ավել կամ պակաս լինելը էապես չի կարող փոխել ուժերի հարաբերակցությունը, և Ուկրաինայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին լուրջ առավելություններ չի տալիս, ավելին՝ մեծացնում է հակառակորդի հետ բախման վտանգը: Միայն պատերազմի սկսվելուց հետո ՆԱՏՕ-ի ղեկավարությունը հստակ հայտարարեց, որ մտադիր չէ ընդունել Ուկրաինային դաշինքի կազմ: Փոխարենը նրանք նույնքան մանրակրկիտ մշակել են հակառակորդին պարտության մատնելու մարտավարությունը՝ առանց նրա հետ անմիջական բախման մեջ մտնելու, այսինքն՝ մեկ այլ պետության կամ ուժի ձեռքերով: Իհարկե, կողմնակի ճանապարհներով հակառակորդին վնաս հասցնելը հին մարտավարություն է, բայց հիմնականում օգտագործվել է որպես օժանդակ միջոց, իսկ մեր օրերում դառնում է առաջնային՝ հակառակորդներին

ծանր հարված հասցնելու և պարտության մատնելու գործում: ԱՄՆ-ն այս մարտավարությունը մեծ արդյունավետությամբ կիրառում է Ուկրաինայում: Այսպես, անկախ այն բանից, թե ինչով կավարտվի այս պատերազմը, ԱՄՆ-ն, չմասնակցելով դրան որպես կողմ, լուծեց մի քանի կարևոր խնդիրներ: Նախ՝ մեղադրելով ռուսներին ագրեսիայի մեջ՝ կիրառեց տոտալ պատժամիջոցներ և ծանր հարված հասցրեց ՌԴ տնտեսությանը: Երկրորդ՝ անընդհատ զենք ու զինամթերք մատակարարելով ուկրաինացիներին՝ երկարաձգում է նրանց դիմադրությունը՝ հնարավորինս մեծ նյութական ու մարդկային կորուստներ պատճառելու համար ռուսներին: Այդ կորուստների պատասխանատվությունը բարդելով Վ. Պուտինի վրա և ծավալելով հզոր քարոզչություն նրա դեմ հասարակության մեջ բորբոքում է սոցիալական դժգոհությունները՝ Ռուսաստանում ներքին իրավիճակը ապակայունացնելու նպատակով: Միաժամանակ, հաջողությամբ խուսափելով մեծ ծախսերից, ԱՄՆ-ն Ուկրաինային ցուցաբերվող օժանդակության ֆինանսական բեռը, ինչպես նաև հազարավոր փախստականների հոգսը բարդում է ԵՄ երկրների վրա, պարտադրում վերջիններիս զրոյացնել ՌԴ-ի հետ համագործակցությունը բոլոր ուղղություններով ու մակարդակներով՝ կախման մեջ դնելով ԵՄ աշխարհատնտեսական շահերն իր գլոբալ ռազմավարությունից:

Ջ. Բայդենի, նրա ետևում կանգնած՝ ԱՄՆ ռազմավարությունը պլանավորող գործիչների հնչեցրած դրույթները նոր աշխարհակարգ ձևավորելու վերաբերյալ հնարավորություն են տալիս բացատրելու 30 տարում Ուկրաինայում կատարված իրադարձությունների պատճառներն ու հետևանքները, դրանց ծավալման համակարգային բնույթը: Դրանք նաև հնարավորություն են տալիս հասկանալու ՌԴ-ի նկատմամբ վարվող քաղաքականության ընդհանուր տրամաբանությունը և կանխատեսելու հետագա քայլերի ժամանակն ու ուղղությունները: Հասկանալի է, որ ՌԴ-ի նման աշխարհաքաղաքական մրցակցին խաղից դուրս թողնելու համար «ուկրաինական դանակի» հարվածը բավարար չէ, ուստի կսրվեն այլ «դանակներ»: Դրանցից մեկը կսրվի Հարավային Կովկասում: Դրա հիմքերը նախապատրաստվել են դեռ 2018 թ.: Թվարկենք վերջին 5 տարում այս տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները:

2018 թ. տեղի ունեցավ թավշյա հեղափոխություն Հայաստանում: Իշխանության բերված նեոլիբերալները երկու տարում խարխլեցին երկրի միջազգային հարաբերությունները, բանակը, պետական ինստիտուտները: Այդ ընթացքում Ադրբեջանը խորացրեց ռազմաքաղաքական համագործակցությունը Թուրքիայի հետ, շեշտակի մեծացրեց ժամանակակից զենք ու զինամթերքի գնման ծավալները, հազարավոր թուրք և իսրայելցի զինվորական մասնագետների օգնությամբ վարժեցնում էր իր սպաներին ու զինվորներին: Ակնհայտ էր, որ Ադրբեջանը պատրաստվում էր պատերազմի: Սակայն նույնքան ակնհայտ էր, որ ազերիները պատրաստվում էին հաղթանակի, իսկ Հայաստանը՝ պարտության:

Չնայած Ռուսաստանի բազմաթիվ նախազգուշացումներին և բանակցությունների միջոցով պատերազմից խուսափելու կոնկրետ առաջարկներին՝ հայկական կողմը համառորեն անտեսում էր դրանք: Պատերազմում Հայաստանը պարտություն կրեց և վերջնագիր ստորագրեց: Ռուսական խաղաղապահ զորքերը մտան Արցախ՝ թույլ չտալով Ադրբեջանին ամբողջությամբ տիրել այդ հանրապետությանը:

Այսպիսով՝ 2022 թ. Հարավային Կովկասում ստեղծվել է մի իրավիճակ, երբ առկա են երկու իրական ուժեր՝ Ադրբեջանը և ՌԴ խաղաղապահ զորքերը: Փոխադարձ հանդուրժողականությունը նրանց միջև ձևական է և չի կարող քողարկել իրարամերժ նպատակներով պայմանավորված իրական հակասությունները երկու երկրների միջև: Ադրբեջանի համառ ձգտումը՝ վերակցելու Արցախը և վերականգնելու իր պատկերացրած տարածքային ամբողջականությունը, անհամատեղելի է ռուս խաղաղապահների ներկայության հետ: Բացի Ռուսաստանից, ի դեմս իր խաղաղապահների, որևէ այլ արգելք Ադրբեջանի համար գոյություն չունի: Հայաստանի իշխանությունները չունեն ռազմական, քաղաքական ու դիվանագիտական ռեսուրսներ Արցախը պաշտպանելու համար և հատուկ ջանքեր էլ չեն գործադրում այդ ուղղությամբ: Ադրբեջանում աստիճանաբար թափ է հավաքում հակառուսական հիստերիան, հաճախակի են դառնում հարձակումները արցախյան բնակավայրերի վրա, սադրանքները խաղաղապահների նկատմամբ: Այստեղից էլ ձևավորվում է այն ինտրիգը, որն ամերիկյան ռազմաքաղաքական կենտրոններում կպլանավորվի և որպես գործնական ծրագիր կօգտագործվի Ռուսաստանի դեմ: Բնականաբար, այդ ծրագրի իրականացման տեսուչ կնշանակվի Թուրքիան, որն արդեն հսկում և ուղղորդում է հարավկովկասյան պետությունների գործողությունները: Այսինքն՝ Ռուսաստանի դեմ կսրվի մի նոր՝ «ադրբեջանական դանակ»: Հետագա իրադարձությունները կընթանան արդեն ուկրաինական սցենարով: Իհարկե, չի կարելի բացառել, որ ադրբեջանցիները կփորձեն դիվանագիտական ճանապարհով, քաղաքական որոշակի փոխզիջումներով հասնել ռուսների հեռանալուն և խուսափել նրանց հետ բախումից: Թույլ չեն տա: Խաղի մեջ մտնելուց հետո խաղի կանոնները չի կարելի փոխել: Իլհամ Ալիևը պետք է որ լավ հիշի նման փորձի հետևանքները Վիկտոր Յանուկովիչի դեպքում:

Իսկ ինչ դեր է հատկացված Հայաստանին: Իսկ ինչ դեր կարող է խաղալ մի պետություն, որի իշխանությունները կույր են, խուլ են ու համր ազգային և պետական շահերի հանդեպ: Թերևս միայն մեկ դեր՝ լինել սրաքար ադրբեջանական դանակը սրելու համար:

Նոր աշխարհակարգի ձևավորման ամերիկյան ռազմավարության տրամաբանությունը թույլ է տալիս պատկերացնելու աշխարհաքաղաքական նման զարգացումներ: Բացի ամերիկյանից՝ կան, սակայն, այլ ռազմավարություններ ևս, և թե ինչպես կզարգանա նոր աշխարհակարգի կառուցման գործընթացը, ցույց կտա ժամանակը:

Ինչո՞ւ են Թուրքիան ու Ադրբեջանն այդքան անկեղծորեն կարեկցում Ուկրաինային

Պյոտր Մակեդոնցև

https://eadaily.com/ru/news/2022/04/01/pochemu-turciya-i-azerbaydzhan-tak-otkrovenno-sochuvstvuyut-ukraine (մուտք՝.11.04.2022 թ.)

Քանի դեռ ռուսաստանյան հասարակության ուշադրությունը մեծապես սևեռված է Ուկրաինայում իրականացվող օպերացիային և դրա նկատմամբ Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպական Միության, Մեծ Բրիտանիայի ու Ավստրալիայի երկրների արձագանքին, մեր հայացքն ուղղենք դեպի հարավ՝ թյուրքական աշխարհի կողմը:

Թուրքիան, որը ՆԱՏՕ-ի անդամ է, յուրահատուկ դիրքորոշում ունի: Մի կողմից՝ Անկարան դարձավ այն երկիրը, որը կարող է միջնորդ հանդիսանալ Մոսկվայի և Կիևի միջև՝ կոչ անելով նրանց երկարաժամկետ զինադադարի, մյուս կողմից՝ Թուրքիայից զենքը շարունակում է հասնել Ուկրաինա:

Ընդ որում, ի տարբերություն չարությունից խելագարված եվրոպացի քաղաքական գործիչների, թուրքական ղեկավարությունը, այդ թվում՝ Ռեջեփ Թայիբ Էրդողանը, չեն պատրաստվում պատժամիջոցներ սահմանել Ռուսաստանի դեմ, չնայած, միևնույն է, քննադատում են Ուկրաինայի ապառազմականացումն ու ապաազգայնականացումը: Հետաքրքիր է նաև Թուրքիայի քաղաքացիների տեսակետը Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Թուրքիայի քաղաքացիների 48 տոկոսը ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին անվանել է ուկրաինական ճգնաժամի մեղավորներ: 33,7%-ը տեղի ունեցողի մեղավոր է համարել Ռուսաստանին: Եվս 7,5%-ը ճգնաժամի մեղավոր է համարում Ուկրաինային: Իհարկե, կարելի է նկատել, որ Թուրքիայում այնքան էլ քիչ չեն նրանք, ովքեր ավելի շուտ թշնամաբար են տրամադրված Ռուսաստանի նկատմամբ: Քաղաքական գործիչներից, սակայն, ամենաագրեսիվ դիրքորոշումը զբաղեցրել է խորհրդարանական ընդդիմադիր «Լավ» կուսակցության առաջնորդ Մերալ Աքշեները, որը նույնիսկ կոչ է արել պատժամիջոցներ կիրառել Ռուսաստանի դեմ:

Բոլորովին այլ պատկեր է Ադրբեջանում, որը ձևականորեն հանդես է գալիս Մոսկվայի և Կիևի հաշտեցման օգտին: Գործնականում, սակայն, ռուսական իշխանությունները ստիպված էին արգելափակել որոշ ռուսալեզու ադրբեջանական ՋԼՄ-ներ՝ Ռուսաստանի հանդեպ բացահայտ թշնամական լուսաբանումների համար, իսկ Բաքվում պրոուկրաինական ակցիաներ էին ընթանում: Նշենք նաև, որ Ադրբեջանում, ավանդաբար, բացարձակ մեծամասնությունն աջակցել է Ուկրաինային, և միայն փոքրամասնությունը գաղտնի կամ ակնհայտորեն կարեկցում է Ռուսաստանին:

Ինչի՞ հետ կարող է կապված լինել թյուրքական երկու պետությունների հասարակությունների նման արձագանքը: Թուրքիայի ներկայիս դիրքորոշման որոշ պատճառների մասին մենք արդեն գրել ենք: Ադրբեջանի դիրքորոշումը կարող են բացատրել ՎՈՒԱՄ-ի ավանդույթներով (ՎՈՒՈՒԱՄ-ը տարածաշրջանային կազմակերպություն է հետխորհրդային տարածքում, որը ստեղծվել է 1997-ին՝ Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Մոլդովայի կողմից, հետագայում նրան է միացել նաև Ուզբեկստա,նը: Կազմակերպության անվանումն առաջացել է նրա մեջ մտնող երկրների անունների առաջին տառերից) և ղարաբաղյան չլուծված հակամարտությամբ: Սակայն ես համարձակվում եմ ենթադրել, որ հարցն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ Ուկրաինայի ապառազմականացման և ապաազգայնականացման ռուսական գործողությունը կարող է զրոյացնել Ռուսաստանի հարավը վերակառուցելու թուրք-ադրբեջանական նախագիծը, որը հարյուր տարվա պատմություն ունի:

Սակայն, նախքան Թուրքիայի և Ադրբեջանի որոշակի շրջանակների համակրանքի պատճառները բացատրելը, ուշադրություն դարձնենք մեկ կարևոր պահի վրա: 2022-ի մարտի 29-ին թուրքական «Անադոլու» պետական լրատվական գործակալությունը հարցազրույց է վերցրել Թուրքիայի քաղաքացի Մեհմեդ Յուջեից՝ Մարիուպոլում գտնվող Սուլթան Սուլեյման մզկիթի իմամից:

Ըստ Յուջայի, իրեն Թուրքիայից Մարիուպոլ են ուղարկել 4 ամիս առաջ՝ այն պատճառով, որ տիրապետում է ռուսերենին: Հարցազրույցից պարզ է դառնում, որ բացի նրանից, Մարիուպոլում գտնվել են Թուրքիայի այլ քաղաքացիներ, որոնց տարհանել են ուկրաինական իշխանությունների աջակցությամբ: Իմամը նաև հայտնում է, որ որոշ պահերի մզկիթում թաքնվել է մինչև 200 մարդ, ինչը որոշակի մտորումների տեղիք է տալիս:

Ուկրաինայում մուսուլմանները շատ չեն: Յուջիի դեպքում մենք անվիճելի ապացույցներ ենք տեսնում Ուկրաինայում Թուրքիայի կրոնական լուրջ ազդեցության վերաբերյալ, ինչի մասին ավելի վաղ գրել էին մասնագետները:

Անկարայի և Կիևի համագործակցությունը տնտեսական, գիտական և տեխնոլոգիական ոլորտներում կարելի է հասկանալ: Բայց ինչո՞ւ է Թուրքիան իսլամ տարածում ոչ մահմեդական երկրում և ինչպե՞ս է դա կապված ուկրաինական ազգայնականության հետ:

Բանն այն է, որ ուկրաինացի ազգայնականները Թուրքիայի և Ադրբեջանի հակառուսական շրջանակների վաղեմի դաշնակիցներն են: Այդ հարաբերությունները սկիզբ են առնում Ուկրաինայի ազատագրման միություն հակառուսական կազմակերպության ժամանակներից, որը ստեղծվել

է Լվովում՝ 1914-ի օգոստոսի 4-ին, Ռուսական կայսրությունից սերված ուկրաինացի ազգայնականների կողմից: Արդեն 1914-ի սեպտեմբերին միության գործիչներից մեկը՝ Մարկիան Մելենևսկին, ժամանել էր Ստամբուլ, որտեղ երիտթուրքերին խոստացել էր կազմակերպել Կուբանի կազակների (սրանք զապորոժյան կազակների հետնորդներն են) և Օդեսայում տեղակայված Սևծովյան նավատորմի նավաստիների հակառուսական ապստամբությունը, ինչպես նաև կազմակերպել թուրք-ուկրաինական դեսանտի իջեցումը Կուբանում և Օդեսայի շրջանում: Երիտթուրքերը դա մերժեցին, սակայն թույլ տվեցին Մելենևսկուն և Գալիցկու ուկրաինոֆիլներին՝ ունիաթներ Լոնգին Ցեգելին և Ստեփան Բարանին թուրքական թերթերում զառանցանքներ տեղադրել հնագույն ժամանակներում «ուկրաինական պետության» գոյության մասին, որը Կարպատից մինչև Վոլգա էր ձգվում և սահմանակից էր Հյուսիսային Կովկասին: ՌԱՄ-ի գործիչների կողմից տեղադրված քարոզչանյութերում ասվում էր, որ Ուկրաինան պատրաստ է Ռուսաստանի դեմ պայքարել Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի հետ դաշինքում: Ավելին՝ 1914-ի հոկտեմբերի 24-ին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթ փաշան հռչակագիր էր հրապարակել, որով ուկրաինացի ազգայնականներին խոստացել էր օգնել անկախ Ուկրաինա ստեղծելու Ռուսաստանի ջախջախումից հետո և Ուկրաինայի ազատագրման միությունը ճանաչել ուկրաինացիների ներկայացուցչական մարմին: Ուկրաինոֆիլներին աջակցելու պատճառների մասին գրել է երիտթուրքական Jeune Turc թերթը: «Ուկրաինական պետությունը, որին ձգտում են ուկրաինացիները, կտարանջատեր Ռուսաստանը Սև ծովի ափերից: Ոչ ռուսական սլավոնական պետության ստեղծումը Թուրքիային կձերբազատեր ռուսական միապետության ինտրիգների և քմահաճույքների քաղաքականությունից, որը ձգտում է տիրել Կոստանդնուպոլսին և ծովային նեղուցներին»:

Բացի այդ, երիտթուրքերը կարծում էին, որ անկախ Ուկրաինան կխոչընդոտի Ռուսաստանին ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնելու Միջերկրական ծովում և Բալկաններում: Հիշեցնենք, որ Ղրիմը երիտթուրքերը տեսել են Մեծ Թուրանի, այլ ոչ թե Ուկրաինայի կազմում:

Ինչպե՞ս է դա կապված ներկա իրադարձությունների հետ: Նախ՝ թուրքերը չեն հրաժարվել Ուկրաինան որպես Ռուսաստանին զսպող խոչընդոտ օգտագործելուց: Երկրորդ՝ վերոհիշյալ Լոնգին Ցեգելսկին Օլեգի և Անդրեյ Տյագնիբոկովների մայրական նախապապն է: Օլեգ Տյագնիբոկը «Սվոբոդա» համաուկրաինական ասոցիացիայի ղեկավարն է, հայտնի ռուսաֆոբ և 2013-2014 թթ. Եվրամայդանի ակտիվ մասնակից:

«Սվոբոդան» ունի զինված գրոհայիններ, որոնք մասնակցել են Եվրամայդանին և Դոնբասի պատերազմին: Այնպես որ, կարելի է ասել՝ Թուրքիայի հետ կապված ժամանակակից ուկրաինական ղեկավարության հույսերը բոլորովին անհիմն չեն:

Հետաքրքիր է ևս մեկ կետ. դեռևս 20-րդ դարի սկզբին ադրբեջանցի ուսանողները Կիևում ազգային կենտրոն էին կազմակերպել: Ադրբեջանական աղբյուրները ոչ առանց հպարտության հայտնում են, որ 1915-1918 թթ. ադրբեջանցի ուսանողներն ազգային մշակույթի քարոզչությամբ են զբաղվել Կիևում, Խարկովում և Լվովում: Եթե առաջին երկու քաղաքների դեպքում ոչ մի հարց չի առաջանում, ապա Լվովի դեպքում արժե մտածել, թե ինչու ադրբեջանցի մտավորականները կարող էին իրենց գործունեությունը ծավալել Ավստրո-Հունգարիայի կազմում գտնվող հակառուսական Գալիցիայում:

Ուշադրություն դարձնենք այսպիսի մի մանրամասնության վրա ևս: 2014-ից հետո ադրբեջանցի փորձագետներից երբեմն կարելի էր լսել այնպիսի կարծիք, թե իբր ռուսներին ու ուկրաինացիներին իրար դեմ են տրամադրել «կրեմլյան քարոզիչները»: Նման դեպքերում տպավորություն է ստեղծվում, թե ադրբեջանցի փորձագետներն անգրագետ են սլավոնագիտության մեջ, կամ նրանք կեղծավոր ստախոսներ են, որոնք շատ լավ գիտեն, որ ուկրաինականության մեջ տոն տվող գալիցյան ունիաթների նախնիները դարեր շարունակ ապրել են լեհական լծի տակ և մեծապես կորցրել են ռուսական արյունն ու ռուսական ոգին: Ի դեպ, դատելով նրանից, որ դեռևս երիտթուրքերն են թույլ տվել Ուկրաինայի ազատագրության միության ակտիվիստներին քարոզչություն իրականացնել օսմանական գերության մեջ հայտնված ռուս զինվորականների շրջանում, Անկարայում և Բաքվում կան մարդիկ, ովքեր հասկանում են, որ 1596 թվականի Բրեստի ունիայի ջատագովները ապրիորի չեն կարող ռուսատյաց չլինել:

Այլևս փաստեր չենք կուտակի: Մատնանշենք ամենակարևոր իրողությունները: 1918 թ. փետրվարի 12-ին Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետությունը և Օսմանյան կայսրությունը ստորագրեցին բարեկամության և համագործակցության պայմանագիր, որից հետո հաստատել են դիվանագիտական հարաբերություններ: Երիտթուրքերը նույնպես ճանաչել են Ուկրաինական տերությունը, որին դե ֆակտո ճանաչել է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը: Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության դիրեկտորիան, որը ասոցացվում է Ռուսաստյաց Սիմոն Պետլյուրայի հետ, 1919 թ. փետրվարի 8-ին դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Ադրբեջանի Հանրապետության հետ և պահպանել է դաշինքը Թուրքիայի հետ: Այսինքն՝ մենք տեսնում ենք, որ Թուրքիայում և Ադրբեջանում, փաստորեն, հիշում են իրենց երկրների արտաքին քաղաքական անցյալը և կարողանում են սպասել այն պահին, երբ կարող են կրկին զինվել ձևականորեն մոռացված հայեցակարգերով:

Այս առումով արժե ուշադրություն դարձնել ևս մեկ փաստի վրա: 1922-ի հունվարի 2-ին Թուրքիան և Ուկրաինական ԽՍՀ-ն ստորագրեցին բարեկամության և համագործակցության մասին պայմանագիր: Իսկ հաջորդ օրը Մուստաֆա Քեմալ փաշան (Աթաթուրքը)

ելույթ ունեցավ, որի ժամանակ հայտարարեց. «Կարելի է ասել, որ Ուկրաինան և Թուրքիան երկու հարևան երկրներ են: Հայացքներս ուղղենք դեպի հյուսիս՝ ծովն այնտեղ է, սակայն, եթե մի պահ պատկերացնենք, որ այն չկա, ապա կտեսնենք, որ Թուրքիան և Ուկրաինան սահմանակից երկրներ են: Նույնքան մոտ է այդ երկու երկրների ժողովուրդների բարեկամությունը: Ուկրաինացի և թուրք ժողովուրդների բարեկամությունը ամրապնդված է թուրք-ուկրաինական պայմանագրով: Այդ բարեկամության պահպանումն ու զարգացումը դրական արդյունքներ կբերի ոչ միայն մեր երկու երկրներին, այլև բոլոր ճնշված ժողովուրդներին»:

Ինչ-որ մեկը կասի՝ արևելյան մարդու սովորական պաթոսով խոսք: Սակայն ես այլ բան կնշեմ. թուրքերը 1920-ականներին սիրում էին Խորհրդային Միությունը նույնիսկ այն պատճառով, որ բոլշևիկներն ագրեսիվ կերպով ջարդում էին այն ամենը, ինչը կապված էր նախահեղափոխական Ռուսաստանի հետ, այդ թվում՝ ազգային պատմությունը, որի մի մասը ռուս-թուրքական բազմաթիվ պատերազմներ էին: Քեմալական Թուրքիայում՝ ընդհակառակը, ամեն կերպ գովերգում էին թյուրքական անցյալը: Ուկրաինայի դեպքում կարևոր է նշել այն փաստը, որ խորհրդային Ուկրաինայի և Քեմալական Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման գործում ներդրում է ունեցել հայտնի արևելագետ և ուկրաինացի ազգայնական Ագաֆանգել Կրիմսկին, որին պատկանում է ասույթը. «Եթե գործնականում տեսնում ենք, որ մարդիկ դժվարանում են ուկրաինական լեզվի գործածման հարցում, ապա մեղքը ոչ թե լեզվինն է, այլ՝ մարդկանցը»:

Ինչպես գիտենք, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, Աթաթուրքի օրոք Թուրքիայում էթնիկ ֆեդերալիզմի զարգացման փորձեր չեն անցկացվել, ավելի շուտ՝ հակառակը: Իսկ մեր դեպքում պետք է հիշել, որ Դոնեցկ-Կրիվորոժսկի շրջանի, Խարկովշչինայի և Օդեսայի բոլշևիկները վիճելի էին համարում իրենց տարածաշրջանների միացումն Ուկրաինային և կողմ էին հանրաքվեների անցկացմանը, որտեղ բնակիչները կարող էին քվեարկել Ռուսաստանի կամ Ուկրաինայի կազմում ընդգրկվելու օգտին: Թուրքիայում, ամենայն հավանականությամբ, այդ մասին էլ գիտեին:

Ռուսաստանում սովորաբար կարծում են, թե մինչև 1991 թվականը Թուրքիան սպասում էր Ռուսաստանից թյուրքական հանրապետությունների անջատմանը: Մինչդեռ բերված փաստերը վկայում են, որ Անկարայում ոչ պակաս ուրախությամբ են ընդունել Ուկրաինայի անջատումը Ռուսաստանից: Թուրքական ունիտար հանրապետության քաղաքական գործիչները համբերատար սպասում էին, թե երբ Խորհրդային Միությունը կփլուզվի, Ռուսաստանը կկորցնի Ուկրաինան՝ Սև ծով դուրս գալու հնարավորության հետ միասին:

Ամենայն հավանականությամբ, նման մտքեր են ունեցել նաև ադրբեջանցի ազգայնամոլները: Օրինակ, հայտնի մուսավաթիստ, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հիմնադիրներից Մամեդ-Էմին Ռասուլզադեն իր «Պատասխան Կերենսկուն» հոդվածում 1930-ին գրել է. «Կերենսկիները չեն կարողանում հասկանալ, որ Կովկասը՝ վրացիներին, լեռնեցիներին և ադրբեջանցիներին, Ուկրաինան՝ ուկրաինացիներին, իսկ Թուրքեստանը՝ թուրքեստանցիներին անցնելը, չի կարող համարվել Ռուսաստանի բաժանում...»: Եթե հիշենք, որ այդ նույն հոդվածում Ռասուլզադեն կարծում էր, որ Ղրիմը կլինի անկախ պետություն («ավելի լավ է Ղրիմը թաթարական, քան մոսկալյան». ինչը պլանաչափորեն պատրաստում էր Ղրիմի համար Ուկրաինան), ապա շատ բան հասկանալի կդառնա:

Փաստորեն, Թուրքիայում և Ադրբեջանում շատ ազդեցիկ մարդիկ 1914-ից երազում էին ժամանակակից Հարավ-Արևելյան Ուկրաինայի ապառուսականացման մասին: Պատմական Նովոռոսիայում ամեն ռուսականը ոչնչացրած հսկայական Ուկրաինան կարող էր դառնալ անկախ Ղրիմի դաշնակիցը, որը կկողմնորոշվեր դեպի Թուրքիա և Ադրբեջան: Իսկ Ռուսաստանը, կորցնելով Սևծովյան նավատորմը և դեպի Սև ծով ելքը, կփոքրանար, ինչպես շագրենի կաշին՝ կորցնելով Կովկասն ու այլ տարածքներ՝ ի ուրախություն Իսմայիլ Էնվեր փաշայի և Ռասուլզադեի գաղափարական ժառանգորդների:

Ամբողջ հարցը թուրք ազգայնականների քաղաքական ձգտումներն են, ինչի մասին խոսում են ոչ միայն Անկարայի գործողությունները, որի զորքերը գտնվում են Կիպրոսում, այլև՝ Բաքուն: Ինձ հայտնի չեն դեպքեր, երբ Բաքվի թուրքական դեսպանատան առջև հանրահավաքներ կանցկացվեն «Թուրք օկուպանտներ, հեռացեք Կիպրոսից» կարգախոսերով: Փոխարենը պաշտոնական Բաքուն դեֆակտո ճանաչում է Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը և համագործակցում նրա հետ, ինչն ըմբռնում և աջակցություն է գտնում ադրբեջանական հասարակության մեջ: Միակ բանը, որը պահում է Ադրբեջանին, պաշտոնապես ճանաչել Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման անավարտությունն է:

Իսկ ռուսաստանյան հասարակությանն անհրաժեշտ է հասկանալ երկու բան: Նախ, Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունների, ինչպես նաև հարավ-արևելքի ևս 6 շրջանների անջատումը Ուկրաինայից կամրապնդի Ռուսաստանի դիրքերը Սև ծովում: Երկրորդ՝ չպետք է չափից ավելին պահանջել Թուրքիայից և Ադրբեջանից: Նրանք չեն ճանաչում Ռուսական Ղրիմն ու Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունները, բայց, այնուամենայնիվ, ի տարբերություն ԵՄ-ի, պատժամիջոցներ չեն սահմանում: Այնպես որ, ինչն է խանգարում Ռուսաստանին Ուկրաինայի ապառազմականացումն ու ապաազգայնականացումն իրականացնել և շարունակել առևտուր անել Թուրքիայի և Ադրբեջանի հետ՝ զգուշություն պահպանելով: ■

Ռուսերենից թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

Հայ ազգային գաղափարախոսությունը

Անի Մելքոնյան
Պատմաբան

Ապրիլը հայության համար Ադանայի կոտորածների և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակության ամիսն է, և յուրաքանչյուր տարի՝ այս օրերին, մեր ազգը պարտավոր է վերլուծել սեփական անցյալը և փորձել դասեր քաղել սեփական պատմությունից, ինչը մեզ մոտ համառորեն չի ստացվում, կամ մենք չենք ուզում դասեր քաղել մեր իսկ պատմական սխալներից: Այս համապատկերում կարևոր ենք համարում խոսել կամա թե ակամա ցեղասպանությանը նպաստած հայ ազգային գաղափարախոսության բացակայության, ավելի ճիշտ՝ տարիների ընթացքում դրա անկման մասին:

Նախ՝ փոքր-ինչ այն մասին, թե ինչ է ազգային գաղափարախոսությունը…

«Ազգային գաղափարախոսությունը բաղկացած է ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, անկախ պետականության, ազգային մշակույթի և կրոնի հիմնադրույթներից»[1]: Յուրաքանչյուր ազգի ազգային գաղափարախոսության վրա իր անջնջելի կնիքն է թողնում նրա պատմական ճակատագիրը. այն ազգերը, որոնք պատմության հոլովույթում հայրենազրկվել են, իրենց ազգային գաղափարախոսության հիմքում ամրագրում են հայրենիքի ազատագրության գաղափարը, ինչպես, օրինակ, հայերը (Հայ դատ) և հրեաները (Սիոնիզմ): Հակառակ սրան՝ կան ժողովուրդներ, որոնց ազգային գաղափարախոսության հիմքում զավթողական քաղաքականությունն է, ինչպես, օրինակ, թուրքերի դեպքում պանթյուրքիզմը, որի նպատակն է ձուլել կամ ֆիզիկապես բնաջնջել (ցեղասպանության ենթարկել) նվաճված ժողովուրդներին, յուրացնել նրանց հայրենիքը՝ ստեղծելով «թուրքական հայրենիք», և միավորել թյուրքալեզու ժողովուրդներին ու ստեղծել Մեծ Թուրան: Կարճ ասած՝ մեր թշնամու և «հարևանի» ազգային գաղափարախոսությունը այլ ազգերին ցեղասպանության ենթարկելն է:

Հայոց ցեղասպանությունից և հայ ժողովրդի հայրենազրկումից հետո հայոց ազգային գաղափարախոսության կարևոր հիմնադրույթներից դարձավ ազգապահպանության հիմնախնդիրը: Հայոց ազգային գաղափարախոսությունը ձևավորվել է հայ ժողովրդի կազմավորմանն ու զարգացմանը զուգընթաց: Այն արտացոլված է ինչպես նախաքրիստոնեական բանահյուսական երկերում, այնպես էլ հայ պատմիչների աշխատություններում: Նախաքրիստոնեական շրջանում մեր ժողովուրդը ստեղծել է դյուցազնավեպեր, ասքեր՝ ձոնված իր աստվածներին, նահապետներին, արքաներին ու հերոսներին: Դրանց մեծ մասը մեզ է հասել պատմահայր Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության միջոցով: Հայ ազգային բանահյուսության գոհարների մեջ՝ «Հայկ և Բել», «Արամ և Բարշամ», «Արամ և Նյուքար Մաղես», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ»



և այլն, կարմիր թելի պես անցնում են ազատության, հայրենիքի պաշտպանության, հայրենիքի շենացման, ժողովրդի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության, սրբազան հայրենիքի ու հայոց աստվածների միասնության գաղափարները:

Քրիստոնեության ընդունումից հետո ազգային գաղափարախոսության կարևոր տարր դարձավ քրիստոնեությունը, որը հայացվեց՝ միաձուլվելով հայ ժողովրդի ազգային բնավորության և աշխարհընկալման հետ:

Հայ ազգային գաղափարախոսության ամբողջական համակարգի ձևավորման գործում առանցքային դեր են կատարել հայ պատմիչները, մասնավորապես՝ պատմահայր Մովսես Խորենացին: Լինելով Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կրտսեր աշակերտներից՝ Մովսես Խորենացին ոչ միայն քրիստոնեական հավատքի կրողն էր, այլև ընդգծված հայրենասեր, ազգասեր: Նա նաև ՄԵԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ինչո՞ւ չէ, կայսերական Հայաստանի գաղափարի կրողն էր: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ Խորենացին հռոմեացի զորավար Լուկուլլոսի մասին կայսերապետական քամահրանքով է խոսում՝ հիշատակելով նրան որպես Վայկուն անունով ինչ-որ ավազակի, որը վրդովում էր Հայոց աշխարհը: Մովսես Խորենացին ոչ միայն շարադրել է հայոց ամբողջական պատմությունը, այլ նաև դրա շնորհիվ պետականությունը կորցրած հայության շրջանում հայրենասիրություն է սերմանել և նպաստել ազգային դիմագծի ամբողջական ձևավորմանն ու պատմական հիշողության պահպանմանը: Ազգային գաղափարախոսության (ամբողջական հայրենիքի գաղափարի) տեսանկյունից չափազանց կարևոր է նաև պատմահոր կողմից մեր հայրենիքի աշխարհագրական սահմանների մատնանշումը, ինչի շնորհիվ ընթերցողը պատմահոր տողերում «ականատես» է դառնում Հայքի բնակավայրերի անվանակոչությանը Հայկ Նահապետի ժառանգների անուններով՝ Այրարատ, Սյունիք (Սիսական), Գեղարքունիք, Արագածոտն, Շիրակ, Արցախ… Դեռևս հազարամյակների խորքից պատմահայրը գալիք սերունդներին թողնում է դրանց հայկականության վերաբերյալ վկայություններ…

Դարերի ընթացքում, հատկապես Բագրատունյաց թագավորության անկման, հայոց պետականության վերացման, քոչվորական տիրապետության հետևանքով, երբ ոչնչացվեց պետականության գաղափարը կրող շերտը՝ ազնվականությունը, անկում ապրեց և մոռացության տրվեց նաև հայ ազգային գաղափարախոսությունը:

1804-1813 և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների հետևանքով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, և աստիճանաբար սկսեց բարձրանալ հայության կրթական մակարդակը, միաժամանակ ձևավորվում էր հայկական ընտրախավը՝ էլիտան, և նոր շրջանում ասպարեզ եկան ազգային դիմագիծ ունեցող մի շարք գործիչներ՝ Խաչատուր Աբովյանը, Պատկանյանը, Մուրացանը, Ծերենցը, Միքայել Նալբանդյանը, Ռափայել Պատկանյանը, Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ) Գրիգոր Արծրունին (իր «Մշակ» պարբերականով) և այլք, որոնք նպաստեցին շուրջ 800 տարի սեփական ազգային դեմքը կորցրած հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության հիմքերի ձևավորմանը: Այս գործում անգնահատելի դեր խաղաց հատկապես Ռաֆֆին, որի բոցաշունչ հայրենասիրական գործերը ոչ միայն արթնացրին հայության պատմական հիշողությունը, այլև մղեցին նրան մեկ գերագույն նպատակի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրմանը թուրքական բռնապետական լծից: Արդեն այս շրջանից՝ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած «հայերի ազգային գաղափարախոսությունը պատմականորեն ստացել է Հայկական հարց, Հայ դատ և Պահանջատիրություն անվանումները, որը նշանակում է կորցրած Հայրենիքի ազատագրում»[2]:

Ազգային գաղափարախոսության ձևավորման գործում նոր և նորագույն շրջանում կարևոր դեր խաղացին հայ ազգային կուսակցությունները՝ «Արմենականները», «Հնչակյանները» և հատկապես «Հայ Յեղափոխական Դաշնակցությունը»: Այս երեք կուսակցություններն էլ ասպարեզ իջան մեկ կարևորագույն գերխնդրով՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման նպատակով: Ժամանակի ընթացքում ազգային գաղափարախոսության և ազատագրական պայքարի ջահակիրը դարձավ ՀՅԴ-ն, որը «….Հրապարակ իջաւ ազատագրական պայքարի Մանիֆեստով մը, որ կոչ կ'ընէր բոլոր հայերուն անխտիր՝ զինուորագրուելու թրքահայութեան քաղաքական և տնտեսական ազատագրումին ի խնդիր»[3]: Դաշնակցությունը, լինելով ազգային և սոցիալիստական կուսակցություն, միաժամանակ կարևորում էր հայության բոլոր շերտերի միավորումը (առանց դասակարգային խտրականության)՝ մեկ ընդհանուր նպատակի՝ թուրքական բռնակալության դեմ զինյալ (ինչպես նաև քաղաքական ու դիվանագիտական) պայքարով Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Այսպիսով՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո միջազգային դիվանագիտության ասպարեզ մտած Հայկական հարցը գոնե հայկական շրջանակներում



Մովսես Խորենացի

«բարենորոգումների» ու «ինքնավարության» գաղափարից աստիճանաբար վերածվում է Հայաստանի ազատագրման գաղափարի: 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ հայկական մի փոքրիկ հողակտորի վրա ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը, որը պետք է դառնար այն կորիզը, որի շուրջ հյուսվելու էին հայության նոր նպատակներն ու երազանքները, ասել է թե՝ նորագույն շրջանի հայ ազգային գաղափարախոսությունը: Եթե ավելի հստակ, ապա «….Նորահոչակ Հայաստանի Հանրապետությունը դարձավ այն միջուկը, որի շուրջ հետագայում պետք է պտտվեր Միացյալ Հայաստանի գաղափարը….»[4]: Իսկ Մայիսյան հերոսամարտերը և հատկապես մայիսի 28-ը նշանավորեցին դարերով պետականություն չունեցող հայության քաղաքական անկախության սկիզբը: 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ու կառավարության համատեղ նիստում վարչապետ Ալ. Խատիսյանն ընթերցեց «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» հռչակագիրը: Հայաստանի հողի վրա՝ անկախ հանրապետության մայրաքաղաք Երևանում ընդունված և ընթերցված այս հռչակագիրը, սակայն, քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Հայաստանի Հանրապետության ռազմակալման (օկուպացիայի) պատճառով տեղափոխվեց Սփյուռք և դարձավ սփյուռքահայության ճնշող մեծամասնության ազգային գաղափարախոսությունը:

Հայաստանի Հանրապետության անկումից հետո հայրենազրկված սփյուռքահայության քաղաքական ղեկավարությունը (հիմնականում ՀՅԴ-ն) հայկական ազգային նորագույն գաղափարախոսության հիմքում դրեց **ամբողջական հայրենիքի, անկախ հայկական պետականության, ազգային մշակույթի հիմնադրույթները**:

1988 թ. Արցախյան շարժման սկզբնավորմամբ սկսվեց Հայաստանի քաղաքական վերածնունդը: Արցախի ազատագրմամբ կարծես սկիզբ էր դրվում հայոց ազգային գաղափարախոսության կարևոր նպատակներից մեկի իրագործմանը՝ **Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծմանը:** Դրան զուգահեռ՝ արդեն նաև պետական որոշակի աջակցությամբ ՀՅԴ-ի՝ տասնամյակներ շարունակ մղած Հայ դատի պայքարն ավելի լայն թափ ստացավ և

աստիճանաբար **ճանաչումից ու դատապարտումից** անցում կատարեց հատուցման համար պայքարի, այսինքն՝ **պահանջատիրության փուլ**:

Անկախ Հայաստանում փորձ արվեց ազգային գաղափարախոսության հիմքում դնելու Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության գաղափարը, որը, ցավոք սրտի, Հայաստանի բնակչության շրջանում լայն տարածում չգտավ: Միաժամանակ չմշակվեց և պետական քաղաքականության հիմքում չդրվեց հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը: Ցավոք սրտի, ոչ Դաշնակցության գաղափարները, ոչ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, ոչ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության գաղափարը, հիմք չդարձան ազգային գաղափարախոսության զարգացման համար, ինչն էլ ի վերջո նպաստեց ապազգային տարրերի՝ իշխանության գալուն, դավադիր պատերազմով Արցախի դավաճանական հանձնմանը, հայ-թուրքական «բարեկամության» մասին բոլշևիկյան քարոզչության տարածմանը և Հայաստանի Հանրապետության՝ անկախության կորստի վտանգի առաջ կանգնելուն:

Ազգային գաղափարախոսությունը ազգի գոյության գլխավոր հենասյունն է, որը պարունակում է նրա ազգային խնդիրները, դրանք լուծելու համար համազգային պայքարի գաղափարը: Վերցրեք ժողովրդից նրա ազգային գաղափարախոսությունը, մոռացնել տվեք նրան իր ազգային խնդիրները, և այդ ժողովուրդը կդադարի գոյություն ունենալուց: Ռուսաստանի հայտնի քաղաքական գործիչ Պյոտր Ստոլիպինը 1908 թ. Ռուսաստանի Պետական դումայում արտասանած ճառի ժամանակ պատահական չի ասել՝ «….ժողովուրդները երբեմն մոռանում են իրենց ազգային խնդիրները, բայց այդպիսի ժողովուրդները ոչնչանում են, նրանք դառնում են հող, պարարտանյութ, որի վրա հաստատվում են ուրիշ՝ ավելի ուժեղ ժողովուրդներ»[5]: Իսկ ժողովրդին ուժեղ դարձնում է ազգային գաղափարախոսությունը, ասել է թե՝ որպես ազգ նրա գոյություն ունենալու իմաստն ու նպատակը: Ինքներս մեզ հարցնենք, թե որն է մե՛ր՝ հայերիս գոյության իմաստը և ազգային նպատակը՝ «պարարտանյո՞ւթ» դառնալ մեր հայրենիքի հաշվին իրենց հայրենիք ստեղծող, մեր տեսակը ձուլելով իրենց համար էթնոս ձևավորող և հայերի բնաջնջումը պետական քաղաքականություն դարձրած քոչվոր թուրքերի՝ մեր թշնամու համար և ունենալ ևս մեկ «ապրիլի 24», թե՞ վերականգնել մեր տեղը հզոր ազգերի շարքում և վերադարձնել մեր նախնիների հազարամյակների վաստակը:

Ի՞նչ անել կանխելու համար տգիտության, եսակենտրոնության, աշխարհաքաղաքացիության ու ապազգայնության հետևանքով առաջացած այս աղետը: Պատասխանը հստակ է՝ մշակել ազգային գաղափարախոսություն այն սկզբունքով, որ «Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետևյալ ազգային գործոնները. ԼԵԶՈՒ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԿԱՆ ԿԵՐՏՎԱԾՔ, ՆԿԱՐԱԳԻՐ, ՋԳԱՑՈՒՄ՝ ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՈԳԻ, ԸՆՏԱՆԻՔ, ԿՐՈՆ, ՃԱՇԱԿ, ԿԵՆՑԱՂ, ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ու ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ և այլն»[6], մշակված ազգային գաղափարախոսությանը հաղորդակից դարձնել հայության լայն զանգվածներին՝ ցույց տալով նրանց հայ ազգի գոյության իմաստն ու ազգային նպատակները, որոնք են՝

- հայոց լեզվի, հայոց պատմության, հայ ընտանիքի, Հայ առաքելական եկեղեցու և հայրենիքի նկատմամբ սերը, պատասխանատվության ու պարտքի զգացումը,
- ազգային ճաշակի ձևավորումը,
- ազգային միասնությունն ու համերաշխությունը՝ առանց դասակարգային ու տեղային (ըստ բնակավայրի կամ ծննդավայրի) տարբերակման,
- պահանջատիրությունը (Հայոց ցեղասպանության համար ցեղասպան Թուրքիայի հատուցումը՝ հայրենազրկված հայ ժողովրդին վերադարձնելով նրա հայրենիքը),
- կորուսյալ հայրենիքի ազատագրումը (զինված կամ այլ միջոցներով),
- Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը հայ ժողովրդի պատմական հայրենիքում:

Ազգային այս նպատակների իրագործման գլխավոր խթանիչ ուժը ազգային գաղափարախոսությունն է, քանի որ, ինչպես ցույց է տվել պատմությունը, «Բոլոր այն ժողովուրդները, որոնք ունեցել են ազգային գաղափարախոսություն և ղեկավարվել են այդ գաղափարախոսության հիմնադրույթներով, բռնել են պատմության քնությունը»[7], մինչդեռ այն ժողովուրդները, որոնք չեն ունեցել կամ չեն առաջնորդվել ազգային գաղափարախոսությամբ, ի վերջո հեռացել են պատմության թատերաբեմից, որովհետև կորցրել են որպես առանձին էթնոս իրենց գոյության նպատակն ու իմաստը…

Ո՞րն է մե՛ր՝ հայերիս ընտրությունը…

Հղումներ

1. Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999, էջ 14:
2. Նույն տեղում, էջ 11-12:
3. Տասնապետեան Հր., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 21:
4. Հակոբյան Ա., Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020, էջ 41:
5. Столыпин П. А., Нам нужна великая Россия, М., 1991, с. 149.
6. Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 15:
7. Նույն տեղում, էջ 5:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999:
2. Հակոբյան Ա., Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020:
3. Տասնապետեան Հր., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988:
4. Столыпин П. А., Нам нужна великая Россия, М, 1991.

Կրնա՞նք մենք զմեզ կառավարել

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Հարցումը հռետորական չէ: Անոր պատասխանէն կախում ունի՝ պիտի կարենա՞նք շարունակել գոյատևել իբրև ազգ, թէ՞ ոչ: Անշուշտ, վերնագրին «մենք»-ը համայն հայութիւնն է, Հայաշխարհի ամբողջ բնակչութիւնը:

Գիտենք, սակայն, որ համայն հայութիւնը, համայն հայութեան կեանքը վարող, կառավարող «ամենայն հայոց կառավարութիւն» գոյութիւն չունի, և նախատեսելի չէ, որ գոյութիւն ունենայ մօտիկ ապագային, գուցէ նաև երբեք կարելի չըլլայ, որ ան գոյութիւն առնէ: Ասիկա կը նշանակէ՞, սակայն, թէ մենք զմեզ չենք կրնար կառավարել:

Գիտենք նաև, որ Հայաշխարհը իր բազմամաս կարգավիճակով չի կրնար կառավարման մէկ համակարգի տակ գտնուիլ: Կրկնութեան ի գիս՝ վերստին թուենք այդ մասերը՝

- Հայաստանի Հանրապետութիւնը՝ իր տարածաշրջանային շրջապատումով,
- Արցախի Հանրապետութիւնը՝ իր կորուսեալ տարածքներով ու չհաստատուած կարգավիճակով,
- Ջաւախքը՝ որպէս Վրաստանի Հանրապետութեան մասնիկ, իր ինքնութեան վտանգուած գոյութեամբ,
- Արևմտեան Հայաստանի մէջ ապրող մնացորդացը՝ նոյնպէս վտանգուած իրավիճակով,
- Տարաշխարհը կամ արտերկիրը՝ բազմաբնոյթ, բազմադէմ, բազմա...

Այս բոլորը կառավարման մէկ համակարգի տակ չեն գտնուիր, ոչ ալ, ըստ իս, կրնան գտնուիլ: Մտածել, թէ անոնք կրնան ղեկավարուիլ մէկ համայնական իշխանութեամբ, ոչ միայն երանաստան է (utopia), այլև ցնորք: Այդ չի նշանակեր, սակայն, որ համընդհանուր ու փոխադարձ հասկացողութեամբ հնարաւոր չէ ստեղծել կենսաձև մը (modus vivendi), որ լաւագոյնս ծառայէ համայն հայութեան՝ Հայաշխարհի հասարակաց շահերուն: Գիտենք նոյնպէս, որ ասկէ առաջ շատեր ու բազմիցս արծարծած են համահայկական խորհրդարանի մը յառաջացման հարցը՝ միշտ ալ ի վերջոյ չհասնելով որևէ շինիչ կամ գործադրելի եզրակացութեան: Այստեղ պիտի խուսափիմ նման առաջարկներ ներկայացնելէ ու պիտի փորձեմ ներկայացնել գործելակերպ մը՝ այդ կենսաձևն առաջնորդող: Անկէ առաջ, սակայն, պէտք է ընդունինք մօտեցման եղանակ մը, որ դիւրացնէ մեր յառաջընթացը: Այդ՝ համեստ նպատակակէտերով սկսիլն է: Ապա պէտք է ընդունինք նաև, որ հայութեան որևէ մասնիկ իր ներդրումն ունենալու հնարաւորութենէն պիտի չզրկուի: Այս նուազագոյնն է, որ իբրև ժողովրդավարական սկզբունք պիտի որդեգրենք: Երրորդ՝ պիտի ընդունինք մանաւանդ, որ պէտք է թօթափենք բոլոր նախապաշարումները, բոլոր կաղապարումները, որոնք կրնան արգելք հանդիսանալ նոր գաղափարներու: Վերջապէս չորրորդ՝ պիտի համաձայնինք, որ որևէ հարցի լուծման ի խնդիր ըլլալիք առաջարկ մը պիտի որդեգրուի ոչ թէ

որո՛ւն կողմէ եկած ըլլալուն համար, այլ իր սեփական արժէքին և գործադրութեան կարելիութեան համեմատ:

Այս տրամադրութիւններով ճամբայ ելլելով՝ կ'առաջարկեմ հետևեալը.

- Ձևաւորել նախնական յանձնաժողով մը՝ բաղկացած ոչ մեծ թիւով անդամներէ, որոնք կու գան Հայաշխարհի վերոնշեալ տարբեր մասերէն՝ ընդգրկելով պետական, կուսակցական ու կրօնական ներկայացուցիչներ, որոնք ունին նաև բանիմաց մտաւորականի վարկ ու կազմակերպչական փորձառութիւն: Այս քայլին նախաձեռնելու առաջարկը կրնայ գալ անոնցմէ ոևէ մէկուն կողմէ:
- Անոնք կը պատրաստեն յայտարարութիւն մը՝ բացատրելու նախաձեռնութեան նպատակը, ամենայն տարածումը կու տան անոր՝ խնդրելով, որ փափագողները առաջարկներ ներկայացնեն այդ գործը լաւագոյն ձևով կազմակերպելու առնչութեամբ: Այդ առաջարկներն ալ նկատի առնելով՝ նախնական յանձնաժողովը կը պատրաստէ կանոնագրութիւն մը, ու անոր համաձայն կը ձևաւորուի մնայուն յանձնաժողով մը:
- Մնայուն յանձնաժողովը կ'որոշէ կարևորագոյն խնդիրները, որոնք նման համահայկական քննարկման պիտի դրուին, կ'որոշէ նաև անոնց առաջնահերթութեան կարգը, ապա կ'անցնի քննարկման փուլին՝ հրաւիրելով այդ նպատակով ենթայանձնաժողով մը՝ բաղկացած տուեալ քննարկելի հարցին լաւատեղեակ անձերէ: Հերթով կրնան կազմուիլ, օրինակ, կրթական, մշակութային, քարոզչական, տնտեսական ու տարբեր-տարբեր ենթայանձնաժողովներ, որոնք իրենց ներկայացուած խնդիրներուն համար կը պատրաստեն առաջարկներ՝ թելադրելով, թէ ո՛ր կազմակերպութիւնները կամ անհատները պիտի գործադրեն զանոնք, ինչպէ՛ս պիտի գոյանան այդ նպատակով անհրաժեշտ նիւթական կոռումները և այլն: Իսկ գործադրութիւնը կը ստանձնեն համաձայնաբար առկայ մարմիններ, ոչ թէ նորեր:

Առաջին փորձին յաջողութիւնը կամ ձախողութիւնը նոյնպէս կը քննարկուի, և այսպէս, քայլ առ քայլ կը զարգանայ հարցերուն համահայկական առումով մօտենալու գործելակերպը:

Հնարաւո՞ր է, թէ՞ հնարաւոր չէ: Եթէ հնարաւոր ըլլայ, կը գիտնանք, թէ բաւական հասուն ենք մենք մեզ կառավարելու տեսակէտէն: Եթէ հնարաւոր չըլլայ, Աստուած օգնէ մեզ...

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ (հատվածներ)

- Դատապարտելով 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայության ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք:

- Համարելով նաև 1919-1921 թվականներին Օսմանյան ռազմական արտակարգ ատյանների կողմից «Իրավական և մարդկային օրենքների դեմ» այդ ծանր ոճրի ուղղությամբ կայացված դատավճիռները եղելության իրավական գնահատական:

- Արժևորելով 1915 թվականին միջազգային հանրության կողմից Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դեմ իրականացված ծանրագույն հանցագործությունը պատմության մեջ առաջին անգամ որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ իրականացված հանցագործություն» որակումը և օսմանյան իշխանություններին պատասխանատվության կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպես նաև 1920 թվականի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում:

- Վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար:

- Դատապարտում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը և միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպես Հայոց ցեղասպանության, Մեծ Եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետևանք:

- Կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչել և դատապարտել Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը և մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի զոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվել սեփական պատմության ու հիշողության հետ՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման և հարաբերականացման քաղաքականությունից:

- Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասեր, գիտակից և ուսյալ կեցվածքով պաշտպան կանգնել հայրենի սրբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայել հանուն՝

- առավել հզոր Հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետության,

- անկախ Արցախի առաջընթացի ու զորացման,

- աշխարհասփյուռ հայության գործուն համախմբման,

- համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման:

29 հունվարի 2015 թ., ք. Երևան

ԴՐՕՇԱԿ

«Վերածնունդ»

Գառնիկ Սմբատյան